Նոնա Պողոսյան
Կարինե Մարգարյան

ԵՍ ԵՎ ԾՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

Մեթոդական ուղեցույց

2

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Նոնա Պողոսյան

Կարինե Մարգարյան

ԴԱՍԱԳՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2-րդ դասարան

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Երևան 2023

ՀՏԴ 373.016:502/504(07)
ԳՄԴ 74.26+20.1g7
Պ 797

Պողոսյան Նոնա, Մարգարյան Կարինե
Պ 797 Ես և շրջակա աշխարհը: Դասագրքի
օգտագործման մեթոդական ուղեցույց: 2-րդ
դասարան / Ն. Պողոսյան, Կ. Մարգարյան.- Եր.:
«Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.- 190 էջ:

ՀՏԴ 373.016:502/504(07)
ԳՄԴ 74.26+20.1g7

Երաշխավորված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից:

© Պողոսյան Ն., 2023
© Մարգարյան Կ., 2023
© «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023
© ՀՀ ԿԳՄՍՆ, 2023

ISBN 978-9939-1-1727-0

Ես և շրջակա աշխարհը: Դասագրքի օգտագործման մեթոդական ուղեցույց: 2-րդ դասարան:

Հեղինակներ՝ Նոնա Պողոսյան, Կարինե Մարգարյան
Սրբագրիչ՝ Գոհար Ամիրբեկյան
Շարվածք և ձևավորում՝ Լուսինե Դավթյան
Շապիկի ձևավորում՝ Լուսինե Նավասարդյան

Բովանդակություն

1. ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ _____ 8

2. «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ _____ 8

3. ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ _____ 11

4. ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ _____ 21

5. ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ _____ 23

6. ԴԱՍԱԳՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ _____ 28

7. ԱՌԱՋԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ _____ 30

8. ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ _____ 35

9. ԻՆՉՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌՈՒՑԵԼ ԴԱՍԸ _____ 41

10. ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ _____ 44

11. ԿՁՈՒ (ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ) ԴԱՍԻ ՊԼԱՆ _____ 47

12. ԴԱՍԱԳՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ _____ 54

13. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ _____ 155

14. ԴԱՍԱԳՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐ _____ 184

Սիրելի՛ ուսուցիչ,

Բարի գալուստ «Ես և շրջակա աշխարհը» դասագրքի օգտագործման մեթոդական ուղեցույց:

Այս ձեռնարկը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն և խորհուրդներ, թե ինչպես ունենալ արդյունավետ ու մասնակցային դասեր ձեր աշակերտների համար: Համապատասխանում է ՀՀ Կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ ընդունված Հանրակրթության պետական չափորոշչին: Դասագիրքը ստեղծվել է «Մասնակցային դպրոց» ԿՀ միջգիտակարգային նախագծի շրջանակում:

Այստեղ դուք կարող եք ծանոթանալ նոր չափորոշչի առանձնահատկություններին, առարկայի նպատակներին և վերջնարդյունքներին, դասագրքի բովանդակության կառուցվածքին, կգտնեք գործնական խորհուրդներ, դասավանդման և ուսումնառության ռազմավարություններ, որոնք կօգնեն ձևավորել դրական ուսումնական մթնոլորտ, ներառել աշակերտներին, աջակցել նրանց անձնական ու առարկայական բնագավառում աճին:

Հանրակրթության պետական նոր չափորոշչին համահունչ մենք պատրաստել ենք կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր, օրինակելի թեմատիկ պլան, նկարագրել մեթոդներ ու հնարներ, ցույց տվել յուրաքանչյուր թեմայի շուրջ աշխատելու նրբություններն ու կարևոր շեշտադրումները:

Մենք գիտենք, որ դուք առաջիններից եք, ովքեր հանձն են առել նոր չափորոշիչներով աշխատելու պատասխանատու և պատվաբեր գործը և այդ ճանապարհին կարող եք ունենալ դժվարություններ: Այդ նպատակով էլ ստեղծել

ենք այս ձեռնարկը, որը կօգնի ձեր դասավանդման գործընթացը դարձնել մոտիվացնող և ստեղծարար:

Մենք պետք է նաև հաշվի առնենք, որ լավ դաս կազմակերպելու համար բավարար չեն դասագրքերը և ձեռնարկները, և անընդհատ անհրաժեշտ է ինքնակրթվել ու զարգացնել առարկայի, մանկավարժության վերաբերյալ մեր գիտելիքները: Այդ նպատակով էլ ձեռնարկում ձեզ համար ներառել ենք ինքնուրույն ուսումնառության լրացուցիչ ու օժանդակ նյութեր, որոնք, վստահ ենք, կարող են օգտակար լինել:

Մենք գնահատում ենք ձեր աշխատանքը, ջանասիրությունն ու եռանդը, և շնորհակալություն հայտնում սերունդների կրթության գործընթացում ձեր ներդրման համար:

Հուսով ենք, որ այս ձեռնարկը կոգեշնչի և կմոտիվացնի ձեզ՝ լինելու լավագույն ուսուցիչը:

Մաղթում ենք հաջողություն:

Հեղինակային խումբ

1. ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱՐԱՀԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսումնասիրության ընթացքում աշակերտը հնարավորություն կունենա ճանաչելու ինչպես ինքն իրեն, այնպես էլ իրեն շրջապատող մարդկանց, կյուրացնի այնպիսի սոցիալական հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցումը, համագործակցությունը, համատեղ ապրելու կանոնները, կունենա կարծիք և դիրքորոշում, կկարողանա արտահայտել ու պաշտպանել դրանք, միևնույն ժամանակ կսովորի լսել և հարգել այլոց կարծիքները, կսովորի որոշումներ կայացնել, ընտրություն կատարել, պայմանավորվել և պահել պայմանավորվածությունները, կճանաչի իրեն շրջապատող աշխարհը, բնության երևույթները, կբացահայտի իրեն անծանոթ տիեզերքը, կկարևորի միջավայրի մաքրությունը, կունենա էկովարքագիծ:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով հնարավոր է զարգացնել բոլոր կարողունակությունները: Դասագիրքը ձևավորվել է կարողունակությունների ձևավորման սկզբունքով, շարադրված ուսումնառության մեթոդները նպաստում են սովորել սովորելու կարողունակության ձևավորմաը, մեթոդական ապարատը նպաստում է լեզվական գրագիտության զարգացմանը, իսկ բովանդակությունն ամբողջապես նպաստում է ինքնաճանաչո-

ղական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային և մնացյալ վերառարկայական կարողունակությունների ձևավորմանը:

2. «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առարկայի ուսումնական նպատակը սովորողների սոցիալականացումն է, աշխարհի ամբողջականության, բազմազանության և փոխադարձ կապերի, բնության, հասարակության և սոցիալ-մշակութային օբյեկտների ու երևույթների միասնականության մասին նախնական պատկերացումների ձևավորումը, ինչպես նաև հոգեպես ու ֆիզիկապես առողջ ու ներդաշնակ զարգացող, ստեղծագործ անձի ձևավորումը, որը էկոլոգիական, մշակութաբանական տարրական գրագիտություն ունի, մարդկանց և բնության հետ փոխհարաբերություններում դրսևորում է բարոյաէթիկական նորմերին համապատասխանող, չվնասող, անվտանգ, պատասխանատու վարք և հայրենասեր քաղաքացու նկարագիր ունի:

Մասնավորապես առարկան նպատակ ունի հիմքեր դնել և սովորողներին օգնել՝

- հասկանալ սեփական ինքնությունը՝ որպես անձ և անհատականություն,
- ընդունել մարդուն որպես բարձրագույն արժեք, ընդունել իր հասակակիցներին՝ հարգելով նրանց առանձնահատկությունները, դրսևորել միմյանց նկատմամբ հարգալից, ոչ խտրական վարքագիծ,

- արդյունավետ հաղորդակցվել, հասկանալ, քննադատաբար վերլուծել տարբեր տեսակետեր, արտահայտել սեփականը,
- պատկերացում ունենալ ազգային, համամարդկային և համերկրային գաղափարներից, իմանալ բազմազանության մասին և ընդունել այն,
- ուսումնասիրել աշխարհը Հայաստանի տեսանկյունից,
- ձեռք բերել փորձառություններ, որոնք հիմնված են իրենց հետաքրքրությունների վրա և խթանում են իրենց շրջակա աշխարհին ուսումնասիրելու ձգտումը,
- կիրառել քննադատական և ռեֆլեքսիվ մտածողություն՝ տարբեր իրավիճակներ վերլուծելու, խնդիրներ լուծելու, որոշումներ կայացնելու հարցում,
- զարգացնել բնագիտական հետազոտությունների համար անհրաժեշտ գաղափարներ, հմտություններ և սովորություններ,
- գնահատել և ընտրել արժանահավատ տեղեկատվություն, հաշվի առնել տարբեր տեսակետներ և համադրելով մտածված եզրահանգումներ, պատասխանատու որոշումներ կայացնել,
- հաղթահարել կոնֆլիկտային իրավիճակները, բանակցել և նախընտրել խաղաղ տարբերակներ, կարողանալ զերծ մնալ բռնությունից և բռնություն կիրառելուց,
- տեղեկացված լինել որոշումների կայացման բարոյաէթիկական հետևանքների մասին,
- ունենալ պատասխանատու և գիտակից վերաբերմունք՝ սեփական և ուրիշների առողջության ուանվտանգության հանդեպ, ձեռք բերել համապատասխան սովորություններ,

- հասկանալ հասարակական որոշ գործընթացների կարևորությունը, գիտակցել սեփական արձագանքի հնարավոր ազդեցությունը հասարակության վրա:

Առարկայի հիմնական խնդիրներն են.

- անձնային, հաղորդակցական, ճանաչողական, ստեղծագործական բազմաբնույթ կրթական գործելակերպերի զարգացումը,
- ճանաչողական ակտիվության և շրջակա աշխարհի մասին գիտելքիներ ձեռք բերելու ինքնուրույնության ձևավորումը,
- մեդիագրագիտության ձևավորումը,
- բնության, մարդկանց, հայրենիքի հանդեպ սիրո, հարգանքի և խնայող վերաբերմունքի դաստիարակությունը,
- սեփական և ուրիշների առողջության հարցում գիտակից և պատասխանատու վերաբերմունքը,
- նախնիների, անցյալի հանդեպ հարգանքը, պատմական և մշակութային ժառանգության պահպանության ձգտումը:

3. ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առարկայի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները սահմանված են կրթության առաջին աստիճանի համար: Յուրաքանչյուր դասարանում պետք է ապահովել ստորև բերված վերջնարդյունքներից տվյալ դասարանին և տարիքային խմբին համապատասխան գիտելիքները,

կարողությունները, կարողունակությունները: Ընդ որում՝ առարկայի ծրագրում շատ հասկացություններ և գաղափարներ տարրական չորս դասարաններում զարգանում են պարուրաձև: Ելնելով սրանից՝ պետք է գիտակցենք, որ երկրորդ դասարանում ընդամենը հիմք է դրվում շատ գաղափարների և կարողունակությունների ձևավորմանը, որոնք հետագայում պետք է զարգացնենք:

Ծածկագրումը կատարվել է հետևյալ կերպ. 1-ին տառը Շ-Շրջակա՝ ցույց է տալիս առարկայի անունը (Ես և շրջակա աշխարհը), 2-րդ տառը ցույց է տալիս հիմնական հասկացությունները՝ Ե-Ես, Մ-Ես և մարդիկ, Բ-Ես և բնությունը, Տ-Ես և տիեզերքը, 3-րդ և 4-րդ տառերը՝ երկրորդ և երրորդ ենթահասկացությունների համապատասխան տառերը, օրինակ՝ Ի-Ն Ինքնաճանաչում-Ներաշխարհ, Ի-Մ Ինքնաճանաչում-Մարմին, վերջին տառի կողքի թիվը ցույց է տալիս վերջնարդյունքի համարը՝ 1,2 և այլն:

Շ.Ե.Ի.Ն1 Ուսումնասիրել ինքնության վերաբերյալ գաղափարներ՝ ներառյալ՝ իր և ուրիշների, տարբերակել ինքնությունը՝ ըստ սոցիալական և հուզական առանձնահատկությունների:

Շ.Ե.Ի.Ն2 Գտնել ինքնարտահայտման և ինքադրսևորման տարբեր եղանակներ:

Շ.Ե.Ի.Ն3 Նշել սեփական կարողություններն ու հնարավորությունները, ինքնադրսևորվել:

Շ.Ե.Ի.Ն4 Նկարագրել և կառավարել հույզերը, բացատրել, որ ուրիշներն էլ ունեն նույն հույզերը, ապրումակցել:

Շ.Ե.Ի.Ն5 Տարբերակել անցյալում, ներկայում կատարված և ապագայում կատարվելիք իրադարձությունները՝ իր օրինակով, արդյունավետ տնօրինել ժամանակը:

Շ.Ե.Ի.Մ1 Թվարկել զգայարանները, տարբերակել դրանցով ստացված տեղեկությունները՝ որպես աշխարհը ճանաչելու միջոց:

Շ.Ե.Ի.Մ2 Նշել մարմնի մասերի գործառույթներն ու կազմության որոշ բնորոշիչներ:

Շ.Ե.Ի.Մ3 Հարգել և ընդունել տարբերությունները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող և զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց՝ ներառելով նրանց հնարավոր բոլոր գործընթացներում:

Շ.Ե.Ի.Մ4 Տիրապետել անձնական հիգիենայի կանոններին, հիմնավորել հիգիենայի, ֆիզիկական ակտիվության և կոփման անհրաժեշտությունը՝ որպես առողջությունը պայմանավորող կարևոր գործոններ:

Շ.Ե.Ա.Ս1 Բացատրել առողջ սնուցման բաղադրիչները՝ բազմազանությունը, սննդակարգը, ընդունման պարբերականությունը և անվտանգությունը:

Շ.Ե.Ա.Ս2 Բացատրել, որ սնունդն ապահովում է օրգանիզմի էներգիան, ինչն էլ ապահովում է ֆիզիկական ակտիվությունը:

Շ.Ե.Ա.Ս3 Ներկայացնել ջրի նշանակությունը մարդու օրգանիզմի համար:

Շ.Ե.Ա.Ի1 Ցուցադրել տարբեր հնարավոր աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ խուճապի չմատնվելու, կողմնորոշվելու, անվտանգության կանոնների և քայլերի հաջորդականության իմացություն, ցուցադրել առաջին օգնության պարզ եղանակներ:

Շ.Ե.Ա.Վ1 Տարբերակել վնասակար սովորությունները, այդ թվում՝ ծխելը, ալկոհոլ և այլ վնասակար նյութեր օգտագործելը, և խուսափել դրանցից, թվարկել որոշ վարակիչ հիվանդություններ և դրսևորել դրանց կանխարգելմանն ուղղված վարքագիծ:

Շ.Ե.Ա.Վ2 Դրսևորել ռիսկերից խուսափելուն և առողջությանը միտված վարքագիծ:

Շ.Մ.Փ.Ը1 Նկարագրել տարբեր կազմով, մեծ, փոքր ընտանիքները, փոփոխություններն ընտանիքում, կանանց և տղամարդկանց հավասարության տեսանկյունից նկարագրել ընտանիքի ադամների դերերը, կարիքները, իրավունքներն ու պարտականություններն ընտանիքում:

Շ.Մ.Փ.Ը2 Ներգրավվել տարբեր խմբային գործունեություններում (այդ թվում ընտանիքի, դասարանի, համայնքի և այլն), մեկնաբանել խմբերի առանձնահատկությունները, խմբային դերերը, փոխհարաբերությունները և խմբային գործունեության արդյունքը:

Շ.Մ.Փ.Դ1 Պահպանել դպրոցական համակեցության կանոնները, բերել մեծահասակների և հասակակիցների վարքագծի դրական և բացասական ազդեցության օրինակներ, հստակ արտահայտել ցանկություններն ու կամքը, ոչինչ թույլ չտալ առանց իր ցանկության, երբ դա կարող է վնասել իրեն:

Շ.Մ.Փ.Դ2 Կարևորել փոխօգնությունը, միմյանց հանդեպ բարեհաճ և փոխադարձ վստահության հիման վրա հիմնված հարաբերություններ ստեղծելու կամք ցուցաբերել:

Շ.Մ.Փ.Դ3 Բնութագրել, թե ինչպիսին պետք է լինի ընկերը, որ որակներն են բնորոշ լավ ընկերոջը, համապատասխանել այդ բնութագրին, կարողանալ ձեռք բերել և պահպանել ընկերությունը:

Շ.Մ.Փ.Դ4 Բացատրել՝ օրինակներ բերելով, որ բոլոր մարդիկ կարող են ունենալ նախասիրություններ ու հետաքրքրություններ, որոնք պայմանավորված են անհատական առանձնահատկություններով և անձնային որակներով:

Շ.Մ.Փ.Հ1 Դրսևորել հարգալից, հոգատար, պատասխանատու և անխտրական վերաբերմունք հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչների հանդեպ:

Շ.Մ.Փ.Հ2 Նկարագրել ազգային ինքնությունը սահմանող խորհրդանիշները, անցյալի և ներկայի իրադարձությունները, տարբերակել իրենց ազգայինը այլ երկրների հետ համեմատության համատեքստում և զարգացնել դրանցից հուզական կախվածությունը, հայրենիքի հանդեպ սերը:

Շ.Մ.Փ.Հ3 Կողմնորոշվել տարածքում, բնութագրել տարբեր կառույցների, հաստատությունների նշանակությունը, դրանցից օգտվելու ձևերը:

Շ.Մ.Փ.Հ4 Տեղյակ լինել իր բնակավայրի, հայրենի բնության և պատմամշակութային արժեքներին, գնահատել և խնայող ու պատասխանատու վերաբերմունք ցուցաբերել դրանց նկատմամբ:

Շ.Մ.Փ.Հ1 Նկարագրել իրավունքների և քաղաքացիական պատասխանատվության հիմնական բաղադրիչները, որոնք հնարավորություն են տալիս հասարակությանը դուրս գալ ավելի զարգացած, ներդաշնակ ուղի:

Շ.Մ.Փ.Ի2 Կանխատեսել իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները, գնահատել դրանք, ունենալ անձնական դիրքորոշում:

Շ.Մ.Փ.Կ1 Ցուցաբերել արդյունավետ շփման, կոնֆլիկտները խաղաղ կարգավորելուն ուղղված վարքագիծ:

Շ.Մ.Փ.Կ2 Տարբերակել բռնության տարբեր դրսևորումները հասակակիցների և մեծահասակների կողմից/միջև, հրաժարվել բռնության բոլոր ձևերից, աջակցել բռնության ենթարկվածին:

Շ.Մ.Փ.Կ3 Տարբերակել փաստը տեսակետից:

Շ.Մ.Փ.Կ4 Նկարագրել և բերել ազատության, արդարության, հավասարության, պատասխանատվության և հանդուրժողականության՝ իրենց առնչվող պարզ օրինակներ:

Շ.Մ.Հ.ՔՏ1 Հիշատակել տեղեկություններ հնում եղած որոշ նշանակալի քաղաքակրթությունների մասին, բացատրել, թե ինչպես, ինչ միջոցներով են մեզ հասել այդ մշակույթների մասին վկայությունները:

Շ.Մ.Հ.ՔՏ2 Թվարկել տնտեսության ճյուղերը, ներկայացնել դրանք, համեմատել նախկինում, ներկայում և ապագայում դրանց զարգացման որոշ առանձնահատկություններ և օրինակներ բերել:

Շ.Մ.Հ.ՔՏ3 Ներկայացնել ապրանքափոխանակության, փողի առաջացման և նշանակության մասին տեղեկություններ, բացատրել բարիք-փող-բարիք շղթան, կազմել անձնական բյուջե:

Ծ.Բ.Բ.01 Տարբերակել և բնութագրել բնության կենդանի և անկենդան օբյեկտները, դրանց փոխկապվածության և փոխազդեցությունների վերաբերյալ օրինակներ բերել:

Ծ.Բ.Բ.02 Ներկայացնել տարբեր բնական գործոնների ազդեցությունը բույսերի աճի և զարգացման վրա (հող, ջուր, օդ, լույս, ջերմություն):

Ծ.Բ.Բ.03 Բնութագրել տարբեր տարածքներին բնորոշ կենդանիների, բույսերի և մարդկանց բազմազանությունն ու հարմարվողականությունը միջավայրին, այդ բազմազանության պահպանության անհրաժեշտությունը:

Ծ.Բ.Բ.Կ1 Նկարագրել, հիմնավորել, որ բնության մեջ գտնվող բուսական և կենդանական տեսակները դասակարգվում են ըստ տարբեր բնութագրերի:

Ծ.Բ.Բ.Կ2 Տարբերակել և նկարագրել բույսերի հիմնական մասերը, նկարագրել դրանց հիմնական գործառույթները, հետազոտել, ներկայացնել սերմերի ծլման, աճի գործընթացը և անհրաժեշտ հիմնական պայմանները:

Ծ.Բ.Բ.Կ3 Բացատրել և ընդհանրացնել, որ բոլոր կենդանի օրգանիզմները բազմանում և առաջացնում են իրենց նման, բայց ոչ կրկնօրինակ սերունդ:

Ծ.Բ.Բ.Կ4 Բացատրել, թե մարդը, կենդանիները և բույսերը որտեղից են ստանում իրենց սնունդը, նշել, որ մարդը և կենդանիները սնվում են բույսերով կամ այլ կենդանիներով, սնման շղթաների պարզ օրինակներ բերել:

Շ.Բ.Բ.Ա1 Նկարագրել երկրի մակերևույթի հիմնական ձևերը, բնորոշել շրջապատի ռելիեֆի տարբեր ձևերը (լեռներ, հարթավայրեր և այլն):

Շ.Բ.Բ.Ա2 Ներկայացնել անկենդան բնության նշանակությունը կենդանիների, բույսերի և մարդկանց կյանքում:

Շ.Բ.Բ.Ա3 Ներկայացնել մարդկանց, կենդանիների և բույսերի համար ջրի կենսական նշանակությունը, երկրագնդի վրա քաղցրահամ ջրի սահմանափակությունը, աղտոտման խնդիրը, ջրի տնտեսման, արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը:

Շ.Բ.Բ.Ա4 Բացատրել, որ երկրագունդը շրջապատված է օդային թաղանթով, որը կենսական նշանակություն ունի:

Շ.Բ.Բ.Ա5 Գլոբուսի և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքները և օվկիանոսները: Ցույց տալ հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը, կողմնորոշվել դրանցով, կարողանալ օգտվել կողմնացույցից, կողմնորոշվել տեղանքում այլ կողմնորոշիչներով: Ճանաչել հատակագծի որոշ պայմանական նշաններ:

Շ.Բ.Բ.Փ1 Նկարագրել բնության մեջ տեղի ունեցող պարբերական երևույթները (տարվա եղանակներ, գիշեր-ցերեկ) և բացատրել, թե այդ փոփոխություններով պայմանավորված այլ բնական երևույթներն ինչ ազդեցություն են ունենում բնության վրա:

Շ.Բ.Բ.Փ2 Ներկայացնել, թե մարդու գործունեությունն ինչպես է ազդում շրջակա միջավայրի և

կենսաբազմազանության վրա: Պատկերացում ունենալ բնության աղտոտվածության և առողջության կապի մասին:

Շ.Բ.Բ.Փ3 Կարևորել աղբի տեսակավորման, վերամշակման, երկրորդային օգտագործման և թափոնների վերամշակման անհրաժեշտությունը բնապահպանության և խնայողության տեսանկյունից:

Շ.Տ.Ե.Պ1 Տարրական պատկերացում ունենալ Արեգակնային համակարգի՝ մոլորակների, Երկրի, Լուսնի մասին:

Շ.Տ.Ե.Պ2 Դիտարկել գլոբուսը՝ որպես երկրի մոդել և ցուցադրել, թե ինչպես է Երկրի պտույտն Արեգակի և իր առանցքի շուրջը պայմանավորում գիշերվա և ցերեկվա հերթագայությունը:

Շ.Տ.Շ.ՈՒ1 Ցուցադրել այն ամենը, ինչ սկսում է շարժվել, շարժվում է որևէ ուժի շնորհիվ, որ կան մարմինը շարժման մեջ դնելու տարբեր եղանակներ (ձգել, հրել տարբեր ուժերով և ուղղություններով):

Շ.Տ.Շ.ՈՒ2 Բացատրել, որ մարմիններն ընկնում են երկրի ձգողականության պատճառով:

Շ.Տ.Շ.ՁԼ1 Ծանոթանալ ձայնի և լույսի տարածման երևույթին, համոզվել, որ ձայնը և լույսը տարբեր կերպ են տարածվում փակ և բաց տարածքում, ձայնը և լույսը կարող են անդրադառնալ՝ դիպչելով մարմիններին:

Շ.Տ.Շ.ՁԼ2 Ներկայացնել լույսի բնական և արհեստական աղբյուրներ, օրինակներ բերել:

Շ.Տ.Շ.ՁԼ3 Բնութագրել նյութերը՝ ըստ իրենց թափանցիկ, կիսաթափանց և անթափանց լինելու հատկության:

Շ.Տ.Շ.Է1 Մեկնաբանել, որ ցերեկվա և գիշերվա, ինչպես նաև ամառվա և ձմեռվա օդի ջերմաստիճանների տարբերությունը պայմանավորված է Արեգակից ստացած ջերմության քանակով:

Շ.Տ.Շ.Է2 Փորձել և համոզվել, որ արևի տակ բոլոր առարկաները (ջուրը, օդը, հողը) տաքանում են:

Շ.Տ.Մ.Ն1 Տարբերակել՝ ինչ են մարմինները, նյութերը, բացատրել, որ նյութերը կազմված են չափազանց փոքր մասնիկներից:

Շ.Տ.Մ.Ն2 Փորձերի միջոցով ներկայացնել որոշ նախնական պատկերացումներ մասնիկների շարժման և փոխազդեցության մասին:

Շ.Տ.Մ.Ն3 Փորձերի միջոցով ցույց տալ նյութերի խառնման պարզ օրինակներ, դա բացատրել մասնիկների շարժմամբ:

Շ.Տ.Մ.Հ1 Բնութագրել նյութերն ըստ իրենց որակական հատկանիշների (պինդ, հեղուկ, գազային):

Շ.Տ.Մ.Հ2 Ներկայացնել, որ ջուրը բնության մեջ միաժամանակ երեք վիճակներում (հեղուկ, պինդ, գազային) հանդիպող միակ նյութն է: Փորձերի միջոցով ներկայացնել մի վիճակից մյուսին անցումը: Ջրի օրինակով բնութագրել նյութերի, հալման, պնդացման, գոլորշիացման և խտացման երևույթները:

Շ.Տ.Մ.Չ1 Նկարագրել մարմինները՝ ըստ քանակական հատկանիշների, համապատասխան գործիքների օգնությամբ կատարել երկարության, զանգվածի, ջերմաստիճանի չափումներ՝ կատարել անցումներ չափման միավորների չափողականությունների միջև:

4. ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Առարկայի բովանդակությունը կառուցելիս առաջնորդվել ենք հետևյալ ընդհանրական սկզբունքներով.

1) Առարկայի բովանդակությունը կառուցված է գիտության, տեխնոլոգիայի և մշակույթի ժամանակակից նվաճումներին համապատասխան:

2) Պահպանված է տրամաբանական հաջորդականությունը:

3) Նյութի կառուցման հիմքում ընկած են հիմնարար գաղափարներ, որոնցից բխում են բոլոր թեմաներն ու գաղափարները:

4) Առարկայի բովանդակությունը կառուցված է հաջորդականության և շարունակականության սկզբունքով՝ պարզից բարդ: Բոլոր աշակերտների (տղաներ և աղջիկներ, հաշմանդամություն ունեցող երեխաներ և խոցելի իրավիճակում գտնվող երեխաներ) համար ապահովված է առարկայական ծրագրի և/կամ դասավանդման մեթոդների մատչելիությունը:

5) Հիմնված է երեխայի անձնական փորձառության, իրական կյանքի օրինակների և աշխարհում արագ կատարվող փոփոխություններին նախապատրաստելու սկզբունքի վրա:

6) Թեմաները ներկայացված են պարուրաձև սկզբունքով՝ դասընթացի ընթացքում ուսումնասիրված նյութերը ընդլայնվում և խորացվում են մյուս դասարաններում նույն թեմայի աստիճանական ավելի բարձր մակարդակում, այնուհետև՝ հիմնական դպրոցի բնագիտական, հասարակագիտական, հայրենագիտական և անվտանգ կենսակերպի բնագավառների դասընթացներում:

7) Առարկայի բովանդակությունը ներկայացված է սովորողների տարիքային առանձնահատկություններին համապատասխան, որպեսզի նրանք ինքնուրույն, միմյանց օգնելով կամ ուսուցչի ուղղորդմամբ այն յուրացնելու հնարավորություն ունենան:

8) Առարկայի բովանդակությունը կառուցված է այնպես, որ գիտելիքների և կարողությունների զարգացմանը զուգընթաց՝ ձևավորվեն սովորողների վերաբերմունքները, արժեքային համակարգը, զարգանան սոցիալական հմտություններն ու ստեղծագործական ունակությունները:

9) Առարկայի բովանդակությունը ներկայացված է բազմաթիվ միջոցներով և ապահովում է մեթա ճանաչողական յուրացման խթանում ու աջակցություն:

10) Առարկայի բովանդակությունը երաշխավորում է ընդհանրացումը և նյութի փոխանցումը նոր համատեքստեր:

5. ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված (ԿՁՈՒ) կրթությունը գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների համակարգ է, որը հնարավորություն է տալիս սովորողին պատշաճ և արդյունավետ կերպով արձագանքելու տարատեսակ իրավիճակներին:

Հանրակրթության պետական չափորոշիչը, ինչպես նաև առարկայական նոր չափորոշիչներն ու ծրագրերն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Առանցքային կարողունակություններն անհրաժեշտ են անձի զարգացման, հասարակական կյանքին ակտիվ մասնակցության, ինչպես նաև տարբեր ռեսուրսների շարունակական ողջամիտ օգտագործման համար: Առանցքային կարողունակությունները փոխկապակցված են միջառարկայական կապերով: Յուրաքանչյուր դասի համար նախատեսվում է ձևավորել մեկ առարկայական և մի քանի վերառարկայական կարողունակություններ:

Առանցքային կամ վերառարկայական կարողունակությունները ութն են: Դրանք շարադրված են Հանրակրթության պետական չափորոշչում:

ԿՁՈՒ դասի առանձնահատկությունները

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված (ԿՁՈՒ) դասերը պարունակում են 12 կարևորագույն տարրեր:

1. Աշակերտակենտրոնություն

Արդյո՞ք թեմաներն ու մեթոդաբանությունը աշակերտական կողմնորոշում ունեն: Արդյո՞ք հաշվի է առնվում աշակերտների նախնական գիտելիքը:

2. Խնդրակենտրոնություն

Արդյո՞ք աշակերտներն ինքնուրույն ճանաչում են խնդիրը: Արդյո՞ք փոխանցվելիք առարկայական գիտելիքը ծառայում է խնդրի լուծմանը:

3. Ավելի շատ կառուցում, քան հրահանգում

Արդյո՞ք աշակերտներին ակտիվացնող դասաձևերն ունեն ավելի մեծ մասնաբաժին, քան ուսուցչակենտրոն ձևերը:

4. Ինքնակազմակերպում

Արդյո՞ք աշակերտը կարող է ինքնուրույն կազմակերպել դասապրոցեսի առանձին մասերը:

5. Տարբերակում

Արդյո՞ք նախապես հստակեցված են կոմպետենցիայի ձեռք բերվելիք մակարդակները: Արդյո՞ք աշխատանքային առաջադրանքները բաժանված են աստիճանների:

6. Մեթոդական և վարքային կողմնորոշում

Արդյո՞ք կիրառվող մեթոդները նպաստում են առարկայական և սոցիալական կոմպետենցիաների ձեռքբերմանը, ինչպես նաև աշակերտների ակտիվացմանը:

7. Կանխորոշում

Արդյո՞ք տեղի է ունենում կոմպետենցիաների տարբերակված ստուգում կամ դասամիավորի սկզբում ուսումնական մակարդակի կանխորոշում:

8. Անհատականացում

Արդյո՞ք դասապրոցեսի ընթացքում աշակերտն ունի ժամանակային և բովանդակային ազատ տարածքներ: Արդյո՞ք քննարկվում են ուսման տարբեր ճանապարհներ:

9. Գործընթացային/Նպատակային կողմնորոշում

Արդյո՞ք ձեռք բերված կոմպետենցիաներն ամրապնդվում են կրկնական և կուտակային ուսուցման միջոցով: Արդյո՞ք պլանավորման համար ելման կետ է ընդունվում նպատակը:

10. Առաջադիմության կողմնորոշում

Որտե՞ղ կարող է աշակերտը ցուցադրել իր ձեռք բերված կոմպետենցիան: Արդյո՞ք ուսումնական գործընթացը հանգում է գնահատման ենթակա արդյունքի:

11. Ուսուցում օրինակներով

Ո՞ր կոնկրետ օրինակը կարող է ծառայել կոմպետենցիայի ձեռքբերմանը: Ինչքանո՞վ է անհրաժեշտ կատարել դիդակտիկ կրճատումներ:

12. Անդրադարձման/Ռեֆլեքսիոն

Արդյո՞ք քննադատաբար անդրադարձ է կատարվում ուսումնական գործընթացին և կոմպետենցիաների ձեռքբերմանը: Արդյո՞ք ստացվում են աշակերտի նախնական գիտելիքի և ուսումնական գործընթացի մասին անհատական արձագանքներ:

ԿՁՈՒ և ավանդական դասի տարբերությունները

Ավանդական դաս	ԿՁՈՒ դաս
Սովորողները պասիվ են: Հիմնականում լսում են:	Սովորողներն ակտիվ են: Բացի լսելուց՝ հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու:
Հիմնականում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը:	Բացի ուսուցիչ-աշակերտ կապից՝ գործում է աշակերտ-աշակերտ ուսուցողական կապը:
Ուսուցիչը, ըստ թեմատիկ պլանի, ծրագիրն «անցնում է»:	Ուսուցիչը չի անցնում հաջորդ թեմային, քանի դեռ աշակերտները չեն յուրացրել թեմայի առանցքային գաղափարները:
Ուսումնական նյութը ծավալուն է: Հաճախ կարևորն ու անկարևորը տարբերակված չեն:	Ուսումնական նյութը կառուցված է առանցքային կոմպետենցիաների և գաղափարների շուրջ:

Ուսումնառության նպատակները ոչ միշտ են չափելի և թափանցիկ:	Ուսումնառության նպատակները չափելի են և թափանցիկ են սովորողների համար:
Շեշտը դրվում է գիտելիքների, հմտությունների ուսուցման վրա:	Գիտելիքների և հմտությունների ուսուցումից զատ՝ կարևորվում է նաև արժեքների և վերաբերմունքի ուսուցումը:
Կարևորվում է ուսումնական առարկաների անջատ ուսուցումը:	Առարկաների ուսուցման միջոցով զարգացվում են վերառարկայական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են՝ խնդիրների լուծումը, քննադատական մտածողությունը, համագործակցությունը:
Կարևորվում է ուսումնական նյութի մեխանիկական վերարտադրությունը՝ առանց մտածողության հմտությունների, գործնական հմտությունների հետ կապակցելու:	Ուսումնական նյութի մեջ կարևորվում է բովանդակության խոր ըմբռնումը և դրա կապակցումը ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների հետ:
Սովորողները անհատական մոտեցման են արժանանում միայն այն դեպքում, եթե նրանց ակադեմիական ձեռքբերումների մակարդակը շատ բարձր է կամ շատ ցածր:	Սովորողները ստանում են իրենց կրթական կարիքներին համապատասխանող աջակցություն:
Հիմնականում օգտագործվում է ամփոփիչ, գնահատանիշով գնահատումը: Թվանշանն օգտագործվում է աշակերտներին դասդասելու համար:	Օգտագործվում են գնահատման տարբեր մոտեցումներ: Շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա: Գնահատականն օգտագործվում է աշակերտների առաջընթացը չափելու համար:

6. ԱՌԱՋԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Դուք անպայման կնկատեք, որ դասագրքում բոլոր առաջադրանքները ձևակերպված են առաջադրական բայերով (*ներկայացրու, հիմնավորիր, դատողություններ արա, համեմատիր, առանձնացրու և այլն*): Դրանք գրված են մուգ տառերով: Ձեր ուշադրությունից չեն վրիպի նաև վերջնարդյունքերի սահմանման ժամանակ կիրառված առաջադրական բայերը:

Առաջադրական բայերը կարողունակությունները դարձնում են չափելի և «շոշափելի»:

Դրանք օգնում են ***տարբերակված ուսուցում*** կազմակերպել տարբեր կարողություններ ու առաձնահատկություններ ունեցող սովորողների համար:

Առաջադրական բայերը պայմանականորեն բաժանվում են երեք խմբի: Դրանք գործողություն ենթադրող առաջադրանքներ են: Այդ գործողությունների մի մասը պահանջում է ընդամենը որոշակի գիտելիքի առկայություն, մյուս մասը՝ որոշակի կարողությունների և հմտությունների տիրապետում, երրորդ խումբը պահանջում է որոշակի արժեհամակարգի, երևույթների նկատմամբ որոշակի դիրքորոշման առկայություն և դրսևորում: Այս բայերը գործողության մեջ շոշափելի և չափելի են դարձնում կարողունակությունների ձևավորման մակարդակը սովորողների մոտ և հանդիսանում են **ձևավորող գնահատման** արդյունավետ միջոց:

Պահանջների մակարդակները փոխկապակցված են: Ընդ որում, պահանջների 2-րդ մակարդակը ներառում է պահանջների 1-ին մակարդակը, իսկ պահանջների 3-րդ մակարդակն ընգրկում է առաջին երկու մակարդակները: Չնայած պահանջների երեք մակարդակների միջև չկան

հստակ սահմաններ, այդուհանդերձ, այդ մակարդակների կիրառումն էապես նպաստում է հանրակրթության պետական չափորոշչով նախատեսված կարողունակությունների վավերականության ստուգմանը և առաջադրանքների բարդության սահմանմանը, ինչպես նաև կրթության բոլոր մասնակիցների համար քննական արդյունքների գնահատման թափանցիկությանը:

Առաջադրական բայերը նախատեսված են բոլոր առարկաների համար և դրանով իսկ ստեղծում են ***միջառարկայական կապեր:***

Առաջադրական բայեր		
Պահանջների Առաջին մակարդակ	Պահանջների Երկրորդ մակարդակ	Պահանջների Երրորդ մակարդակ
Նշիր	Համեմատիր	Պնդումներ արա
Գտիր	Առաձնացրու	Հիմնավորիր
Անվանիր	Մեկնաբանիր	Կազմիր /աղյուսակ, պաստառ/
Թվարկիր	Բացատրիր	Քննարկիր
Ներկայացրու	Ընտրիր	Դիրքորոշում հայտնիր
Պատմիր/ Վերարտադրիր	Ցուցադրիր/ Բեմադրիր	Կառուցիր
Նկարագրիր	Դասակարգիր	Ստեղծիր

7. ԴԱՍԱԳՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասագիրքը բաղկացած է հինգ գլուխներից՝ «Ինչպես սովորել», «Ես», «Ես և մարդիկ», «Ես և բնությունը», «Ես և տիեզերքը»: Գլուխները գունանշված են համապատասխանաբար դեղին, լազուր, կարմիր, կանաչ և մանուշակագույն գույներով:

Գլուխներից յուրաքանչյուրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- «Ես»՝ «Ինքնություն, ինքնաճանաչում», «Անվտանգություն»,
- «Ես և մարդիկ»՝ «Փոխհարաբերություններ», «Հասարակական փոփոխություններ»,
- «Ես և բնությունը»՝ «Բնության բազմազանություն, փոխազդեցություններ»,
- «Ես և տիեզերքը»՝ «Երկնային մարմիններ», «Շարժում, փոխազդեցություններ», «Մարմիններ, նյութեր, մասնիկներ»:

Յուրաքանչյուր բաժինը ներկայացված է առանձին թեմաներով: Մենք ձեզ չենք սահմանափակել, թե ո՛ր դասը քանի՛ ժամում պետք է ուսումնասիրել: Ելնելով դասարանի առանձնահատկություններից, սովորողների մտավոր և ֆիզիկական հնարավորություններից, առարկային տրված ընդհանուր և շաբաթական ժամաքանակից՝ ուսուցիչն ինքն է կազմում իր թեմատիկ պլանը և ինքն է որոշում յուրաքանչյուր թեմային կամ դասին տրամադրվող ժամաքանակը: Ուսուցիչն ազատ է և ունի սեփական ժամանակն ու ռեսուրսներն իր հայեցողությամբ կառավարելու հնարավորություն:

Այսուհետ դպրոցը հենքային ուսումնական պլանի հիման վրա կազմելու է իր ուսումնական պլանը, դպրոցն է որոշելու “Ես և շրջակա աշխարհը” առարկայի շաբաթական ժամաքանակը: Հետևաբար ուսուցիչը կարող է բաշխել դասագրքի դասերը տվյալ ուսումնական հաստատության ուսումնական պլանի ժամաքանակին համապատասխան և ըստ այդմ կազմել իր թեմատիկ պլանը: **Բացի այդ, կարողունակահենք կրթության մեջ, ի տարբերություն գիտելիքահենքի, կարևորվում են ոչ թե դասաժամերը, այլ վերջնարդյունքները:**

Ստորև տեղադրված է Թեմատիկ պլանի առաջարկվող օրինակ, որից կարող եք օգտվել ձերը կազմելիս:

Դասագրքում գունային բաժանումներով ներկայացված են թեմաները, որոնք բխում են առարկայի ծրագրից և միտված են ապահովելու չափորոշչային վերջնարդյունքները: Օրինակ՝ առաջին մեծ թեման, որը վերնագրված է «Ես», կազմված է երկու ենթաթեմաներից՝ «Իմ մարմինը և ներաշխարհը» և «Ես ապահով ու անվտանգ եմ»: Վերնագրերը փոքր-ինչ փոփոխված են, բայց բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է ծրագրին:

Դասագրքի առաջին՝ **«Ինչպես սովորել»** հատվածում, որը գունանշված է դեղին գույնով, ներկայացված են ուսումնառության ինը մեթոդները: Դրանք կօգնեն յուրացնել նյութը, ձևավորել հմտություններ, դիրքորոշում և արժեհամակարգ, նպաստել առարկայական և վերառակայական կարողունակությունների ձևավորմանը: Առաջին տասը դասերի ընթացքում ուսումնասիրեք բոլոր մեթոդները՝ յուրաքանչյուր դասին մեկ մեթոդ: Սովորեցրեք այդ մեթոդներով սովորել ոչ միայն «Ես և շրջակա աշխարհը» առարկան, այլև մնացած բոլոր առարկաները: Ընտրված մեթոդները նպաստում են սովորել սովորելու կարողունակության ձևավորմանը:

Յուրաքանչյուր դաս ուսումնասիրելիս մտածեք, երեխաների հետ քննարկեք, թե որ մեթոդին է առնչվում տվյալ դասը, հղում արեք դրան, խրախուսեք դասի ուսումնասիրությունն այդ մեթոդի օգնությամբ, զարգացրեք ինքնուրույն սովորելու կարողություն, նպաստեք սովորել սովորելու կարողունակության ձևավորմանը:

Հիմնական առաջարկվող մեթոդները ինն են, որոնք պատկերավոր ներկայացված են դասագրքում և նշված են հայերեն գլխատառերով՝ Ա-Թ:

Ա-Գտի՛ր տեղեկություններ

Այս մեթոդը ենթադրում է, որ երեխաները պետք է հավաքեն տեղեկություններ տվյալ թեմայի մասին, ինքնուրույն ուսումնասիրեն, հարցնեն մեծահասակներին կամ ընկերներին, հարցնեն մասնագետներին, ուսուցչին, փնտրեն գրքերում, փնտրեն համացանցում:

Բ-Տեղեկություններ վերցրո՛ւ տեքստից

Սրա շրջանակում երեխան պիտի մտածի, թե ինչ է ուզում իմանալ և ձևակերպի հարց, թեմային վերաբերող տեքստը գտնի գրքերում, մատիտով ընդգծի այն բառերը, որոնք չի հասկանում, նշի այն բառերը, որոնք կօգնեն պատասխանել իր հարցին: Այնուհետև պետք է արտագրի այդ բառերը իր տետրում:

Գ-Սովորի՛ր կազմել և կարդալ աղյուսակներ

Այս մեթոդի շրջանակում երեխաները պետք է կազմեն աղյուսակներ, օգտվեն կազմված աղյուսակներից: Սկզբում արեք միասին, հետո խմբով, ապա՝ ինքնուրույն:

Դ-Սովորիր պատրաստել պաստառ

Երեխաները իրենց աշխատանքները պաստառագրում են: Պետք է սովորեցնել նրանց ճիշտ պաստառ պատրաստելու կանոնները՝

1) Գրիր պարզ և մեծ տառերով:

2) Օգտագործիր տարբեր գույներ:

3) Նախ դասավորիր նկարները, հետո՝ փակցրու:

Ե- Ուսումնասիրիր

Այս մեթոդը երեխաներին սովորեցնում է դիտել, վարկածներ առաջադրել, ուսումնասիրել, եզրահանգման գալ: Զարգացնում է դիտողունակությունն ու ուշադրությունը:

Զ-Պլանավորիր և կատարիր փորձեր

Այս մեթոդի միջոցով ձևավորվում են պլանավորման և իրականացման կարողությունները: Երեխաներին տվեք քայլաշար, որով պետք է առաջնորդվեն փորձը կատարելիս.

1) Մտածիր, թե ինչ ես ուզում պարզել:

2) Ենթադրիր:

3) Պլանավորիր:

4) Ստուգիր:

5) Ի՞նչ նկատեցիր:

6) Համեմատիր քո ենթադրության հետ:

Է-Ցուցադրիր և ներկայացրու

Երեխան ներկայացնում է իր աշխատանքը:

Սովորողին կամ խմբին հանձնարարում եք որևէ հետազոտություն կատարել, որը պետք է ներկայացնել ընկերներին: Նրանց տալիս եք աշխատանքը ճիշտ ներկայացնելու առանցքային հարցերը.

Ի՞նչն է ամենակարևորը քեզ համար: Ի՞նչ պետք է իմանան մյուս աշակերտները:

1. Կենտրոնացիր այն ամենի վրա, ինչը ուզում ես ցույց տալ: Մի կողմ դիր ավելորդ իրերը:

2. Սկզբում նշիր քո թեմայի անվանումը, ապա ներկայացրու:

Խոսելիս նայիր մյուս երեխաներին: Խոսիր բարձր, հստակ և դանդաղ: Խոսքդ ձևավորիր նկարներով և առարկաներով:

3. Վերջում պատասխանիր հարցերին:

Ը- Մտածիր, գնահատիր և հիմնավորիր

Երեխաներին սովորեցնում ենք գնահատել, կարծիք հայտնել: Այս ամենը ճիշտ կատարելու համար պետք է նախ ուշադիր լսել միչև վերջ, չընդհատել և միայն խոսքն ավարտելուց հետո արձագանքել: Սկզբում պետք է գովել, ասել աշխատանքի դրական կողմերը, ինչը նրա մոտ լավ ստացվեց: Պարտադիր սովորեցրեք երեխաներին հիմնավորել ասածը: Այնուհետև պետք է անդրադառնալ թերի կողմերին, խորհուրդ տալ, թե ինչ պետք է անել, որպեսզի հաջորդ անգամ ավելի լավ ստացվի ելույթը, պաստառը կամ այլ աշխատանք:

Թ-Հստակ հիմնավորի՛ր պնդումներդ

Այս մեթոդով երեխաներին սովորեցնում ենք կատարել պնդումներ և տալ դրանց հիմնավորումները: Օրինակ, ի՞նչ անել, և ինչո՞ւ դա այդպես անել:

Իհարկե, թվարկված մեթոդները չեն կարող սահմանափակել ուսուցչի ստեղծարարությունն ու երևակայությունը: Ուսումնական գործունեության բոլոր ձևերն էլ կարող են արդյունավետ և կիրառելի լինել կարողունակությունների ձևավորման ճանապարհին:

Ուսուցման լրացուցիչ մեթոդներ ներկայացված են ձեռնարկի Հավելված 3-ում:

8. ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Ստորև առաջարկում ենք օրինակելի թեմատիկ պլանի նմուշ, որը ձեզ կօգնի կազմել ձեր դպրոցին ու դասարանին համապատասխան պլան: Թեմատիկ պլանում կարող եք նաև ընդգրկել յուրաքանչյուր դասին անհրաժեշտ պարագաները, կիրառվող մեթոդները և այլ նյութեր՝ ըստ անհրաժեշտության:

Սույն թեմատիկ պլանը կազմված է՝ հիմք ընդունելով ԿԳՄՍ նախարարի 8 սեպտեմբերի 2020 թ-ի N 28-Ն հրամանը

Առարկա՝ «Ես և շրջակա աշխարհը»

2-րդ դասարան

Ժամաքանակ՝ շաբաթական 2 ժամ /ընդհ. 64 ժամ/*

Թեմա N	Դաս N	Վերնագիր	Էջ	Նշումներ
	1.	Առարկայի ներածություն. Ինչպես սովորել	6	Ծանոթացնել ուսուցման մեթոդներին՝ յուրաքանչյուր դասին մեկ մեթոդ սկզբունքով
1.		***Ես***		(17 ժամ)
1.1		*Իմ մարմինն ու ներաշխարհը*		
	2.	Ով եմ ես	14	
	3.	Հույզեր և զգացմունքներ	18	
	4.	Պատասխանատվ-ություն և հոգա-տարություն	20	
	5.	Ժամանակ	22	
	6.	Իմ զգայարանները	30	
	7.	Առողջ լինելու գաղտնիքները. Մաքրություն և հիգիենա	33	
	8.	Դիտիր, փորձիր, հիմնավորիր	35	

1.2	***Ես ապահով ու անվտանգ եմ***			
	9.	Առողջ սնունդ	38	
	10.	Դիտի՛ր, փորձի՛ր, հիմնավորի՛ր	42	
	11.	Ինչ վտանգներ կան մեր շուրջը	43	
	12.	Երկրաշարժ	48	
	13.	Մաքուր միջավայր	51	
	14.	Վարակիչ հիվանդություններ	56	
	15.	Դիտի՛ր, փորձի՛ր, հիմնավորի՛ր	56	
	16.	Թեմատիկ աշխատանք		
2.	***Ես և մարդիկ***			(15 ժամ)
2.1	***Ես մենակ չեմ***			
	17.	Ընտանիք	58	
	18.	Քաղաք և գյուղ	61	
	19.	Նախագծային աշխատանք «Իմ բնակավայրը»	64	
	20.	Մասնա-գիտություններ	65	
	21.	Տեսարժան վայրեր	68	

2.2	***Միասին ապրելու կանոնները***			
	22.	Ընկերություն: Մենք օգնում ենք իրար	74	
	23.	Արարքներ և հետևանքներ	75	
	24.	Իրավունքներ և պարտա-կանություններ դպրոցում	76	
	25.	Վիճում ենք ու լուծումներ գտնում	79	
	26.	Թեմատիկ գրավոր աշխատանք		
3	***Ես և բնությունը***			(13 ժամ)
3.1	***Բնությունն իմ շուրջը. Կենդանի բնություն***			
	27.	Բնություն	84	
	28.	Բույսեր ***/նախապատրաստել փորձերը/***	88	
	29.	Կենդանիներ	94	
	30.	Բույսերի և կենդանիների փոխադարձ կապը	100	
	31.	Բույսերի և կենդանիների փոխադարձ կապը	103	
	32.	Գործնական աշխատանք / ***փորձերի ամփոփում/***		
	33.	Ապրելու պայմաններ	105	
3.2	***Բնությունն իմ շուրջը. անկենդան բնություն***			

	34.	Անկենդան բնությունը՝ բնակության միջավայր	109	
	35.	Բնության փոփոխությունները	114	
	36.	Բնության պահպանություն. Ի՞նչն է վնասում բնությանը	138	
	37.	Գրքի պատրաստում		Ինտեգրված դաս Տեխնոլոգիա առարկայի հետ
	38.	Նախագծային աշխատանք / թռչունների համար կերամանների պատրաստում/		
	39.	Թեմատիկ աշխատանք		
4		**Ես և տիեզերքը**		(13 ժամ)
4.1		***Շարժում և ուժ***		
	40.	Ուժ	121	
	41.	Շարժում	124	
	42.	Գործնական աշխատանք. Փոխանցումավազք / էստաֆետ/		Ինտեգրված դաս ֆիզկուլտուրա առարկայի հետ
4.2		***Ձայն և լույս***		
	43.	Լույս	127	
	44.	Ձայն	131	
	45.	Լույսի բնական և արհեստական աղբյուրներ	128	

	46.	Գործնական աշխատանք / Ինչպե՞ս տեսնել ձայնը/	133	
4.3	***Մարմիններ***			
	Նյութեր, մասնիկներ			
	47.	Բնական և արհեստական նյութեր		
	Նյութի վիճակ, հատկություն			
	48.	Նյութերի ֆիզիկական հատկությունները	137	
	49.	Գործնական աշխատանք		
	Չափեր, չափումներ			
	50.	Չափիչ գործիքներ	139	
	51.	Ժամանակ, արագություն,	142	
	52.	Հեռավորություն	143	
	53.	Զանգված	144	
	54.	Ջերմություն	145	
	55.	Գործնական աշխատանք		
	56	Թեմաների կրկնություն և ամփոփում		
	57	Թեմատիկ աշխատանք		

*- առարկային տրամադրվող ժամաքանակը որոշվում է հենքային ուսումնական պլանի և Հաստատության ուսումնական պլանի հիման վրա, որը կազմվում է մեթոդմիավորման առաջարկությամբ և մանկավարժական խորհրդի որոշմամբ:

9. ԻՆՉՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌՈՒՑԵԼ ԴԱՍԸ

Ուսումնառության գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից, որը կարելի է պատկերացնել հետևյալ հաջորդականությամբ՝ նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ, դասի ընթացքը և դասից հետո վերլուծություն, ինքնավերլուծություն:

Դասին նախապատրաստվելիս պարտադիր է նյութին մանրամասն ծանոթանալ և դասի ողջ ընթացքը պատկերացնել, սղագրել: Ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է՝ ինչպիսի՞ քաղաքացի ենք ուզում ստանալ, ինչպե՞ս պետք է դա անենք, ի՞նչ է մեզ պետք, ինչպե՞ս ենք ստուգելու արդյունքները:

Այս փուլի կարևոր բաղադրիչ է նաև դասասենյակի նախապատրաստելը, դիդակտիկ նյութերը պատրաստելը, կարգավորելը, այս ամենը կիրառվելիք մեթոդներին համապատասխանեցնելը: Եթե տեխնիկական միջոցներ են օգտագործվելու, ապա պետք է համոզվել, որ դրանք աշխատում են, եթե ինտերնետ կապ է պետք, ապահովել այն և այլն:

Գործնական կամ փորձնական առաջադրանքները պարտադիր ինքներդ փորձեք նախորդ օրը: Եթե աղյուսակ լրացնել եք հանձնարարելու երեխաներին, նախապես ինքներդ լրացրեք, գուցե շտկումների կարիք լինի:

Ստորև նշված հարցերը Ձեզ կօգնեն ավելի հստակ գնահատել դասին պատրաստ լինելը և բարելավել դասի պլանը և բուն դասապրոցեսը.

- Որքանո՞վ են իմ ակնկալիքներն ու սպասումներն իրատեսական:
- Ինչպե՞ս պետք է կառուցեմ դասի ընթացքը:
- Իրատեսակա՞ն է դասի փուլերի ժամային բաշխումը:
- Ինչպե՞ս կարող եմ գնահատել աշակերտների հմտությունների ձեռք բերումը:
- Ինչպիսի՞ վերաբերմունք եմ ուզում ձևավորել:
- Ի՞նչ մեթոդ/ներ/ով կարելի է հասնել ցանկալի վերջնարդյունքի:
- Ի՞նչ առանցքային կարողունակություն են ձևավորում կամ զարգացնում ընտրված մեթոդները:

Դասի ընթացքը

Աշակերտակենտրոն ուսումնառության բուն գործընթացը հիմնականում բաժանվում է հետևյալ պայմանական փուլերի՝ մուտք, հետադարձ կապ, (նոր) նյութի յուրացում, հետադարձ կապ, ամփոփում, անդրադարձ:

Դասը պետք է սկսել մոտիվացնող, հետաքրքրություն առաջացնող վարժությամբ կամ հարց(եր)ով, կամ պատմությամբ (կախված թեմայի բովանդակությունից և պլանավորած մեթոդից): Այնուհետև պետք է սահուն կերպով անցնել բուն ուսումնառության գործընթացին: Անպայման պետք է կապ ստեղծել նախորդ և ուսումնասիրվելիք թեմայի միջև: Հետադարձ կապի միջոցով վեր հանել այն բացթողումները, որոնք կարող են ազդել նոր նյութի ընկալման և կիրառման ունակությունների վրա: Բացթողումները վերացնելուց հետո անցնել նոր ուսումնասիրվելիք նյութի ուսումնառության բուն գործընթացին: Խրախուսվում է երեխաների ինքնուրույն աշխատանքը, ակտիվ մեթոդների կիրառումը:

Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված ուսուցման տեսության տեսանկյունից փոխվում է ուսուցչի դերը: Ուսուցիչը հանդիսանում է սովորողի գործընկերը, նրան սովորեցնում է սովորելու ձևը, ուղղորդում է: Դասի այս փուլում կարևոր է պահպանել սովորողների հետաքրքրվածությունը: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ դասի միջին հատվածում պետք է աշխուժացնող վարժություն կիրառել: Ցանկալի է, հնարավորության դեպքում, ընտրել թեմային առնչվող վարժություն:

Դասի հիմնական նյութի յուրացման ավարտից հետո հետադարձ կապի արդյունքում պարզում ենք բացթողումները, վերացնում ենք դրանք և անցնում առաջ:

Երբ արդեն հնարավոր ամեն ինչ արվել է բոլոր երեխաների մոտ առարկայական չափորոշչով սահմանված պահանջների կատարման ուղղությամբ, ամփոփում եք դասը: Այնուհետև կատարում եք անդրադարձ: Սովորողների հետ վերհիշում եք, թե ինչ արեցիք դասի ընթացքում, ինչպես և ինչու այդպես արեցինք: Երեխաները կարծիք են հայտնում, թե ինչը իրենց դուր եկավ, ինչը չհավանեցին, ինչը այլ կերպ կանեին, ինչպես կվարվեն հաջորդ անգամ:

<u>Յուրաքանչյուր դասից հետո</u> կատարեք ինքնավերլուծություն, ինքնանդրադարձ: Տվեք Ձեզ հետևյալ հարցերը և պլանավորեք հետ ագա անելիքները.

1. Արդյո՞ք դասի վերջնարդյունքները համապատասխանում էին սահմանված նպատակներին:

2. Երեխաների ո՞ր մասը չընկալեց դասի հիմնական գաղափարը:

3. Ինչո՞ւ հենց այդ մասը մնաց անհասկանալի:

4. Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեմ՝ թերությունները վերացնելու համար:

5. Կարողացա՞ հիմք դնել, ձևավորել առանցքային կարողունակություններ:

6. Ինչպե՞ս կանցկացնեմ այդ դասը հաջորդ անգամ:

Շատ կարևոր է դասին նպաստող օժանդակ նյութերի ճիշտ ընտրությունը: Անհրաժեշտ է նաև էլեկտրոնային ուսումնական նյութեր ընդգրկել դասապրոցեսին՝ որպես ցուցադրական, գործնական, քննարկման նյութեր, հնարավորություն տալ սովորողներին ինքնուրույն աշխատել դրանցով: Էլեկտրոնային հարթակները օգտագործել գիտելիքների ձեռք բերման, ստուգման, դասի ամփոփման համար:

10. Ներառականության սկզբունքը ուսումնական գործընթացում

Համընդհանուր ներառական կրթությունը հռչակվում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիությանը, հավասար մասնակցության հնարավորությանը և որակի ապահովմանը:

Հանրակրթության մասին ՀՀ օրենքի համաձայն՝

– կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ՝ խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ

կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձ, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ.

– ներառական կրթություն՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում:

Սիրելի ուսուցիչ, Ձեր աշխատանքի ամենաբարդ կողմերից մեկն էլ ԿԱՊԿՈՒ աշակերտների ներառումն է, նրանց դասավանդումը, հավասար իրավունքների ապահովումը դասարանում, նրանց մասնակցությունն ու սահուն ինտեգրումը հասարակության մեջ: Փորձենք Ձեզ օգնել մի քանի գործնական խորհրդով, որոնք կարող եք կիրառել «Ես և շրջակա աշխարհը» առարկան դասավանդելիս:

1. Օգոստոսի վերջին շաբաթվա ընթացքում փորձեք ուսումնասիրել, թե ինչ կոնկրետ խնդիրներ ունեն Ձեր դասարանի ԿԱՊԿՈՒ աշակերտները, եթե տվյալ դասարանում առաջին տարին եք դասավանդելու: Իսկ եթե արդեն ծանոթ եք տվյալ դասարանին, ուրեմն գիտեք նրանց անհատական առանձնահատկությունները, խնդիրներն ու կարիքները, տիրապետում եք նրանց հետ աշխատելու նրբություններին:

2. Համագործակցեք դպրոցի հոգեբանի, սոցիալական մանկավարժի և բուժքրոջ հետ, ՏՄԱԿ-ի այն աշխատակիցների հետ, ովքեր աշխատում են տվյալ դասարանի

ԿԱՊԿՈՒ սովորեղների հետ: Ակտիվ համագործակցեք մյուս դասավանդող ուսուցիչների հետ: Հնարավորինս շատ մանրամասներ իմացեք աշակերտների առողջական, ֆիզիկական և հոգեհուզական վիճակի, վարքի և բնավորության մասին:

3. Կարդացեք, հետաքրքրվեք ԿԱՊԿՈՒ աշակերտների հիվանդությունների մասին, ուսումնասիրեք տվյալ խնդրի բոլոր առանձնահատկությունները, որպեսզի աշակերտին օգնելու փոխարեն, ավելի շատ չվնասեք:

4. Հաճախ հանդիպեք ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների հետ, փորձեք նրանց դարձնել ձեր համախոհը, ընկերը, շահեք նրանց վստահությունը: Հնարավորություն տվեք պատմելու իրենց երեխաների մասին, այդպիսով՝ դուք կիմանաք բաներ, որոնք չեն դրսևորվում, կամ չեք նկատել դասարանում: Իմացեք՝ ինչ հետաքրքրություններ ու

նախասիրություններ ունեն նրանք: Դա կօգնի Ձեր աշխատանքը ճիշտ կառուցել:

5. Ձևական ԱՈՒՊ-ներ մի կազմեք, սահմանեք փոքր, բայց իրատեսական և մատչելի նպատակներ, ձգտեք անպայման հասնել դրանց:

6. Ամեն անգամ դասապլան կազմելիս Ձեր աչքի առաջ ունեցեք տվյալ դասարանի ԿԱՊԿՈՒ աշակերտին, մտածեք, թե ինչ է անելու նա 45 րոպեի ընթացքում, ինչով է զբաղվելու, ինչպես է դրսևորվելու, ինչ նոր բան է սովորելու:

7. Ընդգրկեք ԿԱՊԿՈՒ աշակերտներին խմբային, համագործակցային աշխատանքներում, տվեք նրանց հստակ հանձնարարություններ, ուղղորդեք մյուս աշակերտներին՝ ընդգրկելու նրանց թիմային աշխատանքներում, տալ թեկուզ փոքրիկ, բայց իրենց ուժերին հարմար ու նրանց ոգևորող հանձնարարություն:

8. Հաճախակի գովեք, խրախուսեք նրա հաջողությունները, այնպես արեք, որ նա և դասարանի մյուս աշակերտները հավատան իրենց ուժերին ու հնարավորություններին:

Բոլոր երեխաներն ունեն հավասար իրավունքներ, այդ թվում նաև կրթություն ստանալու իրավունք: Անհրաժեշտ է օգնել նրանց այդ իրավունքն իրացնելու ճանապարհին:

11. ԿՁՈՒ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առաջարկվող օրինակ

Թեմա-«Բնություն»

Թեմայի ուսումնառության ընթացքում երեխաների մոտ կձևավորվի բնության՝ որպես կարևոր արժեքի, նրան խնամքով վերաբերվելու և այն պահպանելու անհրաժեշտության մասին վերաբերմունք, որը աստիճանաբար կզարգանա և կխորանա ուսումնական տարբեր առարկաների և թեմաների ուսումնառության ընթացքում:

Նպատակը - 1. Սովորողներին օգնել տարբերակել կենդանի և անկենդան բնության, մարդու և բնության ստեղծած օբյեկտները՝ նկարագրելով դրանց առանձնահատկությունները:

Թեմայի վերջնարդյունքները

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. կկարողանան համեմատել և տարբերակել շրջապատի օբյեկտները՝ մարդու և բնության ստեղծած,

2. կկարողանան նկարագրել բնության անկենդան և կենդանի օբյեկտները, կկարողանան տարբերակել դրանք՝ ելնելով դրանց առանձնահատկություններից,

3. կներկայացնեն, թե մարդն ինչ է ստանում բնությունից,

4. կդրսևորեն բնությունը պահպանելու և նրան խնամքով վերաբերվելու վարքագիծ:

Ձևավորվող ***<u>առանցքային կարողունակություններ՝</u>***
լեզվական գրագիտության, մեդիա, մաթեմատիկական և գիտատեխնիկական:

Դասավանդման և ուսումնառության ***<u>մեթոդներ՝</u>***
աշխատանք քարտերով, խաղային մեթոդ

<u>Անհրաժեշտ պարագաներ՝</u>
դասագիրք, կենդանի բնության, անկենդան բնության, անկենդան օբյեկտների նկարներ, գունավոր կպչուն թղթեր, սպիտակ թղթեր և գունավոր մատիտներ, համակարգիչ, պրոյեկտոր (սահիկաշարի ցուցադրության համար):

Ընթացքը

Քայլ	*Դասի փուլեր Գործողություններ*	*Ժամա-նակ*	*Նշումներ*
	Նախապատրաստական մաս (մինչ դասը)		
	·Գրատախտակը բաժանել երկու մասի՝ «Մարդն է ստեղծել» և «Կա բնության մեջ» ·Երեխաներին բաժանել կպչուն թերթիկներ, A4 թերթեր, գունավոր մատիտներ ·Ընտրել նկարելու հարմար տարածք ·Նկար-քարտեր՝ կենդանի բնություն, անկենդան բնություն, անկենդան մարմիններ ·Պատրաստել սահիկաշար ·Փորձարկել համակարգիչը և պրոյեկտորը ·Պաստառի վրա գրված դասի նպատակներն ու վերջնարդյունքները		http://surl.li/hgdlg **-դասի սահիկաշար**
	·Կերպարվեստի ժամին դուրս գալ բակ և նկարել ինչ տեսնում են իրենց շուրջը **կամ** ·Ակտիվ դասամիջոց կազմակերպել և դասից առաջ նկարել		

	Մուտք		
	Բոլոր նկարները հավաքում են իրար մոտ	3ր	Երեխաները նկարները կախում (փակցնում են) են իրար մոտ
	Երեխաներին ներկայացնել դասի նպատակները և վերջնարդյունքները (իրենց տարիքին համապատասխան բառապաշարով): Փակցնել տեսանելի տեղում:	3ր	
	Առաջադրանք՝ Նկարներում պատկերված օբյեկտներից **ընտրեք՝** ինչը կա բնության մեջ, ինչը մարդն է ստեղծել, **գրեք** կպչուն թերթիկների վրա և փակցրեք գրատախտակի համապատասխան մասում	5ր	Երեխաները կպչուն թերթիկների վրա **գրում են** մեկական բառ և փակցնում գրատախտակի համապատաս-խան հատվածում /գրատախտակը բաժանված է երկու մասի/
3	**Նյութի յուրացման ընթացք**		
	Ամփոփելով երեխաների պատասխանները, պարզ արտահայտությամբ ներկայացնել, սովորեցնել՝ ինչ է բնությունը:	3ր	
	Հետադարձ կապ	2ր	Բացահայտել բացթողումները, շտկել դրանք
	Երեխաները պետք է **ներկայացնեն** «բնություն» հասկացությունը		

	Ցուցադրել կենդանի բնության օբյեկտների նկարներ	1ր	Երեխաները **անվանում են** նկարներում պատկերված օբյեկտները
	Առաջադրանք՝ **Համեմատե՛ք**, ինչո՞վ են իրար նման:	5ր	Երեխաները պետք է **հանգեն այն մտքին,** որ բոլոր նշված օբյեկտները շնչում են, սնվում են, շարժվում են, բազմանում են, աճում են, մահանում են. **պետք է սահմանեն, բերեն օրինակներ**
	Սովորողներին ուղղորդել դեպի այն միտքը, որ սրանք ինչ-որ բաներով նման են իրար		
	Հարց՝ Ի՞նչ է անկենդան բնությունը:	3ր	Երեխաները պետք է **սահմանեն** «անկենդան բնությունը», բերեն օրինակներ:
	Հետադարձ կապ	3ր	Բացահայտել բացթողումները, շտկել
	Երեխաները պետք է **հիմնավորեն,** ներկայացնեն «անկենդան բնություն» հասկացությունը		
	Տարբեր նկարների միջոցով **համեմատել** անկենդան բնությունն ու անկենդան մարմինները	5ր	Սովորողները պետք է **համեմատեն, տարբերեն, նկարագրեն և բերեն օրինակներ:**

	Խաղ, ուսուցողական ֆիզդաստար Ցուցադրել տարբեր մարմինների (կենդանի բնություն, անկենդան բնություն, անկենդան մարմին) նկարներ, երեխաները փորձում են **տարբերակել** կենդանի բնությունը, անկենդան մարմինները ու անկենդան բնության մարմինները՝ կատարելով համապատասխան շարժումներ:	3-5ր	Անկենդան բնության մարմնի նկար տեսնելիս ձեռքերը բարձրացնում են վեր, թափահարում, անկենդան մարմնի նկարի դեպքում՝ իջեցնում են վար, թափահարում, կենդանի բնության նկար տեսնելիս՝ ոտքերով երկու անգամ դոփում
	Առաջադրանք՝ **Ներկայացրե՛ք** բնության դերը մարդու կյանքում:	3ր	Նկարների միջոցով օգնել՝ ամբողջացնելու
4	**Ամփոփում**		
	Անդրադառնալ դասի նպատակներին և վերջնարդյունքներին	3ր	Միասին կետ առ կետ **կարդում** եք դրանք: Յուրաքանչյուր կետի շուրջ երեխաները **ներկայացնում են** իրենց սովորածը:
	Գնահատել արդյունքները (բնութագրման միջոցով):		Գնահատել էլեկտրոնային մատյանում

5	**Անդրադարձ**	**2ր**	
	Ինչ արեցինք դասի ընթացքում Ինչպես արեցինք Ինչու այդպես արեցինք		Երեխաները **կարծիք են հայտնում,** թե ինչը իրենց դուր եկավ, ինչը չհավանեցին, ինչը այլ կերպ կանեին, ինչպես կվարվեն հաջորդ անգամ:
6	**Դասից հետո (դասի ինքնավերլուծություն)**		
	Հաջորդ անգամ ի՞նչը կփոխեմ		
	Սահմանված վերջնարդյունքներն ու նպատակները իրատեսական էին		
	Անհրաժեշտ պարագաները լիարժեք էին		
	Ընտրված մեթոդները համապատասխանում էին դասի նպատակներին		
	Ժամանակի կառավարումը արդյունավետ էր		
	Բոլորը դասի ակտիվ մասնակիցներն էին		
	Այլ		

12. Դասագրքի բովանդակության մեկնաբանություն

Խորհուրդ է տրվում ողջ աշխատանքն իրականացնել դասարանում, **տնային աշխատանք չհանձնարարել,** բացառությամբ այն դեպքերի, եթե դա հետազոտական կամ նախագծային աշխատանք է:

«ԵՍ»

Այս գլխի ուսումնասիրության ընթացքում աշակերտների մոտ կձևավորվեն ինքնաճանաչողության և մյուսներին ճանաչելու հմտություններ, առողջ սնվելու, մաքուր և անվտանգ միջավայր ունենալու, ընտրություն կատարելու կարողություններ:

Գլուխը ներկայացված է «Ինքնություն և ինքնաճանաչում» և «Անվտանգություն» բաժիններով, որոնցում ընդգրկված են «Ով եմ ես», «Ես ապահով եմ» բաժինները: Վերջիններս էլ բաժանված են առանձին թեմաների:

«Ես» գլխի ուսուցման համար սահմանված են չափորոշչային հետևյալ նպատակները՝

1. Ձևավորել ինքնաճանաչման, ինքնարժևորման, ինքնագնահատման և ինքնարտահայտվելու հմտություններ, սեփական անհատականությունը բացահայտելու և յուրաքանչյուրի անհատականությունը տեսնելու և գնահատելու ունակություն, յուրաքանչյուրի առանձնահատկությունը հարգելու կարողություն: Օգնել իրենց և ուրիշներին՝ անցյալում, ներկայում և ապագայում դիտարկելուն:

2. Խթանել տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունների տարբերակման, համադրման և կարևորության գիտակցումը:

3. Նպաստել սեփական մարմնի, դրա խնամքի մասին պատկերացումների ու ճանաչողության ընդլայնմանը, ձևավորել անձնական հիգիենայի մասին տարրական գիտելիքներ և հմտություններ:

4. Գաղափար տալ առողջ և անառողջ սննդի, դրա բազմազանության, սննդամթերքի հիմնական խմբերի, սննդակարգի մասին: Խթանել առողջ և անվտանգ սնվելու սովորությունների ձևավորումը. պահպանել սնման նույն պարբերականությունը, կարողանալ ընտրել և գնել օգտակար և թարմ սննդամթերք: Օգնել յուրացնելու, որ սնունդն է ապահովում մեր մարմնի աճը, զարգացումն ու եռանդը:

5. Օգնել ընդլայնելու անվտանգության պարզ կանոնների մասին իմացությունը, կողմնորոշվելու և պահպանելու անվտանգության կանոնները տանը, դպրոցում, փողոցում և բնության գրկում:

6. Ձևավորել երկրաշարժի ժամանակ կողմնորոշվելու, համապատասխան գործողություններ կատարելու և ցուցումներին հետևելու հմտություններ:

7. Օգնել գիտակցելու շրջակա միջավայրի (աղտոտման և մաքրության) ազդեցությունը առողջության վրա, ինչպես նաև իմանալու որոշ վարակիչ հիվանդությունների տարածման և կանխարգելման ուղիների մասին:

Սահմանված են չափորոշչային հետևյալ <u>վերջնարդյունքները</u>.

1. Նկարագրել իրեն, իր զբաղմունքները, նախասիրությունները, հետաքրքրությունները, համեմատել մյուսների հետ:

2. Տարբերակել և արտահայտել իր զգացմունքներն ու հույզերը տարբեր միջոցներով (խոսքով, հայացքով, ժեստերով, միմիկայով):

3. Տարբերակել իր անցյալը, ներկան և ապագան, նկարագրել իրադարձությունները տարբեր ժամանակներում:

4. Կազմել օրվա ռեժիմ՝ ճիշտ բաշխելով օրը աշխատանքի, հանգստի, զբաղմունքի, քնի միջև:

5. Տարբերակել և համադրել տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները:

6. Բացատրել, որ մարմինն աշխատող համակարգ է, և բոլոր մասերը գործում են փոխկապված:

7. Մտորել հաշմանդամություն կամ զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց մասին, պատրաստակամ լինել հեշտացնելու այլոց պայմանները և հավասար հնարավորություններ ապահովելու բոլորի համար:

8. Հիմնավորել, որ հիգիենայի պահպանումը՝ հաճախակի լվացվելը, մաքուր կենցաղը, առողջության գրավականներից մեկն է:

9. Տարբերակել և ունենալ անձնական հիգիենայի անհատական պարագաներ, բացատրել դրանց անհրաժեշտությունը:

10. Ցուցադրել ձեռքերը և ատամները ճիշտ լվանալու շարժումները:

11. Պահպանել անձնական հիգիենան, մարմնի խնամքը. տեսողություն, լսողություն, կեցվածք, բերանի խոռոչ, մաշկ, մազեր, եղունգներ և այլն:

«Արի ծանոթանանք»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Ձևավորել ինքնաճանաչման, ինքնարժևորման, ինքնագնահատման և ինքնարտահայտվելու հմտություններ, սեփական անհատականությունը բացահայտելու և յուրաքանչյուրի անհատականությունը տեսնելու և գնահատելու ունակություն, յուրաքանչյուրի առանձնահատկությունը հարգելու կարողություն:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները՝

1. **Կնկարագրեն** իրենց, իրենց զբաղմունքները, նախասիրությունները, հետաքրքրությունները, **կհամեմատվեն** մյուսների հետ:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն ինքնաճանաչողական և սոցիալական, լեզվական գրագիտության ***առանցքային կարողունակություններ***:

Անհրաժեշտ նյութեր

Գունավոր թերթիկներ, պարան, ամրակներ: Դեղին թղթերից կտրտված կամ երեխաների կողմից տանը նկարված արևիկներ:

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Սովորողները **կներկայացնեն** նկարում պատկերված երեխաներին, նրանց զբաղմունքներն ու նախասիրությունները՝ պատկերված հուշող իրերի օգնությամբ (գնդակ, ջութակ,

գունավոր մատիտներ և ալբոմ, բասկետբոլիստի նկար):

Սովորողները զույգեր կկազմեն, միմյանց հարցեր կտան, տեղեկություններ կիմանան ընկերների, նրանց սիրած զբաղմունքների մասին և կներկայացնեն միմյանց: Այսպիսով նրանք հնարավորություն կունենան ճանաչելու իրենք իրենց և դասընկերներին:

Սովորողները **կմեկնաբանեն,** թե ինչ են հասկանում «նախասիրություն» ասելով: Ըստ նկարների՝ կգուշակեն Արամի և Կարինեի նախասիրությունները, կպատմեն, թե ինչպես կռահեցին:

Գունավոր թերթիկների վրա կգրեն իրենց նախասիրությունները, ինչով են զբաղվում ազատ ժամանակ կամ ինչ խմբակ են հաճախում, կփակցնեն պարանին: Ապա կշրջեն ու կծանոթանան դասընկերների գրածներին, **կհամեմատեն** ու կգտնեն, թե ում նախասիրությունն է նման կամ տարբեր մյուսներից, քանի հոգի ունի նույն նախասիրությունները և այլն: Այս վարժությունը ինքնաճանաչողության, ինքն իրեն ներկայացնելու, ինքնադրսևորվելու, ինքնագնահատման, մյուսներին ճանաչելու և գնահատելու նպատակ ունի:

Դերային խաղը հնարավորություն է տալիս ինքնադրսևորվելու անծանոթ միջավայրում, ներկայանալու և ծանոթանալու այլոց հետ: Ուսուցիչը դասարանում բեմադրում է իրավիճակ՝ անծանոթ միջավայր, որտեղ բոլորը պետք է փորձեն ծանոթանալ միմյանց հետ, ներկայանալ, շփվել:

Արևի շողեր

Երեխաները պետք է միմյանց ջերմացնող խոսքեր ասեն: Յուրաքանչյուր երեխա մտածում և ասում է. «Ես արևի շող եմ ուղարկում .....ին, քանի որ նա է .... »:

Ուսուցիչը կարող է նախապես կտրատած արևիկներ բաժանել աշակերտներին, կամ աշակերտները կարող են իրենց հետ նկարած արևներ բերել: Կարող են նաև արևիկների վրա գրել միմյանց ջերմացնող բառեր:

«Հույզեր և զգացմունքներ»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Ձևավորել իր և ուրիշների հույզերն ու զգացմուքները ճանաչելու, արտահայտելու և ապրումակցելու կարողություններ:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները՝

1. **Կնկարագրեն** և կկառավարեն հույզերը, **կբացատրեն**, որ ուրիշներն էլ ունեն նույն հույզերը, կկարողանան ապրումակցել:

2. **Կտարբերակեն** և **կարտահայտեն** իրենց զգացմունքներն ու իրենց հույզերը, տարբեր միջոցներով (խոսքով, հայացքով, դիմախաղով):

- Տվյալ թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն ինքնաճանաչողական և սոցիալական, լեզվական գրագիտության ***առանցքային կարողունակություններ***:

Անհրաժեշտ նյութեր

Ստվարաթղթից պատրաստած կամ https://wordwall.net գործիքի օգնությամբ ստեղծած «հույզերի անիվ»:

Նկարներում պատկերված են փոքրիկ իրավիճակներ: Սովորողները պետք է նայեն նկարները և պատմեն, թե որ իրավիճակում հերոսներն ինչ են զգում: Կարող են հերոսներին նոր անուններ տալ կամ հիշել նրանց անունները առաջին դասից:

- Աղջիկն **ուրախություն** է զգում, երբ զբոսնում է հայրիկի հետ. հայրիկը նրա համար պաղպաղակ է գնել, նրանք ուրախ զրուցելով քայլում են այգում:
- Երեխաները ծաղրում են մի տղայի, նեղացնում են նրան, իսկ երկրորդ տղան **տխրում** է այդ տեսնելով: **Տխրում** է նաև ծաղրանքի ու հալածանքի ենթարկվող տղան:
- Աղջիկը անկողնում պառկած է: Նրա կիսամութ սենյակի ստվերները սարսափելի պատկերների են նման: Աղջիկը **վախենում** է մթությունից և այդ ստվերներից:
- Աղջիկը զատիկների մասին նյութ է կարդում և իմանալով, որ զատիկները սնվում են վնասակար միջատներով, շատ է **զարմանում**:
- Տղաներից մեկը աղբը գետնին է գցում, մյուսը **զայրանում** է նրա վրա և պահանջում աղբը գցել աղբամանի մեջ:
- Տղան **ձանձրանում** է. նա մենակ է մնացել, հետը խաղացող չկա:

Նկարները մեկնաբանելուց հետո սովորողները կսահմանեն, թե որոնք են **հույզերն ու զգացմունքները:**

Հարկ է նկատել, որ նկարները ոչ միայն զգացմունքների և հույզերի մասին են, այլև այնպիսի կարևոր արժեքների, ինչպիսիք են՝ ընտանիքը, ընկերությունը, մաքուր միջավայրը, ընթերցասիրությունը և այլն: Նկարների

միջոցով սովորողներին հնարավորություն է տրվում խոսել, քննարկել, արտահայտել սեփական կարծիքներն ու դիրքորոշումները, բանավիճել, եզրակացություններ-ի հանգել: Հաճախ նրանք կարող են նկատել այնպիսի նրբություններ, որոնք մեծահասակները չեն տեսնում կամ ուշադրություն չեն դարձնում:

«**Հույզերի անիվը**» խաղ է: Դուք կարող եք այն պատրաստել ստվարաթղթից կամ կամ ստեղծել https://wordwall.net գործիքի օգնությամբ: Սովորողները հերթով կպտտեն անիվը և կպատմեն, թե երբ են նրանք ունենում տվյալ զգացմունքը: Այս խաղը հնարավորություն է տալիս ճանաչել սեփական հույզերը, խոսել դրանց մասին, նկատել, որ ուրիշներն էլ կարող են ունենալ նույն հույզերը:

«**Ապրումակցում**» հասկացությունը հեղինակների կողմից փոխարինվել է «**Պատասխանատվություն և հոգատարություն**» բառերով՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից և նպատակ ունենալով երեխաների մեջ սերմանել այն համոզմունքը, որ բոլորս պատասխանատու ենք մեր ընկերների, մեր հարազատ մարդկանց համար թե՛ տխուր ու դժվար պահերին, թե՛ ուրախ ու հաջողակ օրերին, մենք պետք է հոգատար լինենք նրանց նկատմամբ, հարգենք նրանց զգացմունքներն ու հույզերը:

Նկարներում իրավիճակներ են.

- Երեխաներից մեկն ընկել է, Արամն ու Լիլիթը անտարբեր չեն, փորձում են օգնել, կանչել ուսուցչուհուն և այլն:
- Անին շունիկ ունի, Արթուրն ուրախ է, չի նախանձում, իսկ կերակրելուց առաջ անպայման հարցնում է տիրոջ թույլտվությունը:
- Կարենը մոռացել է նախաճաշ բերել, Կարինեն հյուրասիրում է, կիսում նրա հետ իր ուտելիքը:

- Արամն ու Լիլիթը կարուսելի վրա են, Լիլիթը վախենում է բարձրությունից, իսկ Արամը նրան հանգստացնում է, ցույց է տալիս գեղեցիկ տեսարանը, ամեն բան անում է, որ Լիլիթը չվախենա:
- Արամի դասընկերներից մեկը ոտքը վնասել է, հենակով դժվարանում է բարձրանալ աստիճաններով: Արամը նրան սիրով օգնում է:

Սովորողները **կպատմեն** նկարներում պատկերված իրավիճակները, **կներկայացնեն,** թե որտեղ նկատեցին հոգատարություն, որտեղ՝ պատասխանատվություն, **կհիմնավորեն** իրենց տեսակետները:

Չափազանց կարևոր է հենց այս տարիքում սովորեցնել ապրումակցել և պատասխանատվություն կրել շրջապատող մարդկանց համար:

Դասը կարելի է ամփոփել **«Զվարճալի դիմախաղով»**: Դուք ասում եք որևէ հույզ կամ զգացմունք արտահայտող բառ, աշակերտները փորձում են դա ցուցադրել դիմախաղով: Խաղը նպաստում է, որ երեխաները կարողանան արտահայտել և ճանաչել իրենց և դիմացինի զգացածը ոչ միայն բառերով, այլև դիմախաղով և այլ միջոցներով:

«Ժամանակ»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Օգնել՝ իրենց և ուրիշներին անցյալում, ներկայում և ապագայում դիտարկելուն:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները՝

1. **Կտարբերակեն** անցյալը, ներկան և ապագան, **կնկարագրեն** իրադարձությունները տարբեր ժամանակներում:

2. **Կկազմեն** օրվա ռեժիմ՝ ճիշտ բաշխելով օրը աշխատանքի, հանգստի, զբաղմունքի և քնի միջև:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն մաթեմատիկական և գիտատեխնիկական, մշակութային ***առանցքային կարողունակություններ***:

Անհրաժեշտ նյութեր

Նախապես գծված աղյուսակներ՝ օրվա ռեժիմ գրելու և շաբաթվա իրադարձությունները նկարագրելու համար:

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Մուտքի նկարում պատկերված է տեսարան, որտեղ ժամանակն ամեն բան խառնել է իրար: Մի հատվածում տոնածառ է, հատակը պատված է ձյունով, սակայն մարդիկ զբոսնում են ամառային հագուստով, արևահարվում են՝ լողազգեստով պառկած: Մի հատվածում աշուն է, տերևաթափ, իսկ ծառի տակ երեխաները ձվակռիվ են խաղում: Մեկ ուրիշ մասում գարնանային ծաղկած ծառ է, դրա տակ՝ մրգերով լի զամբյուղ և ձնեմարդ պատրաստող տղա: Սովորողները պետք է փորձեն գտնել սխալները, ուղղեն դրանք, խոսեն տարվա եղանակների և բնության փոփոխությունների մասին:

Սովորողները նախ **կգտնեն** սխալները, **կհիմնավորեն** իրենց պատասխանները և **կուղղեն** այդ սխալները: Այդ ընթացքում նրանք կխոսեն տարվա եղանակներից, բնության փոփոխություններից, տոներից և այլն:

Ժամանակի մասին գիտելիքները կառուցվել են **«Օր-շաբաթ-ամիս-եղանակ-տարի»** շղթայով:

Նկարներով ներկայացված է **Արամի օրը**: Երեխաները կպատմեն այն՝ օգտագործելով օրվա մասեր նշանակող բառերն ու հասկացությունները, ինչպես օրինակ՝ *լուսաբաց, առավոտ, կեսօր, երեկո, գիշեր:* Ապա Արամի երկուշաբթի օրվա ռեժիմի օրինակով կկազմեն իրենցը՝ ճիշտ բաշխելով օրը աշխատանքի, հանգստի, զբաղմունքի և քնի միջև: Կսովորեն ճիշտ տնօրինել ժամանակը:

«Շաբաթ» ենթաթեմայի ընթացքում կսովորեն շաբաթվա օրերը, ըստ նկարների կպատմեն, թե ինչ է արել Լիլիթը շաբաթվա ընթացքում, և ինչ է նա պատմում հեռախոսով իր անցնող շաբաթվա մասին: Այստեղ կկիրառվեն *երեկ, այսօր, վաղը* բառերը, շաբաթվա օրերը, տարբեր ժամանակներում տեղի ունեցող իրադարձությունները: Դասարանում կբեմադրեն հեռախոսային զրույց՝ զույգեր կազմելով: Հարց պատասխանի միջոցով կներկայացնեն անցնող շաբաթը:

Ապա կգծեն աղյուսակ, կնկարեն կամ կգրեն այն, ինչ արել է յուրաքանչյուրը անցնող շաբաթվա ընթացքում և կներկայացնեն ընկերներին: Պատմելու ընթացքում պետք է կիրառել *այսօր, երեկ, վաղը, երկու օր առաջ կամ մի քանի օր հետո* բառերն ու հասկացությունները: Սա կնպաստի **անցյալ, ներկա և ապագա** հասկացությունների ընկալմանը:

Օրվա ռեժիմը և Անցնող շաբաթը ներկայացնող աղյուսակները կազմելիս կարելի է վերադառնալ «Ինչպես սովորել» հատվածի «Գ.Սովորի՛ր կազմել և կարդալ աղյուսակներ»

մեթոդին, վերհիշել, ապա կատարել հանձնարարությունները:

«Տարվա եղանակներ, ամիսներ, տոներ»

Սովորողները կխոսեն տարվա եղանակների, ամիսների ու բնության երևույթների մասին: Կհամեմատեն տարվա եղանակները: Կնշեն, թե որ եղանակն են ամենից շա սիրում և ինչո՞ւ:

Կնկարագրեն պատկերված տոները, կպատմեն՝ երբ և ինչպես են դրանք նշվում: Կփորձեն հիշել՝ էլ ինչ տոներ կան, որոնք պատկերված չեն դասագրքում, կպատմեն՝ ինչպես են դրանք նշվում և այլն: Ձմռան տոներից պատկերված են Ամանորը, Սուրբ ծնունդը, Հայոց բանակի տոնը, գարնան տոներից՝ Զատիկն ու Մարտի 8-ը, աշնան տոներից՝ Գիտելիքի և դպրոցության տոնը, Ուսուցչի տոնը, ամռան տոներից՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, Վարդավառը: Անհրաժեշտ է մանրամասն խոսել այս տոների մասին, դրանց հետ կապված ավանդույթների, սովորույթների, լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել դրանց մասին: Հատկապես մարտի 8-ի մասին խոսելիս կարևոր է հիշել, որ այն ծագել է Կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված շարժումից: Աշակերտները պետք է թվարկեն նաև այն տոները, որոնք այս նկարում պատկերված չեն, պատմեն դրանց մասին:

«Անցյալ, ներկա, ապագա»

Նկարների և տեղեկատվության միջոցով սովորողները կպատմեն՝ ինչպիսին էր Տիգրանը 7 տարի առաջ: Պետք է նշել, որ իրերը, նկարները, հարազատների հուշերն ու պատմությունները մեզ տեղեկատվություն են տալիս մեր անցյալի մասին:

Ապա հանձնարարեք ***հետազոտական աշխատանք՝*** **«Իմ առաջին ծննդյան օրը»** թեմայով: Այդ նպատակով երեխաներն իրենց հարազատներից կհետաքրքրվեն,

կփնտրեն նկարներ, գրառումներ առաջին ծննդյան օրվա մասին: Կստեղծեն նկարների ու փաստերի շարք, կցուցադրեն ու կպատմեն այդ մասին դասընկերներին:

Նկարների շարքին սովորողները կավելացնեն նաև ներկայի մասին պատմող նկարներ. կպատմեն ինչով են սիրում զբաղվել իրենք, և ինչպիսին են հիմա: Ապա կխոսեն նաև այն մասին, թե ինչ են ուզում դառնալ ապագայում և ինչու: Կծավալեն քննարկում, կհամեմատվեն միմյանց հետ, կգտնեն նմանություններ և տարբերություններ:

Այս դասը կապեք դասագրքի դասագրքի՝ «Ինչպես սովորել». «հատվածի Է. Ցուցադրի՛ր և ներկայացրո՛ւ» (էջ 11) և «Ը.Մտածի՛ր, գնահատի՛ր և հիմնավորի՛ր» (էջ 12)մեթոդների հետ: Կարող եք նորից հետ գնալ, հիշել կարևոր խորհուրդները և առաջնորդվել դրանցով:

Այս թեմային կարելի է անդրադառնալ նաև ֆինանսական կրթության տեսանկյունից: *Ներկան է ձևավորում ապագան*: Կարելի է խոսել խնայողության մասին: Ծրագրում առկա առաջարկվող գործունեության ձևերից ելնելով կարելի գործնական ճանապարհով սովորեցնել տարբերակել կարիքն ու ցանկությունը:

«Զգայարաններ»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1.Խթանել տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունների տարբերակման, համադրման և կարևորության գիտակցումը:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները՝

1 **Կթվարկեն** զգայարանները, **կտարբերակեն** դրանցով ստացվող տեղեկությունները՝ որպես աշխարհը ճանաչելու միջոց:

2 **Կտարբերակեն** և **կհամադրեն** տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, **կհետազոտեն** ու **կներկայացնեն,** որ նույն տեղեկությունը կարելի է տարբեր զգայարաններով ստանալ:

3. **Կբացատրեն**, որ մարմինն աշխատող համակարգ է, և բոլոր մասերը գործում են փոխկապակցված:

4. **Կմտորեն** հաշմանդամություն կամ զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց մասին, պատրաստակամ կլինեն նրանց պայմանները հեշ տացնելու և հավասար հնարավորություններ ապահովելու համար:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն մաթեմատիկական և գիտատեխնիկական, ինքնաճանաչողական և սոցիալական ***առանցքային կարողունակություններ:***

Անհրաժեշտ նյութեր

«**Գուշակի՛ր, թե ինչ է**» խաղի համար նախապես պետք է ունենալ քնելու դիմակ, ականջների խցաններ, բամբակ, թմփուկ կամ դհոլ, ապակյա տարաներ, բաժակներ, թղթեր, ուլունքներ, կտոր, տուփեր, կիտրոն, խնձոր, կոնֆետ, աղ, պղպեղ, սուրճ, բրինձ կամ այլ հատիկեղեն: Կարելի է ավելացնել էլի իրեր ըստ երևակայության:

Սովորողները նկարների միջոցով կառանձնացնեն մարդու հինգ զգայարանները՝ բերան-համի զգայարան, աչք-տեսողություն, ականջ-լսողություն, քիթ-հոտառություն, ձեռք-շոշափելիք: Կկարդան յուրաքանչյուր նկարի մոտ զետեղվեղած բառերը և նկարներին նայելով, կներկայացնեն, թե ո՛ր զգայարանով ի՛նչ տեղեկատվություն ենք ստանում: Օրինակ՝ բերանի և լեզվի օգնությամբ մենք զգում ենք, որ կիտրոնը թթու է, կոնֆետը՝ քաղցր, պանիրը աղի է, իսկ պղպեղն ու բողկը՝ կծու:

Սովորողները նկարների օգնությամբ կպատմեն, թե ինչպես է մարդն աշխարհն ընկալում: Ձեր ուղղորդմամբ կնկատեն, որ միևնույն երևույթը հնարավոր է ընկալել մի քանի զգայարանների համադրությամբ: Օրինակ՝ կիտրոնի մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու համար համը զգում ենք բերանով, հոտը՝ քթով, աչքերով տեսնում ենք գույնը, ձեռքերով շոշափում ենք ձևը: Նույն կերպ քննարկեք մյուս նկարները: Հարցերն այնպես ուղղեք, որ աշակերտներն իրենք հանգեն ճշմարտությանը:

«**Գուշակի՛ր, թե ինչ է**» խաղի համար նախապես պետք է սեղանին դրվեն քնելու դիմակ, ականջների խցաններ, բամբակ, թմբուկ կամ դհոլ, ապակյա տարաներ, բաժակներ, թղթեր, ուլունքներ, կտոր, տուփեր, կիտրոն, խնձոր, կոնֆետ, աղ, պղպեղ, սուրճ, բրինձ կամ այլ հատիկեղեն: Կարելի է ավելացնել էլի իրեր՝ ըստ երևակայության: Պետք է փակել աչքերը կամ ականջները, փակել բերանը կամ կապել ձեռքերը և փորձել ճանաչել իրը կամ բնութագրել այն: Երեխաները կարող են իրենք սահմանել խաղի կանոնները:

Խաղի արդյունքում կհանգեն եզրակացության, որ բոլոր զգայարանները փոխկապակցված են, եթե որևէ զգայարան լավ չի գործում կամ չի մասնակցում տեղեկատվության ընկալմանը, ապա դժվարանում է ճանաչման գոր-

ծընթացը, բայց նաև սրվում և ավելի են ուժեղանում մյուս զգայարանները: Օրինակ՝ եթե փակ են աչքերը, մարդը սկսում է ավելի շատ օգտագործել համի, հոտի, շոշափելիքի զգայարանները:

Սա կնպաստի նաև հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ապրումակցման ձևավորմանը:

«Առողջ լինելու գաղտնիքները»

«Հիգիենա»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Նպաստել սեփական մարմնի, դրա խնամքի մասին պատկերացումների և ճանաչողության ընդլայնմանը, ձևավորել անձնական հիգիենայի մասին տարրական գիտելիքներ և հմտություններ:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները՝

1. **Կտիրապետեն** անձնական հիգիենայի կանոններին, **կհիմնավորեն** հիգիենայի, ֆիզիկական ակտիվության և կոփման անհրաժեշտությունը՝ որպես առողջությունը պայմանավորող կարևոր գործոններ:

2. **Կհիմնավորեն**, որ հիգիենայի պահպանումը՝ հաճախակի լվացվելը, մաքուր կենցաղը, առողջության գրավական է:

3. **Կտարբերակեն** և կունենան անձնական հիգիենայի անհատական պարագաներ, **կբացատրեն** դրանց անհրաժեշտությունը:

4. **Կցուցադրեն** ձեռքերը և ատամները ճիշտ լվանալու շարժումները:

5. Կպահպանեն անձնական հիգիենան և մարմնի խնամքը (տեսողություն, լսողություն, կեցվածք, բերանի խոռոչ, մաշկ, մազեր, եղունգներ և այլն):

6. Պատրաստ կլինեն ամեն օր մարմնամարզությամբ զբաղվելու, կոփվելու և հաճախ գտնվելու մաքուր օդում:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական ***առանցքային կարողունակություններ:***

Անհրաժեշտ նյութեր

Սանր, բամբակ և խոզանակ:

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Նկարները մեկնաբանելու միջոցով բացատրեք, թե ինչ է հիգիենան, և ինչի համար է այն անհրաժեշտ: Ապա սովորողները կներկայացնեն հիգիենայի պարագաները, կպատմեն, թե երբ և ինչպես են դրանք օգտագործում, կսովորեն, որ յուրաքանչյուրը պետք է ունենա իր անձնական հիգիենայի պարագաները, դրանք պետք է մաքուր պահի և խնամքով վերաբերի դրանց:

Գործնական աշխատանքներն անվանել ենք ***«Դիտիր, փորձիր, հիմնավորիր»:*** Այսուհետ դասագրքում այդ վերնագրին հանդիպելիս պետք է նկատի ունենալ, որ դրանք գործնական աշխատանքներ են:

Գործնական աշխատանքի միջոցով սովորեցրե՛ք ճիշտ

խոզանակել ատամները: Այդ նպատակով պետք է նախապես հանձնարարել դպրոց բերել սանր, բամբակ և խոզանակ: Սովորողները պետք է բամբակը մտցնեն սանրի ատամների մեջ՝ այսպիսով պատկերացնելով, որ բամբակի շերտերը սննդի մնացորդներն են ատամների արանքներում, ապա խոզանակով, վերևից ներքև շարժումներով պետք է հեռացնեն բամբակի կտորները: Բացատրեք, որ ատամները ևս պետք է խոզանակել վերևից ներքև՝ «Կարմիրից սպիտակ», այսինքն՝ լնդերից ատամներ, որպեսզի չմնասվեն ու սխալ չձևավորվեն: Նշեք, որ պետք է ատամները լվանալ ամեն անգամ ուտելուց հետո, առավոտյան՝ արթնանալուց հետո և երեկոյան՝ քնելուց առաջ:

Այս գործնական աշխատանքի արդյունքում սովորողների մոտ կձևավորվի ատամները ճիշտ մաքրելու հմտություն:

Նկարների միջոցով սովորողները **կտարբերակեն** ատամների արտաքին, ներքին և ծամող մակերեսները, **կնկարագրեն**, թե դրանցից որն ինչպես պետք է խոզանակել, ինչ շարժումներով, օդում **կցուցադրեն** այդ շարժումները:

Կարող եք ցուցադրել տեսանյութեր, որտեղ մանրամասն ներկայացվում է ատամների մաքրման եղանակը:

Օգտակար հղումներ՝ https://www.youtube.com/watch?v=gRWVCY_w-II&t=31s

«Մաքուր կենցաղ»

Պատկերված են միևնույն սենյակի երկու տարբեր նկարներ, որոնցից մեկում ամեն բան մաքուր, կոկիկ ու գեղեցիկ դասավորված է, իսկ մյուսում թափթփված, կեղտոտ ու խառն է: Սովորողները **կհամեմատեն** նկարները, կգտնեն այդ նկարներում առկա տարբերությունները:

«Ո՞ր նկարն է ձեզ ավելի դուր գալիս», «Ո՞ր սենյակում կուզեիք ապրել, ինչո՞ւ» և այլ ուղղորդող հարցերի ու քննարկումների միջոցով սովորողները կհանգեն եզրակացության, որ մաքուր կենցաղը առողջության գրավականն է: Պետք է շուրջը մաքուր պահել, հավաքել ու դասավորել թափթփված իրերը:

«Սպորտ և մարզումներ»

Նկարները պատմելու և հարցերով մեկնաբանելու միջոցով կարևորեք առավոտյան մարմնամարզության, մաքուր օդում քայլելու, վազելու, հեծանիվ վարելու կարևորությունը առողջության համար: Խոսեք սպորտաձևերից: Զրույց ծավալեք, թե ով ինչ սպորտաձև է սիրում, ինչով է զբաղվում, ինչով է հետաքրքրված և այլն: Կարող են նկարել իրենց սիրած սպորտաձևը, հետաքրքիր տեղեկություններ ներկայացնել այդ սպորտաձևերի, հայտնի մարզիկների կյանքի մասին:

Թեման ամփոփել և ստուգել թեստերի* օգնությամբ:

«Ես ապահով ու անվտանգ եմ»

«Առողջ սնունդ»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Գաղափար տալ առողջ և անառողջ սննդի, դրա բազմազանության, սննդամթերքի հիմնական խմբերի, սննդակարգի մասին: Խթանել առողջ և անվտանգ սնվելու սովորությունների ձևավորումը. պահպանել սնման նույն պարբերականությունը, կարողանալ ընտրել և գնել օգտակար և թարմ սննդամթերք: Օգնել յուրացնելու, որ սնունդն է ապահովում մեր մարմնի աճը, զարգացումն ու եռանդը:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները՝

1. **Կբացատրեն** առողջ սնուցման բաղադրիչները՝ բազմազանությունը, սննդակարգը, ընդունման պարբերականությունը և անվտանգությունը:

2. **Կբացատրեն**, որ սնունդն ապահովում է օրգանիզմի էներգիան, վերջինս էլ ապահովում է ֆիզիկական ակտիվությունը:

3. **Կներկայացնեն** ջրի նշանակությունը մարդու օրգանիզմի համար:

4. **Կնկարագրեն՝** ինչպիսին պետք է լինի առողջ և սննդարար ուտելիքի պարունակությունը, սննդակարգը, **կկարևորեն** նախաճաշելու սովորությունը:

5. **Կխմբավորեն** սննդամթերքը հիմնական խմբերում՝ հացեղեն-ձավարեղեն, ձու-մսեղեն-լոբազգիներ, միրգ-բանջարեղեն, կաթնեղեն, յուղեր:

6. **Կտարբերակեն** կենդանական և բուսական ծագման սննդատեսակները:

7. **Կբացատրեն** սննդի ընդունման նույն պարբերականության պահպանման կարևորությունը:

8. Գնումներ կատարելիս ճիշտ **ընտրություն կանեն՝** կընտրեն առողջ սնունդ:

9. **Կտարբերեն** փչացած սնունդը և չեն ուտի:

10. **Կբացատրեն**, որ սնունդը և ջուրը անհրաժեշտ են մեր մարմնի աճի, զարգացման և եռանդի համար:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն ինքնաճանաչողական և սոցիալական, մշակութային կարողունակություն, սովորել սովորելու ***առանցքային կարողունակություններ:***

Անհրաժեշտ նյութեր

1. Նախապես գծված աղյուսակներով թղթեր՝ «*Կենդանական ծագման մթերքներ*» և «*Բուսական ծագման մթերքներ*» սյուներով:

2. Ամսագրերից կտրատված ուտելիքների նկարներ, գունավոր թղթեր, ստվարաթուղթ, մկրատ և սոսինձ:

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Սովորողների հետ միասին ուսումնասիրեք «Առողջ ափսեն»: Պետք է ուշադրությունը կենտրոնացնել այն փաստի վրա, ամենից շատ պետք է ուտել մրգեր և բանջարեղեն: Այդ պատճառով ափսեի ուղիղ կեսը բաղկացած է մրգերից ու բանջարեղենից: Ընդ որում՝ պետք է նշել, որ շաբաթվա ընթացքում մարդը պետք է ուի ծիածանի բոլոր գույներն ունեցող մրգերից ու բանջարեղենից:

Ապա պետք է նշել, որ ափսեի քառորդ մասը կազմում են ամբողջահատիկ ցորենի այլուրից թխված հացը կամ թխվածքը, մակարոնեղենը և այլ հացահատիկներ: Իսկ մյուս քառորդը զբաղեցնում են կաթնամթերքը, ձուն, ձուկը, միսը, լոբին: Խոսեք ջրի կարևորության մասին, նշեք, որ օրվա ընթացքում պետք է խմել մի քանի բաժակ ջուր:

Առողջ սնունդը անպայման պետք է համադրել ֆիզիկական ակտիվության հետ՝ զբաղվել սպորտով, շատ քայլել, վազել, հեծանիվ վարել և այլն:

Մեկնաբանեք ափսեի յուրաքանչյուր խմբի կարևորությունն ու օգտակարությունը մեր օրգանիզմի համար: Ծինանյութի, մարտկոցի և անձրևանոցի նկարները պատկերավոր են դարձնում սննդի նշանակությունը մեր մարմնի համար: Սովորողները **կընթերցեն** և **կմեկնաբանեն:**

Առողջ սնվելու համար սահմանված են հիմնական կանոններ՝

1. Կե՛ր մտածված և **բազմազան:** 2.Կե՛ր **չափավոր:** 3.Կե՛ր **կանոնավոր:**

Առաջին կանոնը պետք է կապել «Առողջ ափսեի» հետ. նշեք, որ բոլոր մթերքներից էլ մարդը պետք է ուտի, բայց հստակ իմանալով, թե ո՛ր սննդամթերքից՝ որքա՛ն: Սա անվանում ենք *ճիշտ սննդակարգ*:

Երկրորդ կանոնը մեկնաբանելիս խոսեք ճարպակալումից, գիրանալուց, ինչպես նաև թերսնուցման հետևանքներից:

Երրորդ կանոնը սովորելիս կարևորեք նախաճաշելու մշակույթը և նույն ժամերին, նույն պարբերականությամբ, ռեժիմով սնվելու սովորությունը: Խոսեք երեկոյան քնելուց անմիջապես առաջ ուտելու բացասական հետևանքների մասին:

Յուրացված տեղեկատվությունն ամրապնդեք «Ձվարճալի սխալներ» վարժության միջոցով: Երեխաները կկարդան նախադասությունները, կասեն, թե որ պնդումն է ճիշտ, որը՝ սխալ, կհիմնավորեն իրենց պատասխանները:

Կենդանական ծագման և բուսական ծագման մթերքները **տարբերակելու** համար նախ մեկնաբանեք, թե որոնք են դրանք, թվարկեք օրինակներ: Ապա սովորողները **կգծեն** աղյուսակ (կարող եք նախապես գծված աղյուսակներով

թղթեր բաժանել), **կընտրեն** տրված նկարներից և **կլրացնեն** աղյուսակի համապատասխան սյունակները:

Հարկավոր է զրուցել ճաշելու կարևորության մասին: Կարելի է խոսել “Դպրոցական սնունդ” ծրագրի շրջանակներում տրվող ուտելիքների, դրանց օգտակարության և կարևորության մասին: Ապա յուրաքանչյուրը **կպատմի**, թե ինչ է իր հետ բերում դպրոց, դրանց օգտակարության և վնասակարության մասին: Նայելով նկարներում պատկերված ուտելիքի տուփերին՝ կորոշեն, թե ի՞նչն է վնասակար, և ինչո՞վ կարելի է այն փոխարինել:

Գործնական աշխատանքի համար անհրաժեշտ է նախապես ունենալ ամսագրերից կտրատված ուտելիքների նկարներ, գունավոր թղթեր, ստվարաթուղթ, մկրատ և սոսինձ: Աշակերտներն ինքնուրույն կձևավորեն իրենց «Առողջ ափսեն», ապա կհիմնավորեն իրենց ընտրությունը: Կարելի է աշխատել նաև զույգերով կամ փոքր խմբերով: Կարող են գունավոր թղթերի վրա նկարել մթերքները, վրան գրել համապատասխան մթերքի անվանումը, կտրել և սոսնձել ափսեի վրա: Ուշադրություն դարձրեք ոչ միայն մթերքներին, այլև դրանց ճիշտ չափաքանակներին:

Օգտակար հղում՝ https://schoolfeeding.am/aroxj-snund/

«Ինչ վտանգներ կան մեր շուրջը»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Օգնել ընդլայնելու անվտանգության պարզ կանոնների մասին իմացությունը, կողմնորոշվելու և պահպանելու անվտանգության կանոնները տանը, դպրոցում, փողոցում և բնության գրկում:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները՝

1. **Կթվարկեն**, թե ինչերը կարող են վտանգավոր լինել տանը, դպրոցում և փողոցում:

2. **Կառանձնացնեն**, **կխմբավորեն** անվտանգության կանոնները, կպատմեն, թե ինչ պետք է անել:

3. **Կլրացնեն** համապատասխան վտանգի դեպքում օգնության հեռախոսահամարները: **Կնշեն**, որ օգնություն պետք է խնդրել միայն վստահելի մեծահասակից:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա ***առանցքային կարողունակություններ:***

Անհրաժեշտ նյութեր

1. Զգուշացնող կամ արգելող նշաններով ցուցանակներ

2. Առաջին օգնության հեռախոսահամարներով ցուցանակներ կամ պաստառ

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Դասը կարող եք սկսել վտանգների մասին զրույցով. ի՞նչ ենք հասկանում վտանգ ասելով, ի՞նչ վտանգներ գիտենք և այլն:

Առօրյայում հանդիպող վտանգները բաժանված են խմբերի՝ վտանգներ տանը, փողոցում, դպրոցում, բնության մեջ և համացանցում:

Վտանգներ տանը

Դասն սկսելուց առաջ անդրադարձ կատարեք դասագրքի «Ինչպես սովորել» բաժնի մեթոդներից «Թ. Հստակ հիմնավորի՛ր պնդումներդ» մեթոդին: Վերհիշե՛ք պնդումներ և հիմնավորումներ կատարելու նրբությունները:

Ապա կազմե՛ք զույգեր: Յուրաքանչյուր զույգից մեկը նկարների շուրջ կանի **պնդումներ**, իսկ մյուսը **կհիմնավորի** այդ պնդումները: Միասին կքննարկեն վտանգները և դրանցից խուսափելու տարբերակները:

Մասնավորապես խոսեք հրդեհի, դրա բռնկման պատճառների և հետևանքների մասին: Դասարանում միասին սահմանեք հրդեհից զգուշանալու կանոններ: Ինչպես նաև սովորողների հետ միասին ուշադիր կարդացեք ու մտապահեք, թե ինչ պետք է անել, եթե արդեն հրդեհ է բռնկվել, անգիր սովորեցրեք և հաճախակի կրկնեք առաջին օգնության հեռախոսահամարները: Համագործակցեք դպրոցի զինղեկի հետ, գործնականում կիրառեք ստացված գիտելիքները՝ դարձնելով դրանք հմտություններ:

Վտանգները դպրոցում

Զրուցեք այն մասին, թե ինչ վտանգներ կան կամ կարող են լինել դպրոցում:

Սովորողները կներկայացնեն դասի նկարներում պատկերված վտանգները, ձեր ուղղորդող հարցերի օգնությամբ կխոսեն դրանց պատճառների ու հետևանքների մասին, կհանգեն եզրակացությունների: Օրինակ՝

1. ***Քիմիական փորձը չի կարելի իրականացնել առանց ուսուցչի:***

2. ***Չի կարելի նստել աստիճանների բազրիքներին կամ սահել դրանց վրայով:***

3. *Աթոռի վրա կանգնելը վտանգավոր է և անթույլատրելի:*

4. *Հարբուխ ունենալու կամ հիվանդ լինելու դեպքում պետք է մնալ տանը և բուժվել: Վարակիչ հիվանդությունները նույնպես վտանգ են բոլորի համար:*

5. *Միջանցքներով վազելը, միմյանց հրմշտելը վտանգավոր է բոլորի համար, հատկապես եթե դպրոցում սովորում են նաև հաշմանդամություն ունեցող երեխաներ:*

Սովորողները միասին կսահմանեն կարգապահական կանոններ դպրոցում, կպատրաստեն պաստառ, կփակցնեն դասարանում և կառաջնորդվեն այդ կանոններով:

Պաստառ պատրաստելու կանոնները վերհիշելու համար անդրադառնալ «Ինչպես սովորել» բաժնի «Դ. Սովորիր պատրաստել պաստառ» մեթոդին:

Վտանգները փողոցում

Սովորողները զրույցի միջոցով **կբացահայտեն**, թե ինչ վտանգներ կարող են հանդիպել փողոցում: Նկարներում **կգտնեն** այդ վտանգները արտացոլող պատկերներ, **կներկայացնեն** ու **կխոսեն** դրանցից զգուշանալու մասին: Օրինակ՝

1. *Մեքենայի միջից չի կարելի դուրս հանել ձեռքը, գլուխը:*

2. *Խաղալ կարելի է բակի այն հատվածներում, որտեղով մեքենաները չեն երթևեկում:*

3. *Եթե փողոցում հեծանվուղի չկա, ապա պետք է վարել հետիոտների համար նախատեսված հատվածներով, բայց զգույշ և չվտանգելով անցորդներին:*

4. ***Փողոցը պետք է անցնել միմիայն լուսակրի (հետիոտների համար նախատեսված) կանաչ լույսի ժամանակ :***

5. ***Հատկապես պետք է զգուշանալ անծանոթ մարդկանցից, ովքեր կարող են ներկայանալ ծնողներիդ ընկերը կամ բարեկամը, և կոնֆետ կամ այլ համեղ բան առաջարկեն:***

Ծանոթացրեք ճանապարհային անվտանգության պարզ կանոններին, ցուցադրեք և բացատրեք անվտագության նշանները, որոնք ամենաշատն են հանդիպում: Պետք է անգիր հիշել ոստիկանության համարը: Ձևավորեք ոստիկաններին դիմելու մշակույթ, եթե փողոցում հայտնվել եք վտանգավոր իրավիճակում:

Վտանգներ բնության մեջ

Սովորողները կդիտեն նկարը, կպատմեն, թե ինչ վտանգներ կարող են հանդիպել բնության մեջ: Օրինակ՝ ***խարույկի չհանգցրած մնացորդները, վայրի գազանները, անծանոթ սնկերն ու բույսերը, անզգույշաբար ծառ մագլցելը, առանց մեծահասակի մնալն ու մոլորվելը, կենդանիներին գազազեցնելը և այլն:*** Յուրաքանչյուր դեպք առանձին քննարկեք, օգնեք հիշել իրավիճակներ իրենց կյանքից, խոսեք այն մասին, թե ինչպես կարելի է զգուշանալ նման վտանգներից և կանխարգելել դրանք: Այս դեպքերում ևս կարող է օգտակար լինել զգուշացնող նշանների իմացությունը:

Վտանգները համացանցում

Այս թեման դասագրքում ներառված չէ, սակայն կարելի է անհրաժեշտության դեպքում անդրադառնալ դրան՝ որպես լրացուցիչ նյութ: Ցանկալի է հատվածն ուսումնասիրելիս համագործակցել ԹԳՀԳ կամ Ինֆորմատիկա առարկայի ուսուցչի հետ:

Ժամանակակից կրտսեր դպրոցականները համացանցում հիմնականում խաղեր են խաղում, երբեմն նաև սոցիալական ցանցերից են օգտվում: Պետք է խոսել համացանցային բոլոր հնարավոր վտանգների մասին, զգուշացնել, որ չի կարելի պատասխանել և կոնտակտի մեջ մտնել անծանոթ մարդկանց հետ, գովազդները չբացել, տեղեկատվություն փնտրելիս անպայման դիմել մեծահասակների օգնությանը և աշխատել նրանց ներկայությամբ: Բացի այդ, պետք է խոսել նաև ֆիզիոլոգիական վնասներից: Համակարգչի կամ հեռախոսի առջև երկար նստելը կարող է հանգեցնել տեսողության վատացման, ճարպակալման, ողնաշարային խնդիրների և անքնության:

«Երկրաշարժ»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Ձևավորել երկրաշարժի ժամանակ կողմնորոշվելու, համապատասխան գործողություններ կատարելու և ցուցումներին հետևելու հմտություններ:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները՝

1. **Կկիրառեն** անվտանգության կանոններ, որոնք պետք են երկրաշարժի ժամանակ տանը, դպրոցում կամ փողոցում:

   - Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն թվային և մեդիա, մաթեմատիկական և գիտատեխնիկական ***առանցքային կարողունակություններ:***

Անհրաժշետ նյութեր

1. Մուլտֆիլմ/ տեսաֆիլմ դիտելու համար անհրաժշետ ՏՀՏ միջոցներ՝ պրոյեկտոր, էկրան, բարձրախոսներ:

2. Երկրաշարժի մասին որևէ մուլտֆիլմ կամ տեսաֆիլմ:

3. Հարցաթերթիկներ՝ հարցազրույցի համար նախատեսված հարցերով, պատասխանների համար նախատեսված տեղերով:

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Կարդացե՛ք դասանյութը, վերլուծեք: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ երկրաշարժի առաջացման աշխարհագրական պատճառները մանրամասն ներկայացված չեն: Սակայն ուսուցիչը կարող է օգտվել տարբեր աղբյուրներից, ցուցադրել տեսանյութեր, հրավիրել մասնագետների՝ ելնելով դասարանի առանձնահատկություններից:

Օգտակար հղում՝ «Երկրաշարժ» մուլտֆիլմ https://youtu.be/Ll2yfLlYTaA

Պատմեք Սպիտակի 1988 թվականի երկրաշարժի մասին:

Որպես ***հետազոտական աշխատանք***՝ հանձնարարեք իրականացնել **հարցազրույց** մեծահասակների հետ **«Ինչպե՞ս պաշտպանվել երկրաշարժից»** թեմայով: Հարցազրույցի համար առաջարկվող հարցերը տրված են դասագրքում: Հաջորդ դասին ներկայացնել հարցազրույցները, ամբողջացնել և կազմել կանոնների ամբողջական պաստառ:

Կարելի է համագործակցել դպրոցի զինղեկի հետ, ձեռք բերված գիտելիքները կիրառել գործնականում, մասնակ-

ցել “Ուսումնական տագնապ” համադպրոցական միջոցառումներին:

«Մաքուր միջավայր»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Օժանդակգնել գիտակցելու շրջակա միջավայրի (աղտոտման և մաքրության) ազդեցությունը առողջության վրա, ինչպես նաև իմանալու որոշ վարակիչ հիվանդությունների տարածման և կանխարգելման ուղիների մասին:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները կկարողանան՝

1. Օրինակներ բերել վարակիչ հիվանդությունների փոխանցման և դրանց կանխարգելման ուղիներից (օրինակ՝ հիգիենա, պատվաստում):

2. Բացատրել, որ առողջությունը կախված է նաև շրջակա միջավայրի մաքրությունից:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, թվային և մեդիա, մաթեմատիկական և գիտատեխնիկական ***առանցքային կարողունակություններ:***

Անհրաժեշտ նյութեր

1. Աղբի տեսակավորման տուփեր՝ համապատասխան պիտակներով. ***Թուղթ, Պլաստիկ, Ապակի*** ...

2. Մուլտֆիլմ դիտելու համար ՏՀՏ միջոցներ՝ պրոյեկտոր, էկրան, բարձրախոսներ,

3. Ալյուր՝ փորձի համար

4. Օգտակար հղում՝ Մուլտֆիլմ «Մաքուր միջավայր» https://youtu.be/txSiVtX6VJE

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Սովորողները կպատմեն և կվերլուծեն նկարները, կհիմնավորեն, թե ինչու է կարևոր մաքուր օդը: Նկարներում պատկերված են *մաքուր օդում զբոսնող,* ***մարզվող, հեծանիվ վարող, բաց պատուհանի ներքո քնած երեխաներ:*** Էջում նաև ներկայացված է հետաքրքիր փաստ, թե որքան կարող է մարդը գոյատևել առանց օդի: Սովորողներին հանգեցրեք այն մտքին, որ շատ կարևոր է մաքուր պահել օդը: Խոսեք օդի աղտոտման պատճառներից՝ ներկայացնելով նկարների բովանդակությունը: Ծավալեք կլոր սեղան-քննարկում **«Ի՞նչ անել օդը մաքուր պահելու համար»** թեմայով: Ձևավորեք բանավիճելու, միմյանց լսելու, վերլուծելու, կարծիքը փաստերով հիմնավորելու, այլ կարծիքներ լսելու կարողություններ:

Այնուհետև անցում կատարեք միջավայրի մաքրության թեմային:

Խոսեք պլաստիկի վնասակարության մասին, դրա քայքայման առանձնահատկությունների մասին:

- Խոսեք կենցաղային աղբի մասին, աղբի տեսակավարման ձևերի ու կարևորության մասին:
- Դասարանում կամ միջանցքում տեղադրեք աղբի տեսակավորման համար տուփեր՝ նախատեսված թղթի, պլաստիկի, մետաղների, ապակու և խառը աղբի համար:

- Կազմակերպեք դրանց տեղափոխումը վերամշակման արտադրամասեր:
- Կարելի է կազմակերպել նաև ուսումնական էքսկուրսիաներ՝ թղթի, պլաստիկի, ապակու վերամշակման գործընթացներին ծանոթացնելու նպատակով:

Ապակու վերամշակման գործընթացը լուսանկարներով ներկայացված է դասագրքում: Պատմեք այդ մասին առավել մանրամասն:

«Ո՞րն է էկոլոգիապես մաքուր ու ճիշտ» վարժության միջոցով սովորողների մեջ կձևավորվեն **ընտրություն կատարելու, որոշում կայացնելու, ընտրությունը հիմնավորելու** կարողություններ, էկոլոգիական դաստիարակություն, միջավայրը մաքուր պահելու մշակույթ:

Սովորողները կընտրեն այն, ինչն էկոլոգիապես ավելի ճիշտ է. *թղթե կամ կտորե էկոտոպրակը, թղթե բաժակը, բազմակի օգագործման մետաղյա շիշը:* Շատ կարևոր է, որ նրանք հիմնավորեն իրենց ընտրությունը՝ մաքուր միջավայր ունենալու տեսանկյունից:

Սովորողները կպատմեն նկարների բովանդակությունը, կներկայացնեն բովանդակությունը, կհամեմատեն, կգտնեն տարբերություններ, կարծիքներ ու դիրքորոշումներ կհայտնեն, կկարևորեն մաքուր միջավայր ունենալը, այն մաքուր պահելու անհրաժեշտությունը:

Կարող են դիտել մաքուր միջավայրի կարևորության մասին զանազան մուլտֆիլմեր ու տեսաֆիլմեր: Օրինակ՝ Մուլտֆիլմ «Մաքուր միջավայր» https://youtu.be/txSiVtX6VJE

Հարկավոր է պարբերաբար կազմակերպել շաբաթօրյակներ ու մաքրության օրեր դպրոցի հարակից բակում, համայնքի տարբեր հատվածներում:

«Վարակիչ հիվանդություններ»

Սովորողները կթվարկեն վարակիչ հիվանդություններ, որոնք հանդիպում են առօրյայում. հարբուխ, հազ, ջրծաղիկ, թագավարակ և այլն: Պետք է նշել, որ դրանք տարածվում են օդակաթիլային եղանակով, միմյանց հետ շփվելով:

Այլուրով **փորձի** նպատակն է տեսանելի դարձնել մանրէների փոխանցումը, տարածումը:

Պետք է սովորողները մի ձեռքը թաթախեն ալյուրի մեջ, ապա բարևեն ընկերներին սեղմելով մաքուր ձեռքը, ալյուրոտ ձեռքերով կպչեն իրենց և ընկերների դեմքին, բռնեն բռնակը և այլն, այնպես, որ ալյուրի հետքերը մնան և տեսանելի լինեն: Այդպիսով ցույց կտաք, թե ինչպես են մանրէները փոխանցվում մեկից մյուսին, տարածվում և դառնում վարակիչ հիվանդությունների պատճառ:

Քննարկեք վարակիչ հիվանդություններից պաշտպանված լինելու ուղիները: Խոսեք նաև պատվաստումների կարևորության մասին: Ապա նկարների և տեսանյութերի միջոցով երեխաները կսովորեն ձեռքերը ճիշտ լվանալու կանոնները:

Համացանցում բազմաթիվ տեսանյութեր կան, որտեղ ցուցադրվում են ձեռքերը ճիշտ լվանալու կանոնները: Օրինակ՝ https://www.youtube.com/watch?v=y-o0YsKhFDo

Դասարան հրավիրեք դպրոցի բուժքրոջը, ով կպատմի վարակիչ հիվանդությունների, դրանց տարածման, դրանցից խուսափելու և պաշտպանվելու կանոնների մասին:

Դասարանում սահմանեք վարակիչ հիվանդություններից պաշտպանվելու կանոններ:

*Թեման ամփոփել թեստի միջոցով:

«ԵՍ ՄԵՆԱԿ ՉԵՄ»

Այս գլխի ուսումնասիրության ընթացքում աշակերտների մոտ կձևավորվեն ընտանիքի, համայնքի, հայրենիքի նկատմամբ, դպրոցի և ընկերների հետ հարաբերություններում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սերը, հոգատարությունը, պատասխանատվությունը, այլոց իրավունքները հարգելը, որոշումներ կայացնելը, պայմանավորվածություններ ձեռք բերելն ու դրանք պահպանելը, սեփական արարքների հետևանքները գիտակցելը, հայրենաճանաչողությունն ու հայրենասիրությունը:

Գլուխը ներկայացված է «Փոխհարաբերություններ» բաժնով, որն էլ բաղկացած է «Ընտանիք», «Համայնք», «Դպրոց», «Իրավունքներ», «Կոնֆլիկտ» բաժիններից: Սրանք էլ իրենց հերթին ներկայացված են «Ես մենակ չեմ», «Դպրոցն ու ընկերներս» թեմաներով, վերջիններս էլ՝ առանձին ենթաթեմաներով:

«Ես մենակ չեմ» գլխի ուսուցման համար սահմանված են չափորոշչային հետևյալ <u>նպատակները՝</u>

1. Երեխաների պատկերացումներում հստակեցնել եւ ամբողջացնել տուն, ընտանիք, տոհմ, գերդաստան գաղափարները, ձեւավորել դերերի գիտակցման, սեփական դերին համապատասխան գործողությունների, ընտանեկան տոների, հանգստի, ժամանցի կազմակերպման, ինչպես նաև՝ ազգականների հետ արդյունավետ շփման եւ հոգատար վերաբերմունք դրսևորելու հմտություններ:

2. Ընդլայնել գիտելիքները սեփական բնակավայրի, մարդկանց, զբաղմունքների, սովորույթների, առանձնահատկությունների, տեսարժան վայրերի, բուսական և կենդանական աշխարհի մասին՝ ձևավորելով հոգատար, խնայող եւ պատասխանատու վարքագիծ:

3. Ձևավորել իսկական ընկերոջ մասին պատկերացումներ, օգնել ձեռք բերելու ընկերներ և պահպանելու ընկերությունը:

4. Օգնել գիտակցելու, որ ընկերությունը պայմանավորված չէ սեռով, թե՛ աղջիկները, թե՛ տղաները կարող են լավ ընկերներ լինել:

5. Ձևավորել դրական վերաբերմունք՝ հասարակական կանոններին հետևելու, դրանքիկարևորելու հարցի նկատմամբ, իրենց և ուրիշների իրավունքները պաշտպանելու անհրաժեշտության գիտակցություն, իրավունքների և պարտականությունների փոխկապվածության ընկալում և բարեկիրթ շփման մշակույթ և հմտություններ:

6. Օգնել հասկանալու արարքների եւ հետեւանքների կապը, օրինակներով ցույց տալ, թե արարքներն ինչ հետեւանքներ կարող են ունենալ՝ թե արարքները դրական և բացասական ինչ հետևանքներ կարող են ունենալ:

7. Ձևավորել փոխադարձ վստահության մթնոլորտ, որն էական է ընկերական փոխհարաբերություններում եւ կոնֆլիկտները խաղաղ հարթելու հիմք է, ստեղծել իրավիճակներ վեճերի խաղաղ լուծման ձևեր փնտրելու, գտնելու վերաբերյալ:

Սահմանված են չափորոշչային հետևյալ ***<u>վերջնարդյունքները</u>***՝

1. Բացատրել, որ ընտանիքները կարող են տարբեր լինել ըստ կազմի (մեծ, փոքր, երկու ծնողով, մեկ ծնողով, առանց ծնողի ընտանիքներ, ազգականներ):

2. Բացատրել ընտանիքի անդամների դերերը (այդ թվում՝ սովորողի), իրավունքներն ու պարտականությունները կանանց եւ տղամարդկանց հավասարության տեսանկյունից:

3. Նկարագրել, թե ինչպես են իրենց ընտանիքները կազմակերպում հանգիստը, ժամանցը, տոները:

4. Ցուցաբերել հոգատար վերաբերմունք ծնողների, տատիկ-պապիկների, քույրերի ու եղբայրների նկատմամբ:

5. Նկարագրել իր բնակավայրը, մարդկանց, զբաղմունքները, սովորույթները:

6. Կողմնորոշվել տարածքում, իմանալ տան, դպրոցի հասցեն, կարողանալ կարդալ ցուցանակները, իմանալ կանոնները, դրանց պահպանման կարևորությունը:

7. Պարզ բացատրություններ տալ, թե ինչի համար են դպրոցը, հիվանդանոցը, բանկը, ոստիկանությունը, զբոսայգին:

8. Համեմատել եւ բնութագրել քաղաքի եւ գյուղի տարբերությունները, առանձնահատկությունները:

9. Թվարկել եւ նկարագրել իր բնակավայրի տեսարժան վայրերն ու հուշարձանները, բնակավայրի բնությունը, բույսերն ու կենդանիները:

10. Ցուցաբերել պատասխանատու, խնայող եւ հոգատար վերաբերմունք հայրենի բնակավայրի, շրջակա միջավայրի եւ բնակիչների հանդեպ:

11. Նկարագրել եւ օրինակներ բերել, թե ինչը կարող է օգնել կամ խանգարել ընկերությանը:

12. Բնութագրել, թե ինչպիսին պետք է լինի ընկերը, որ որակներն են բնորոշ լավ ընկերոջը, եւ բացատրել, որ դրանք պայմանավորված չեն սեռով:

13. Արդյունավետ շփվել, կարողանալ լսել միմյանց, հար-

գել միմյանց կարծիքը, հաշտության ճանապարհներ գտնել:

14. Հարգել միմյանց տարբերությունները, նշել, որ բոլորը տարբեր կարողություններ ունեն, նաեւ հաշմանդամություն եւ զարգացման առանձահատկություններ ունեցող մարդիկ:

15. Պահպանել, կիրառել դասարանական եւ քաղաքավարության կանոնները, պատրաստակամ լինել խմբով կամ զույգերով աշխատելիս:

16. Մեկնաբանել, թե արարքներն ինչ հետեւանքներ կարող են ունենալ, թե՛ դրական, թե՛ բացասական:

17. Նկարագրել յուրաքանչյուրի դերը, իրավունքները, պարտականությունները դպրոցում, դասարանում, նշել դրանց կարեւորությունը:

18. Խուսափել վեճերից, կռիվներից, փորձել խոսել, հաշտվել միմյանց հետ:

19. Բացատրել՝ ինչ է կոնֆլիկտը եւ դրանք խաղաղ լուծելու ձևեր գտնել:

«Ես մենակ չեմ»

«Ընտանիք»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Երեխաների պատկերացումներում հստակեցնել և ամբողջացնել տուն, ընտանիք, տոհմ, գերդաստան գաղափարները, ձևավորել դերերի գիտակցման, սեփական դերին համապատասխան գործողությունների, ընտանեկան տոների, հանգստի, ժամանցի կազմակերպման, ինչպես նաև ազգականների հետ արդյունավետ շփման և

հոգատար վերաբերմունք դրսևորելու հմտություններ:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները կկարողանան՝

1. **Բացատրել**, որ ընտանիքները կարող են տարբեր լինել ըստ կազմի (մեծ, փոքր, երկու ծնողով, մեկ ծնողով, առանց ծնողի ընտանիքներ, ազգականներ):

2. **Բացատրել** ընտանիքի անդամների դերերը (այդ թվում՝ իր), իրավունքներն ու պարտականությունները կանանց և տղամարդկանց հավասարության տեսանկյունից:

3. **Նկարագրել**, թե ինչպես են իրենց ընտանիքները կազմակերպում հանգիստը, ժամանցը, տոները:

4. **Ցուցաբերել** հոգատար վերաբերմունք՝ ծնողների, տատիկ-պապիկների, քույրերի ու եղբայրների նկատմամբ:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձեւավորվեն ժողովրդավարական քաղաքացիական, մշակութային,տնտեսական ***առանցքային կարողունակություններ:***

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Նկարներում պատկերված են տարբեր կազմով ընտանիքներ՝ մեծ, փոքր, երկու ծնողով, մեկ ծնողով, առանց ծնողների, տատիկ և պապիկ, ազգականներ և այլն: Օգնեք սովորողներին նկարագրել կանանց և տղամարդկանց հավասարության տեսանկյունից ընտանիքի ան-

դամների դերերը, կարիքները, իրավունքներն ու պարտականությունները: Ձևավորեք հոգատարություն, պատասխանատվություն ընտանիքի անդամների նկատմամբ: Պատմեք իրենց ընտանիքների, ընտանեկան սովորույթների ու ավանդույթների մասին:

Կարինեի ընտանիքը. Կարինեի ընտանիքը մեծ չէ՝ հայրիկը, մայրիկը և ինքը: Կարինեն հաշմանդամություն ունի: Այսօր նրա ծննդյան օրն է: Նրանք հյուրերի են սպասում: Մայրիկն ու հայրիկը ամեն բան անում են, որ Կարինեի տոնը ուրախ անցնի: Նրանք զարդարել են սենյակը, սեղան են բացել, հիմա էլ փուչիկներ են փչում: Կարինեն նաև ծննդյան տորթ ունի: Նրանք շատ ուրախ են:

Հայկի ընտանիքը. Հայկի ընտանիքը շատ փոքր է: Նա ապրում է մայրիկի հետ: Մայրիկը վատառողջ է, և Հայկը հոգ է տանում նրա մասին: Նա մայրիկի համար թեյ է պատրաստել:

Կարենի ընտանիքը փոքր է, բաղկացած է երկու անդամից: Կարենն ու իր հայրիկը սիրում են ազատ ժամերին տարբեր խաղեր խաղալ: Հիմա էլ նրանք խճանկար (փազլ) են հավաքում: Կարենը շատ ուրախ է: Նա շատ է սիրում իր հայրիկին:

Սոսեի ընտանիքը. Սոսեն ապրում է տատիկի ու պապիկի հետ: (Սովորողները կարող են հորինել, թե որտեղ են Սոսեի ծնողները): Երեկո է: Պապիկը հեռուսատցույց է դիտում, իսկ տատիկը Սոսեի համար հեքիաթ է կարդում: Սոսեն այնքան շատ է սիրում իր տատիկին ու պապիկին:

Անիի ընտանիքը. Անին ապրում է եղբոր ու մայրիկի հետ: Նրանք վերանորոգում են բնակարանը: Անին ու եղբայրը օգնում են մայրիկին: Անիի եղբայրը սոսնձում

է պաստառները, մայրիկը փակցնում է դրանք պատերին, իսկ Անին կտորով մաքրում է սոսնձի հետքերը: Սա նպաստում է կանանց և տղամարդկանց դերերի հավասարության ընկալմանը:

Արամի ընտանիքը նկարում չի երևում: Սովորողներն իրենք կարող են երևակայել, պատմել այնպես, ինչպես ուզում են: Սա հնարավորություն կտա նրանց խոսել հենց իրենց հուզող խնդիրների մասին: Արամը գնել է մթերք, բերել է խոհանոց և պատրաստվում է տեղավորել դրանք իրենց տեղերում: Սա կարևոր է նաև դերերի ու հավասար պարտականությունների տեսանկյունից:

Մարիամի ընտանիքը մեծ է՝ տատիկ, պապիկ, հայրիկ, մայրիկ, Մարիամը, իր քույրն ու եղբայրը: Նրանք այնքան համերաշխ ընտանիք են: Երեկոյան բոլորը հավաքվում են հյուրասենյակում: Մարիամը տատիկի հետ է զրուցում, պատմում է, թե ինչպես է անցել իր օրը: Հայրիկը օգնում է եղբորը՝ դասերը սովորել: Մայրիկը պապիկին թեյ է հյուրասիրում: Իսկ փոքրիկ քույրիկը խաղում է իր արջուկով: Նրանք չափազանց հոգատար են միմյանց հանդեպ:

Հնարավորություն տվեք սովորողներին՝ հարցերի միջոցով խոսել, կարծիքներ հայտնել և հիմնավորել դրանք: Ձևավորեք հոգատարություն ու հարգանք ընտանիքի անդամների նկատմամբ:

«Ընտանեկան տոներ»

Նկարներում ընտանիքներ են՝ դարձյալ տարբեր կազմով: Նշում են տոներ՝ Ամանոր, Սուրբ զատիկ, Ծննդյան օր: Պատմել նկարները՝ նշելով քանի անդամից է բաղկացած ընտանիքը, ովքեր են այդ անդամները, ինչպես են նշում տոները, ձևավորել սեր, հոգատարություն, պատասխա-

նատվություն ընտանիքի անդամների հանդեպ: Հիշել, թե ինչ տոներ են նշվում իրենց ընտանիքում և ինչպես, ինչ համեղ ու ավանդական կերակրատեսակներ են լինում սեղանին, ինչ երգեր են երգում կամ լսում, ինչ պարեր են պարում: Կարևորել ազգային ծեսերը, տոները, ազգային ավանդույթները, երգերն ու պարերը:

Դասարանում ազգային փոքրամասնություններ ունենալու դեպքում ձևավորել հարգանք այլ ազգերի ավանդույթների ու տոների նկատմամբ:

Գործնական աշխատանք: Նկարել կամ լուսանկարներով պաստառ պատրաստել, ներկայացնել դասարանում:

«Քաղաք և գյուղ»

Ինչպե՞ս հասնել դպրոց...

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Ընդլայնել գիտելիքները սեփական բնակավայրի, մարդկանց, նրանց զբաղմունքների, սովորույթների, առանձնահատկությունների, տեսարժան վայրերի, բուսական և կենդանական աշխարհի մասին՝ ձևավորելով հոգատար, խնայող և պատասխանատու վարքագիծ:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները կկարողանան՝

1. **Կողմնորոշվել** տարածքում, **իմանալ** տան, դպրոցի հասցեն, կարողանալ **կարդալ** ցուցանակները, **իմանալ** կանոնները, դրանց պահպանման կարևորությունը:

2. **Պարզ բացատրություններ տալ**, թե ինչի համար են դպրոցը, հիվանդանոցը, բանկը, ոստիկանությունը, զբոսայգին:

3. **Նկարագրել** իր բնակավայրը, մարդկանց, զբաղմունքները, սովորույթները:

4. **Համեմատել** և **բնութագրել** քաղաքի և գյուղի տարբերությունները, առանձնահատկությունները:

5. **Թվարկել** և **նկարագրել** իր բնակավայրի տեսարժան վայրերն ու հուշարձանները, բնակավայրի բնությունը, բույսերն ու կենդանիները:

6. **Ցուցաբերել** պատասխանատու, խնայող և հոգատար վերաբերմունք հայրենի բնակավայրի, շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն թվային և մեդիա, ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային ***առանցքային կարողունակություններ:***

Անհրաժեշտ նյութեր

1. Գունավոր մատիտներ, գունավոր ու սպիտակ թղթեր, մկրատ, սոսինձ:

2. *Հարցաթերթիկ*

1.Մասնագիտություն _____

2.Որտե՞ղ ես աշխատում _____

3.Ի՞նչ պարտականություններ ունես _____

4.Դու կրո՞ւմ ես աշխատանքային համազգեստ _____

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Նկարում պատկերված են դպրոց, մանկապարտեզ, շենքեր, տներ, փողոցներ, խանութ, դեղատուն, հացաբուլկեղենի կրպակ, եկեղեցի, բանկ, ոստիկանություն, հիվանդանոց, զբոսայգի և այլն: Տղան և աղջիկը պատմում են, թե ինչպես են տանից հասնում դպրոց: Սովորողները կշարունակեն՝ ամբողջացնելով նկարագրությունները:

Ապա կներկայացնեն նաև իրենց ճանապարհը տանից դպրոց՝ կիրառելով տրված բառերը՝ *դիմաց, դեպի աջ, ձախ, ուղիղ, հետևում, նախքան, միջև, մոտ, հետո, կողքին:* Կարելի է նաև նկարել այդ ճանապարհը, պատրաստել տարբեր նյութերից, ներկայացնել դասարանում, համեմատել, որոշել, թե ովքեր են նույն ճանապարհով հասնում դպրոց, ովքեր են մոտ ապրում և այլն:

Չափազանց կարևոր է, որ անգիր իմանան իրենց տան հասցեն:

Սովորողները կկարդան նկարի ցուցանակները, կթվար-

կեն, թե ինչ ծառայություններ կան դպրոցի շրջակայքում: Կպատմեն նաև, թե ինչ ծառայություններ կան իրենց բնակավայրում, ինչի համար են դրանք, ինչով են դրանք կարևոր, ինչ գործառույթներ են իրականացնում, ովքեր են այնտեղ աշխատում և այլն:

Կյանքը քաղաքում

Պատմել նկարը: Ապա շարունակել բերված միտքը. «Ինձ դուր է գալիս քաղաքում ապրելը, քանի որ...»: Հիմնավորել. ինչո՞ւ: Որո՞նք են քաղաքի թերություններն ու առավելությունները:

Կյանքը գյուղում

Պատմել նկարը: Նույն սկզբունքով շարունակել բերված միտքը. «Ինձ դուր է գալիս գյուղում ապրելը, քանի որ...»: Հիմնավորել՝ ինչո՞ւ: Որո՞նք են գյուղի թերություններն ու առավելությունները:

Համեմատել քաղաքի և գյուղի կյանքը, միջավայրը, բնությունը, մարդկանց: Գտնել նմանությունները, տարբերություններն ու առանձնահատկությունները:

Կազմակերպել բանավեճ՝ «Քաղաք, թե գյուղ»:

Ապա հանգել եզրակացության, որ կարևոր չէ որտեղ կապրի մարդը՝ գյուղում, թե քաղաքում: Պետք է շատ սիրել հայրենիքը, լինել պետության պատասխանատու քաղաքացի, լինել հոգատար ու սրտացավ՝ իր բնակավայրի հանդեպ:

Նախագծային աշխատանք՝ «Իմ բնակավայրը»

Դասարանը բաժանել խմբերի, յուրաքանչյուրին տալ առանձին հանձնարարություն:

1. Ձեր բնակավայրի մասին տեղեկություններ գտե՛ք համացանցից և գրքերից:

2. Տեսանկարահանե՛ք ձեր բնակավայրում ապրող մարդկանց, նրանց սովորույթները, զբաղմունքները:

3. Ուսումնասիրե՛ք, լուսանկարե՛ք և ներկայացրե՛ք ձեր բնակավայրի տեսարժան վայրերը, բնությունը, բույսերն ու կենդանիները:

4. Ձեր հարևանությամբ ապրող պապիկներից ու տատիկներից հարցրեք, թե ինչպիսին էր ձեր բնակավայրը տարիներ առաջ, անցյալում:

Կարելի է այլ հանձնարարություններ ևս ավելացնել:

Յուրաքանչյուր խումբ պետք է իր արած աշխատանքը ներկայացնելու ձև մտածի (պաստառներ, լուսանկարների ցուցահանդես, տեսասահիկներ, տեսագրություններ և այլն) և այդ ձևով ներկայացնի իր աշխատանքի արդյունքը, իր բացահայտումները:

Աշխատանքի ընթացքում օգնե՛ք խորհուրդներով, տեղեկատվության աղբյուրներով, ուղղորդե՛ք և ոգևորե՛ք երեխաներին: Ապա ամբողջացրեք, կազմակերպեք ներկայացում, գեղեցիկ ու տոնական շունչ հաղորդեք: Դրսևորեք ստեղծարարություն: Կազմեք հանձնաժողով և իրականացրեք գնահատում (ոչ միավորային):

«Մասնագիտություններ»

Սովորողները կթվարկեն նկարներում պատկերված մասնագիտությունները, կնկարագրեն, թե ինչ են անում այդ մասնագիտություններն ունեցող մարդիկ, ինչ օգուտ են նրանք տալիս հասարակությանը, ովքեր են նրանց շա-

հառուները, արդյոք իրենց շրջապատում, իրենց բնակավայրում կա՞ն այդ մասնագիտություններն ունեցող մարդիկ, կպատմեն նրանց մասին: Ներշնչեք հարգանք աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ: Բացատրեք, որ ի վերջո բոլոր աշխատանքներն ու մասնագիտություններն էլ կարևոր են, և բոլորն էլ պետք է իրենց գործը սիրով ու նվիրումով անեն:

Որպես օրինակ՝ ներկայացված են «Վարսահարդար» և «Քանդակագործ» մասնագիտությունների նկարագրությունները. ի՞նչ պարտականություններ ունեն և ի՞նչ է պահանջվում: Նույն կերպ պետք է սահմանել նկարներում պատկերված մասնագետների պարտականություններն ու նրանց ներկայացվող պահանջները:

Իբրև հուշում և օգնություն՝ դրանք ներկայացնում ենք ստորև, սակայն խորհուրդ է տրվում աշխատանքն իրականացնել աշակերտների միջոցով.

Շինարար

- Պարտականություններ

Կառուցում կամ վերանորոգում է շենքեր, ներկում է պատեր, հատակները ծածկում է սալիկներով կամ փայտով, պատ է շարում:

- Պահանջներ

Պետք է ունենա բարձր ճաշակ, հմուտ ձեռքեր և համբերություն, պետք է սիրի իր գործը:

Հացթուխ

- Պարտականություններ

Թխում է հաց, թխվածքներ, խմորեղեն ու հացաբուլկեղեն:

- Պահանջներ

Պետք է շատ շուտ արթնանա և հաճույք ստանա թխելուց:

Դերձակ

- Պարտականություններ

Չափում, ձևում, կտրում է գործվածքներ, կարում և ձևափոխում է հագուստներ:

- Պահանջներ

Պետք է լինի ստեղծագործ,կարողանա ճիշտ չափումներ անել և հաճույք ստանա կարելուց:

Հաշվապահ

- Պարտականություններ

Կատարում է հաշվարկներ, պլանավորում է ծախսերն ու խնայողությունները:

- Պահանջներ

Պետք է կարողանա լավ հաշվել, լինել ուշադիր, ունենա լավ հիշողություն:

Ինժեներ, ճարտարագետ

- Պարտականություններ

Նախագծում է շենքեր ու կամուրջներ, կազմում է գծագրեր:

- Պահանջներ

Պետք է լավ իմանա մաթեմատիկա և ունենա երևակայություն:

Ծրագրավորող

- Պարտականություններ

Ստեղծում է համակարգչային ծրագրեր, խաղեր

- Պահանջներ

Պետք է ունենա տրամաբանություն և ուշադրություն:

Բժիշկ

- Պարտականություններ

Բուժում է հիվանդ մարդկանց, վիրահատում է, դեղեր է նշանակում, ներարկումներ կատարում:

- Պահանջներ

Պետք է լինի հոգատար և կարեկցող:

Ուսուցիչ

- Պարտականություններ

Սովորեցնում է երեխաներին, պլանավորում է իր դասերը, գնահատում է սովորողներին:

- Պահանջներ

Պետք է կարողանա խրախուսել և մոտիվացնել սովորողներին:

Հողագործ, գյուղատնտես

- Պարտականություններ

Մշակում է հողը, բերք է ստանում, կենդանիներ է պահում

- Պահանջներ

Պետք է լինի հմուտ, իմանա բույսերի և կենդանիների մասին ամեն ինչ:

Վաճառող

- Պարտականություններ

Վաճառում է տնտեսական, մթերային ապրանքներ, գրքեր և գրենական պիտույքներ, աշխատանքային գործիքներ ու մասեր:

- Պահանջներ

Պետք է լինի ուշադիր, բարեհամբույր, կարողանա ճիշտ հաշվել գումարը:

Ոստիկան

- Պարտականություններ

Ապահովում է մեր անվտանգությունը, բացահայտում է հանցագործություններ, կարգավորում է ճանապարհային երթևեկությունը:

- Պահանջներ

Պետք է լինի արդարամիտ և լավ իմանա օրենքները:

Զինվորական

- Պարտականություններ

Ծառայում է բանակում, հսկում է մեր պետության սահմանները, պաշտպանում է մեզ թշնամուց:

- Պահանջներ

Պետք է լինի պարտաճանաչ, քաջ ու հայրենասեր:

Ապա թվարկել այլ մասնագիտություններ, որոնք դասագրքում նշված չեն:

Գործնական աշխատանք

Բաժանել նախապես տպված հարցաթերթիկներն աշակերտներին:

Հարցաթերթիկ

1.Մասնագիտություն _____

2.Որտե՞ղ ես աշխատում _____

3.Ի՞նչ պարտականություններ ունես _____

4.Դու կրո՞ւմ ես աշխատանքային համազգեստ _____

Այդ հարցաթերթիկի հարցերին համապատասխան հարցազրույց իրականացնել տանը՝ ծնողների հետ, լրացնել հարցաթերթիկը և ներկայացնել այն դասարանում:

«Տեսարժան վայրեր»

Կարդացեք և նկարներով ծանոթացրեք սովորողներին Հայաստանի Հանրապետության տեսարժան վայրերին: Նախապես նշեք, որ Հայաստանի Հանրապետությունն ունի 10 մարզ, թվարկեք դրանք, ցուցադրեք ՀՀ քարտեզի վրա, նշեք մարզկենտրոնները:ՀՀ մայրաքաղաքը Երևանն է: Յուրաքանչյուր վայրի մասին կարդալիս, լսելիս կամ դիտելիս նշեք, թե որ մարզում է այն գտնվում, խոսեք նաև Արցախի մասին: Կարող եք ցուցադրել տեսանյութեր, այլ նկարներ և տալ լրացուցիչ տեղեկատվություն՝ ըստ անհրաժեշտության և հաշվի առնելով դասարանի առանձնահատկությունները:

Հետազոտական աշխատանք. Կարող եք յուրաքանչյուրին (կամ զույգերով, կամ խմբերով) հանձնարարել որևէ տեսարժան վայրի մասին տեղեկատվություն պատրաստել, ներկայացնել դասարանում:

Անդրադարձ կատարեք "Ինչպես սովորել" բաժնի *"Բ.Տեղեկություններ վերցրու տեքստից"* մեթոդին, հիշեք հաջորդական քայլերը:

«Դպրոցն ու ընկերներս»

«Միասին ապրելու կանոնները»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Ձևավորել իսկական ընկերոջ մասին պատկերացումներ, օգնել ձեռք բերելու ընկերներ և պահպանելու ըն-

կերությունը, օգնել գիտակցելու, որ ընկերությունը պայմանավորված չէ սեռով, թե՛ աղջիկները, թե՛ տղաները կարող են լավ ընկերներ լինել:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները կկարողանան՝

1. Պահպանել, կիրառել դասարանական և քաղաքավարության կանոնները, պատրաստակամ լինել խմբով կամ զույգերով աշխատելիս:

2. Նկարագրել և օրինակներ բերել, թե ինչը կարող է օգնել կամ խանգարել ընկերությանը:

3. Բնութագրել, թե ինչպիսին պետք է լինի ընկերը, որ որակներն են բնորոշ լավ ընկերոջը, և բացատրել, որ դրանք պայմանավորված չեն սեռով:

4. Արդյունավետ շփվել, կարողանալ լսել միմյանց, հարգել միմյանց կարծիքները, հաշտության ճանապարհներ գտնել:

5. Հարգել միմյանց տարբերությունները, նշել, որ բոլորը տարբեր կարողություններ ունեն, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և զարգացման առանձահատկություններ ունեցող մարդիկ:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն թվային և մեդիա, ժողովրդավարական և քաղաքացիական ***առանցքային կարողունակություններ:***

Անհրաժեշտ նյութեր

1. Պաստառ պատրաստելու համար նյութեր՝ ստվարաթուղթ, գունավոր թղթեր ու մատիտներ, սոսինձ, մկրատ, քանոն և այլն:

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Լավ ընկեր լինելու համար նախ և առաջ պետք է իմանալ համակեցության կանոնները և առաջնորդվել դրանցով, կարողանալ հասարակության մեջ կողք կողքի հաշտ ապրել, հարգել միմյանց իրավունքները, կատարել պարտականություններ:

Սովորողները կպատմեն նկարները, ինքնուրույն կասեն, թե ինչ նկատեցին և ինչ են մտածում իրավիճակների մասին, կմեկնաբանեն, կհիմնավորեն: Ձեր ճիշտ աշխատանքի ու քննարկումների արդյունքում կձևավորվեն համապատասխան արժեքներ ու դիրքորոշումներ:

Այսպիսով՝

- Առաջին նկարում պետք է ներկայացնել դասարանում յուրաքանչյուրի դերը, խոսել գույքի և միջավայրի մասին հոգ տանելու, դրանք մաքուր պահելու կարևորության մասին:Երկրորդ նկարում հարկավոր է կարևորել միջավայրի մաքրությունը, խոսել այն մասին, որ բոլորը պետք է մաքուր պահեն շրջապատը, աղբը չթափեն գետնին: նկարում կարևորել միջավայրի մաքրությունը, խոսել այն մասին, որ բոլորը պետք է մաքուր պահեն, աղբը չթափեն գետնին:
- Երրորդ նկարում շեշտադրել հերթ կանգնելու, հերթին սպասելու, բոլորի իրավունքները հարգելու կարևորությունը: Եվ իհարկե, կարևոր է ոչ թե վիճելով ու բղավելով հարցին լուծում տալ, այլ խոսելով, միմյանց լսելով ու պայմանավորվելով:
- Չորրորդ նկարում կարևորվում է բազմակարծությու-

նը, տեսակետ, դիրքորոշում ունենալը և այն ճիշտ արտահայտելը, միևնույն ժամանակ մյուսների կարծիքներն ու տեսակետերը լսելը:

- Հինգերորդ նկարը ներկայացնելիս շեշտը դնել թույլտվություն խնդրելու, հարցնելու մշակույթի ձևավորման վրա:
- Վերջին նկարը ևս փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության ու բազմակարծության մասին է: Շատ կարևոր է սեփական կարծիքն ունենալը, բայց պետք է մի կողմ դնել կամակորությունն ու համառությունը, անձնական շահերը, լսել բոլորի կարծիքները, փորձել համաձայնության գալ և ընտրել բոլորի համար ընդունելի լուծումը:

Սովորողները կորոշեն, թե ինչպես պետք է պահեն իրենց՝ նկարում պատկերված երեխաները, որպեսզի չխախտեն համակեցության՝ միասին ապրելու կանոնները:

Միասին սահմանեք դասարանական կանոններ, **պատրաստեք պաստառ**, փակցրեք դասարանում և հետևեք դրանց պահպանմանը: Հայտնի է, որ երեխաները սիրով հետևում և պահպանում են այն կանոնները, որոնք հենց իրենք են սահմանել:

«Ընկերություն. մենք օգնում ենք իրար»

Շատ կարևոր է ընկերության գաղափարը կապել փոխօգնության, միմյանց նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի, փոխադարձ վստահության ու հարգանքի հետ: Նկարներում պատկերված են փոխօգնության օրինակներ: Սովորողները պետք է պատմեն, թե ինչպես են միմյանց օգնում նկարներում պատկերված հերոսները, արդյոք նրանք լավ ընկերներ են, թե՞ ոչ, և հիմնավորեն պատասխանները: Զրույցի ու քննարկումների միջոցով ձևավորեք ընկերներ ձեռք բերելու և ընկերությունը պահպանելու կարողություններ:

- Առաջին նկարում շեշտադրվում է ընկերությունը հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ: Կարևոր է գիտակցել, որ ընկերությունը խտրականություններ չի ճանաչում: Այն պայմանավորված չէ սեռով. թե՛ աղջիկները, թե՛ տղաները կարող են լավ ընկերներ լինել:
- Երկրորդ նկարում Արամը դժվարանում է կատարել առաջադրանքը, իսկ Լիլիթը խոստանում է օգնել նրան:
- Երրորդ նկարը բարության մասին է, երբ ընկերները կիսում են միմյանց հետ իրենց ուտելիքն ու կոնֆետները:
- Չորրորդ նկարում աշակերտները մեկը մյուսին օգնելով հավաքում ու մաքրում են դասասենյակը: Նկատենք, որ աշխատանքները տարբերակված չեն ըստ սեռի: Պարզապես բոլորն անում են ինչ-որ գործեր և օգնում են միմյանց:

Ապա սովորողները կպատմեն, թե իրենք ինչպես են օգնում միմյանց դասարանում:

Խոսեք ընկերության և փոխօգնության, բարության ու հոգատարության մասին. ո՞վ է համարվում լավ ընկեր, ի՞նչ որակներ պետք է ունենա իսկական ընկերը, արդյո՞ք սովորողը ինքն իրեն համարում է լավ ընկեր: Բոլոր պատասխանները պետք է հիմնավորեն փաստարկներով:

Յուրաքանչյուրը կպատմի, թե ով է դասարանում իր ընկերը, ինչու է նրան համարում իր ընկերը, կներկայացնի նրան: Այս առաջադրանքի ժամանակ զգուշացեք, որ հանկարծ դասարանում չլինեն երեխաներ, ում հետ ոչ մեկը ընկերություն չի անում, ում մասին ոչ ոք չի խոսում: Փորձեք նման երեխաներին գովել, կարևորել, նշել նրա առավելությունները, արժանիքները: Այդպիսով կգտնվեն երեխաներ, ովքեր կորոշեն ընկերանալ նման երեխաների հետ:

«Լավ և վատ արարքներ»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Օգնել հասկանալու արարքների և հետևանքների կապը, օրինակներով ցույց տալ, թե արարքներն ինչ հետևանքներ կարող են ունենալ՝ թե՛ դրական, թե՛ բացասական:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները կկարողանան՝

1. Մեկնաբանել, թե արարքներն ինչ հետևանքներ կարող են ունենալ, թե՛ դրական, թե՛ բացասական:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն ժողովրդավարական և քաղաքացիական, լեզվական գրագիտության ***առանցքային կարողունակություններ***:

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Նկարներում պատկերված են լավ և վատ արարքներ: Սովորողները պետք է պատմեն նկարները, ասեն, թե ինչպիսի արարքներ են դրանք: Լավ արարքը տալիս է լավ արդյունք, իսկ վատ արարքն ունենում է վատ հետևանք: Ներկայացնել, թե ներկայացված արարքներն ինչ արդյունք կամ հետևանք կարող են ունենալ: Հիմնավորել դիրքորոշումը:

1. Առաջին նկարում տղան ծառ է ջրում: Դա լավ արարք է, արդյունքում ծառը կմեծանա, թթվածին կտա, զով կանի ցերեկվա շոգին, բերք կտա և այլն:

2. Երկրորդ նկարում աղջիկը մեխում է ծառին մի ցուցանակ, որի վրա գրված է “Չվնասել”, այնինչ հենց ինքն է վնասում ծառը այն մեխելով: Սա վատ արարք է, որի հետևանքը կլինի այն, որ ծառը կվնասվի, կփտի, կփչանա:

3. Երրորդ նկարում տղան նստել է աստիճանների բազրիքին ու սահում է: Սա վատ արարք է և կբերի վատ հետևանքի, քանի որ նա կարող է վայր ընկնել ու վնասվել: Բացի այդ նա վնասում է դպրոցի գույքը, բազրիքները կթուլանան ու ժամանակից շուտ կվնասվեն:

4. Չորրորդ նկարում աղջիկը փորագրում է իր անունը դպրոցական սեղանի վրա: Սա վատ արարք է, քանի որ նա փչացնում է դպրոցական գույքը:

5. Հինգերորդ նկարում երեխաները հավաքում են աղբը: Նրանք ձեռնոցով են աշխատում: Գետնին թափված աղբը հավաքում են տոպրակների մեջ և գցում աղբամանը: Սա լավ արարք է, քանի որ երեխաները մաքրում են իրենց շուրջը: Արդյունքում նրանք կունենան մաքուր միջավայր և կլինեն առողջ:

6. Վերջին նկարում աղջիկը օգնում է տարեց կնոջը անցնել ճանապարհը: Սա շատ լավ ու դրական արարք է: Մենք պետք է հոգատար լինենք մեր տատիկների ու պապիկների հանդեպ, օգնենք նրանց դժվար պահերին: Արդյունքում նրանք իրենց լավ ու ապահով կզգան:

Թույլ տվեք այս ամենը երեխաները պատմեն ինքնուրույն: Տվեք ուղղորդող հարցեր և հանգեցրեք ակնկալվող արդյունքին այնպես, որ երեխաներն իրենք բացահայտեն ճշմարտությունը, ինքնուրույն հանգեն եզրակացության, ձևավորեք նրանց մոտ ճիշտ դիրքորոշում և արժեքային համակարգ:

«Իրավունքներ և պարտականություններ»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Ձևավորել դրական վերաբերմունք կանոններին և դրանց կարևորությանը, իրենց և ուրիշների իրավունքները պաշտպանելու համար դրանց անհրաժեշտության գիտակցություն, իրավունքների և պարտականությունների փոխկապվածության ընկալում և բարեկիրթ շփման հմտություններ:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները կկարողանան՝

1. Նկարագրել յուրաքանչյուրի դերը, իրավունքները, պարտականությունները դպրոցում, դասարանում, նշել դրանց կարևորությունը:

Անհրաժեշտ նյութեր

1. Նախապես գծված աղյուսակներով (Իրավուքներ/Պարտականություններ) թղթեր:

2. Պաստառ պատրաստելու համար անհրաժեշտ նյութեր՝ ստվարաթուղթ, գունավոր մատիտներ, գրիչներ, թղթեր, սոսինձ, մկրատ և այլն:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն ժողովրդավարական և քաղաքացիական ***առանցքային կարողունակություններ:***

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Բոլոր երեխաներն ունեն հավասար իրավունքներ: Երեխաների իրավուքները պաշտպանված են ՀՀ օրենսդրությամբ և ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիայով:

Նկարում շրջանաձև կանգնած են երեխաներ՝ տարբեր սեռի, տարբեր կազմվածք ունեցող, մաշկի կամ մազերի տարբեր գույն ունեցող, կան նաև հաշմանդամություն ունեցող, ակնոց կրող երեխաներ, տղաներ ու աղջիկներ: Սակայն պետք է նշել, որ բոլորն ունեն հավասար իրավունքներ:

Սահմանել և մեկնաբանել «իրավունք» և «պարտականություն» հասկացությունները:

Դասի մեջ ներկայացվել են երեխայի իրավունքներից ամենակարևորները՝ փոխադարձաբար կապելով պարտականությունների հետ: Դրանք ուղեկցվում են նկարներով, որոնք մասնավոր դեպքեր են: Պետք է մեկնաբանել դրանք և ասել, թե ինչպես կվարվեին սովորողները տվյալ իրավիճակներում:

1. Առաջին նկարը հավասար իրավունքների մասին է, երբ հասարակությունը տարբերություն է դնում տղաների ու աղջիկների միջ, ինչը բխում է նաև կարծրատիպերից: Երեխաները իրենք կփոխեն սցենարը, կհանգեն եզրակացության, որ բոլորն ունեն հավասար իրավունքներ: Եվ իհարկե, դա պետք է կապել պարտականությունների հետ. եթե մենք ուզում ենք, որ մեր իրավունքները հարգեն, ապա ինքներս էլ պարտավոր ենք հարգել մյուսների իրավունքները:

2. Երկրորդ նկարն, այն մասին է, որ բոլոր երեխաներն ունեն պաշտպանված լինելու իրավունք: Նկարում պատկերված է բուլինգի դրսևորման օրինակ, թե ինչպես են

մի տղա ու մի աղջիկ հալածում մեկ այլ աղջկա, քաշում են մազերից, հագուստից, ծաղրում են նրան: Պետք է հանգել եզրակացության, որ ցանկացած երեխա իրավունք ունի լինելու պաշտպանված: Նա, ում նեղացնում են, կարող է դիմել մեծահասակների օգնությանը, քանի որ դա նրա իրավունքն է օրենքով: Եվ բոլորը պետք է հասկանան, որ չի կարելի վնասել մյուսներին, նեղացնել կամ վիրավորել: Պետք է ընկալեն տվյալ իրավունքի ու պարտականության փոխադարձ առնչությունն ու կապվածությունը:

3. Երրորդ նկարում երկու աղջիկ նստած են բակի նստարանին, արևածաղիկ են կեղևազրկում և թափում գետնին: Սովորողներն արդեն գիտեն մաքուր միջավայրի կարևորության մասին: Այժմ պետք է նրանց բացատրել, որ մաքուր միջավայրում ապրելը նրանց իրավունքն է, միևնույն ժամանակ նրանց պարտականությունն է նաև այդ մաքրությանը հետևելն ու այն պահպանելը, աղբը գետնին չթափելն ու չկեղտոտելը:

4. Չորրորդն այն մասին է, որ բոլոր երեխաներն ունեն կրթություն ստանալու իրավունք: Պետությունը նրանց տալիս է այդ հնարավորությունը: Եվ պետք է գիտակցել, որ ամեն մեկն իր տեղում պարտավոր է օգտվել այդ հնարավորությունից և լավ սովորել:

5. Հինգերորդը բազմակարծությանն է վերաբերում: Յուրաքանչյուրն ունի խոսքի ազատություն և կարծիք հայտնելու իրավունք: Սակայն այս իրավունքից բխում է նաև ուրիշների կարծիքը լսելու և հարգելու պարտականությունը: Ինչպես նաև այստեղ պետք է կարևորել ծնողների և ուսուցիչների ասածներն ու խորհուրդները լսելու պարտականությունը:

6. Վեցերորդ նկարը պատկերված է դասարան, բոլորը դաս են անում, իսկ տղաներից մեկը վազում ու աղմկում է, խանգարում ու շեղում է բոլորին: Կարելի է բերել

նաև այն բանին, որ երբեմն մարդիկ ուշ գիշերին շատ բարձր երաժշտություն են միացնում կամ հրավառություն են անում, աղմկում ու խանգարում են ուրիշների հանգիստը: Եվ եթե մենք ուզում ենք, որ մեր հանգստի իրավունքը չխախտեն, ապա ինքներս էլ պետք է ուրիշներին չխանգարենք հանգստանալ, չբղավենք, չաղմկենք դասամիջոցներին և այլն:

Յուրաքանչյուր նկար մեկնաբանելիս թույլ տվեք, որ սովորողները խոսեն, ինչպես են իրենք վարվում նման դեպքերում ինչն է ճիշտ, ինչն է սխալ, անպայման կապեք պարտականությունների հետ: Երեխան ամեն բան պետք է իր միջով անցկացնի, հասկանա, որ բոլորն էլ ունեն հավասար իրավունքներ և հավասար պարտականություններ:

Ապա անդրադարձ կատարեք, թե ինչ իրավունքներին և պարտականություններին ունեն սովորողները դասարանում: Աշակերտները կներկայացնեն, կխոսեն դրանց մասին, **կկազմեն աղյուսակ,** կլրացնեն համապատասխան սյունակները: **Կպատրաստեն պաստառ**, կփակցնել պատին և հաճախի կանդրադառնան դրանց:

«Մենք վիճում ենք և լուծումներ գտնում»

Նպատակներ /ըստ առարկայական չափորոշչի/

1. Ձևավորել փոխադարձ վստահության մթնոլորտ, որն էական է ընկերական փոխհարաբերություններում և կոնֆլիկտները խաղաղ հարթելու հիմք է, ստեղծել իրավիճակներ վեճերի խաղաղ լուծման ձևեր փնտրելու, գտնելու վերաբերյալ:

Վերջնարդյունքներ /ըստ առարկայական չափորոշչի/

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողները կկարողանան՝

1. Խուսափել վեճերից, կռիվներից, փորձել խոսել, հաշտվել միմյանց հետ:

2. Բացատրել՝ ինչ է կոնֆլիկտը և դրանք խաղաղ լուծելու ձևեր գտնել:

   - Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական ***առանցքային կարողունակություններ***:

Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Դասն պետք է սկսել հարցերով.

1. Ձեր դասարանում վեճեր լինո՞ւմ են:

2. Ի՞նչ պատճառներով եք վիճում:

3.Կարողանո՞ւմ եք հարթել այդ վեճերը: Ինչպե՞ս:

4.Հնարավո՞ր է այնպես անել, որ դասարանում այլևս վեճեր չլինեն: **Հիմնավորի՛ր** պատասխանդ:

Պետք տանել նրան, որ բոլոր վեճերը հնարավոր է հարթել առանց բռունցքների, հրմշտոցների, առանց վիրավորանքների ու պիտակավորումների: Պարզապես ***պետք է պայմանավորել և պահել պայմանավորվածությունները:***

Դերային խաղերի միջոցով ներկայացնել վիճահարույց իրավիճակներ: Պայմանը մեկն է. արգելվում է բղավելն ու

վիրավորելը: Պետք է իրավիճակին խաղաղ հանգուցալուծում տան հենց իրենք՝ երեխաները: Ուսուցիչը պարզապես լուռ հետևում է: Դասագրքում տրված են օգնող բառեր ու արտահայտություններ:

Առաջարկում եմ .... ***Ինձ դուր չի գալիս, երբ ...***

Ճիշտ կլիներ, եթե ... ***Ուրախ եմ, որ դու ...***

Ներողություն... ***Կարելի՞ է....***

Հնարավորություն տալ աշակերտներին հիմնավորելու, թե ինչու վարվեցին այս կամ այն կերպ:

3.Վեճերը խաղաղ հանգուցալուծման տանելու, վեճերը հարթելու, որոշում կայացնելու, ընդհանուր հայտարարի գալու կարողություններ ձևավորելու նպատակով ուսուցիչը ներկայացնում է մի իրավիճակ, երբ երեխաներից ոմանք ցանկանում են ֆուտբոլ խաղալ, մի մասը՝ վոլեյբոլ, մի քանիսն էլ բասկետբոլ: Ինչպե՞ս կվարվեն աշակերտները: Պետք է լսեն բոլորի կարծիքները, հիմնավորումները և փորձեն խաղաղ ճանապարհով լուծում տալ խնդրին այնպես, որ բոլորը համաձայն լինեն:

* Թեմատիկ շարքի յուրացումը ստուգե՛ք ամփոփիչ թեստով:

«ԵՍ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ»

Այս գլխի ուսումնասիրության ընթացքում աշակերտների մոտ կձևավորվեն այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սերը իրենց համայնքի, հայրենիքի, բնության նկատմամբ: Յուրաքանչյուր աշակերտ կկարևորի բնության դերը մոլորակի գոյության մեջ, կկարևորի իրեն՝ որպես բնության մասնիկ, կգիտակցի իր պատասխանատու վարքագծի պատճառն ու հետևանքը: Բնությունը սիրելը, նրան խնամքով ու հոգածությամբ վերաբերվելը կդառնա սովորողի արժեքային համակարգի մասը:

Գլուխը ներկայացված է «Բնության բազմազանություն» և «Փոխազդեցություններ» բաժիններով, որոնցում ընդգրկված են «Կենդանի, անկենդան օբյեկտներ», «Կենդանի բնության օբյեկտներ», «Անկենդան բնության օբյեկտներ», «Փոփոխությունները բնության մեջ» թեմաները: Վերջիններս էլ բաժանված են առանձին ենթաթեմաների:

«Ես և բնությունը» գլխի ուսուցման համար սահմանված են չափորոշչային հետևյալ նպատակները՝

- Օգնել տարբերակել կենդանի և անկենդան բնության, մարդու և բնության ստեղծած օբյեկտները՝ նկարագրելով դրանց առանձնահատկությունները:
- Տեսնել և նկարագրել բնության բազմազանությունը:
- Օգնել՝ դիտարկումների և փորձերի միջոցով, բացահայտել, որ կենդանի բնությունը ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի կարիք ունի:
- Օգնել աշակերտներին, փորձերով և դիտարկումներով, օրինակներ բերելով, համոզվել, որ բույսերն ու կենդանիները փոխադարձաբար կապված են:
- Օգնել գիտակցելու բնության մեջ տեղի ունեցող բնական և մարդու գործունեության հետևանքով տեղի ու-

նեցող փոփոխությունները, ինչպես նաև մարդու ներգործության բացասական հետևանքները: Նպաստել պատասխանատու վարքագծի ձևավորմանը:

- Ձևավորել ճանաչողություն երկրի մակերևույթի որոշ ձևերի մասին, բնորոշել, նկարագրել տեղանքը:
- Օգնել դիտարկելու բնության մեջ տեղի ունեցող պարբերական երևույթները:
- Խթանել բնության մեջ դիտարկումներ կատարելու և դիտարկումների հիման վրա հետևություններ անելու հմտությունները:

Սահմանված են չափորոշչային հետևյալ <u>վերջնարդյունքները</u>՝

- Նկարագրել բնության անկենդան և կենդանի օբյեկտները, կարողանալ տարբերակել դրանք՝ ելնելով դրանց առանձնահատկություններից:
- Համեմատել և տարբերակել շրջապատի օբյեկտները՝ մարդու և բնության ստեղծած:
- Ներկայացնել, թե մարդն ինչ է ստանում բնությունից (սնունդ, շինանյութ, դեղաբույսեր, գեղագիտական բավարարվածություն և այլն):
- Դիտարկել և փորձերի օգնությամբ համոզվել, որ կենդանի բնությունը ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի կարիք ունի:
- Դիտարկել, նկարագրել բույսերի և կենդանիների փոխկախվածությունը, սննդային շղթաների պարզ օրինակներ բերել:
- Դիտարկել բույսերի բազմազանությունը. խմբավորել դրանք մշակովի և վայրի, ցամաքային և ջրային, ծառեր, թփեր, խոտաբույսեր և այլ դասակարգումներով, բերել օրինակներ:
- Խմբավորել կենդանիները՝ ըստ վայրի և ընտանի տեսակների:

- Բնութագրել, օրինակներ բերելով, բույսերը՝ որպես մարդու և կենդանիների հիմնական սնունդ և կենսական նշանակության ունեցող պարագաների աղբյուր:
- Տարբերակել երկրի մակերևույթի ռելիեֆի որոշ ձևեր՝ լեռներ, հարթավայրեր:
- Բնութագրել և նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր:
- Դիտարկել և նկարագրել, թե ինչպես է փոփոխվում բնությունը տարվա եղանակներին, թվարկել տարվա եղանակները և ամիսները՝ ըստ հերթականության:
- Դիտարկել և նկարագրել, թե ինչպես է փոփոխվում մարդկանց, բույսերի ու կենդանիների կյանքը տարվա տարբեր եղանակներին:
- Բնութագրել եղանակը ցանկացած պահի, դրսևորել եղանակին համապատասխան վարքագիծ:
- Բացատրել, թե ինչ դեր ունի մարդը բնության վատթարացման գործում, մեկնաբանել բնության պահպանության և խնայող վերաբերմունքի անհրաժեշտությունը:

«Բնություն»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Սովորողներին օգնել տարբերակել կենդանի և անկենդան բնության, մարդու և բնության ստեղծած օբյեկտները՝ նկարագրելով դրանց առանձնահատկությունները:

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի/

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **Կհամեմատեն և կտարբերակեն՝ մարդու և բնության կողմից**

1. **Ստեղծված շրջապատի օբյեկտները:**

2. **Կնկարագրեն** բնության անկենդան և կենդանի օբյեկտները, **կտարբերակել** դրանք՝ ելնելով դրանց առանձնահատկություններից:

3. **Կներկայացնեն**, թե մարդն ինչ է ստանում բնությունից:

4. Կդրսևորեն բնությունը պահպանելու և նրան խնամքով վերաբերելու **վարքագիծ**:

   - Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մեջ կձևավորվեն լեզվական գրագիտության, մեդիա, մաթեմատիկական և գիտատեխնիկական ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Դասավանդման և ուսումնառության մեթոդներ

օգտագործել փոխներգործուն/ինտերակտիվ/ մեթոդներ: Դասը հետաքրքիր կանցնի և արդյունավետ կլինի, եթե կիրառվեն խաղաֆիկացման տարրեր՝ գունավոր թերթիկներ, առանձին քարտերով նկարներ, էլեկտրոնային գործիքներ՝ սահիկաշար, խաղային հավելվածներ, quizz-ներ:

Ձեզ կարող են անհրաժեշտ լինել դասագիրք, կենդանի բնության, անկենդան բնության, անկենդան օբյեկտների նկարներ, գունավոր կպչուն թղթեր, սպիտակ թղթեր և գունավոր մատիտներ: Եթե տեսանյութ եք ցուցադրելու,

ապա չմոռանաք նախապես կարգավորել համակարգիչը, պրոյեկտորը, նախապես ինքներդ դիտեք հենց նույն համակարգչով:

Ընթացքը

- Որպես թեմայի մուտք, սովորողներին խնդրում ենք դուրս գալ բակ և նկարել ինչ տեսնում են իրենց շուրջը (ժամանակ խնայելու համար սա կարելի է կազմակերպել կերպարվեստի ժամին):
- Վերադառնում ենք դասարան, բոլոր նկարները հավաքում իրար մոտ:
- Երեխաներին ներկայացնում ենք թեմայի (դասի) նպատակները և վերջնարդյունքները (իրենց տարիքին համապատասխան բառապաշարով): Տեսանելի տեղում փակցնում ենք:
- Ուսուցչի ուղղորդումների միջոցով երեխաներն ասում են, թե նկարներում պատկերված օբյեկտներից ինչը կա բնության մեջ, ինչը մարդն է ստեղծել:
- Ամփոփելով երեխաների պատասխանները, պարզ արտահայտությամբ ներկայացնում ենք՝ ինչ է բնությունը՝ «Այն, ինչ մեզ շրջապատում է և չի ստեղծվել մարդու կողմից, կոչվում է բնություն»:
- Ցուցադրում ենք կենդանի բնության օբյեկտների նկարներ, օրինակ, մարդ, ծառ, թռչուն, ջրային կենդանի և այլ: Սովորողներին ուղղորդում ենք դեպի այն միտքը, որ սրանք ինչ-որ բաներով նման են իրար, ու երեխաները պետք է հանգեն այն իրողության, որ բոլոր նշված օբյեկտները շնչում են, սնվում են, շարժվում են, բազմանում են, աճում են, մահանում են: Սրան հակառակ, սովորողները եզրակացության են գալիս, թե ինչ է անկենդան բնությունը: Այն ինչ <u>կա բնության մեջ</u>, բայց չի սնվում, չի բազմանում, չի աճում, չի մահանում»:

- Օգնում ենք աշակերտներին հասկանալու անկենդան բնության և անկենդան մարմինների տարբերությունը: Վերջիններս ստեղծված են մարդու կողմից:
- Ցուցադրում ենք տարբեր մարմինների նկարներ, օրինակ, քար, ավտոմեքենա, տուն, շիշ, գետ, արև և այլ, երեխաները փորձում են տարբերակել անկենդան մարմիններն ու անկենդան **բնության** մարմինները:
- Բնության մասին պատկերացում կազմելուց հետո հարցերի, պատկերների միջոցով երեխաների հետ «բացահայտում» ենք բնության նշանակությունը մարդու կյանքում, ինչ է ստանում մարդը բնությունից:
- Թեմայի ուսումնառության ընթացքում երեխաների մոտ ձևավորվում է բնության կարևորության, նրան խնամքով վերաբերվելու և այն պահպանելու անհրաժեշտության մասին վերաբերմունք, ինչը աստիճանաբար կզարգանա և կխորանա ուսումնական տարբեր առարկաների և թեմաների ուսումնառության ընթացքում:
- Որպես հետադարձ կապի միջոց, կարելի է տրամադրել պարզ հայտորոշիչ թեստ, կամ « «դոմինո»-յի տիպի խաղ: Նրանք պետք է ըստ նկարների համադրեն կենդանի բնությունը, անկենդան բնությունը և անկենդան մարմինները:

Դասն ամփոփում ենք անդրադառնալով դասի նպատակներին և վերջնարդյունքներին: Միասին կետ առ կետ կարդում ենք դրանք և գնահատում արդյունքները (բնութագրման միջոցով):

Սովորողների հետ վեր ենք հիշում, թե ինչ արեցինք դասի ընթացքում, ինչպես արեցինք, ինչու այդպես արեցինք: Երեխաները կարծիք են հայտնում, թե ինչը իրենց դուր եկավ, ինչը չհավանեցին, ինչը այլ կերպ կանեին, ինչպես կվարվեն հաջորդ անգամ:

«Բույսեր»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Դիտարկել բույսերի բազմազանությունը. խմբավորել դրանք մշակովի և վայրի, ցամաքային և ջրային, ծառեր, թփեր, խոտաբույսեր և այլ դասակարգումներով, բերել օրինակներ:

2. Բնութագրել, օրինակներ բերելով, բույսերը՝ որպես մարդու և կենդանիների հիմնական սնունդ և կենսական նշանակության ունեցող պարագաների աղբյուր:

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի/՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **կնկարագրեն** բույսերը,
2. **կհամեմատեն** և **կամբողջացնեն** բույսերի ընդհանուր հատկանիշները,
3. **կդասակարգեն** բույսերը՝ մշակովի և վայրի, ցամաքային և ջրային, ծառեր, թփեր, խոտաբույսեր, **կբերեն օրինակներ**:
4. **կբնութագրեն** բույսերը՝ որպես մարդու և կենդանիների հիմնական սնունդ և կենսական նշանակության ունեցող պարագաների աղբյուր:
5. **կգիտակցեն** բույսերի նշանակությունը մարդու կյանքում և բնության մեջ,
6. բնության գրկում կդրսևորեն պատասխանատու **վարքագիծ**:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն լեզվական գրագիտության, սովորել սովորելու, մաթեմատիկական և գիտատեխնիկական ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Թեման սկսվում է բույսերի նկարներով: Երեխաները հարց ու պատասխանի միջոցով թվարկում են բույսեր: Կարող եք օգտագործել նկարներ, սահիկներ, բույսերի հերբարիումներ: Ցանկալի է, որ ցուցադրվող բույսերի մեջ լինեն և՛ խոտաբույսեր, և՛ թփեր, և՛ ծառեր:

Կարևոր է, որ երեխաները ինքնուրույն ընդհանրացնեն բույսերին բնորոշ հատկանիշները: Դասագրքում պարզագույն ձևով ներկայացված է հետևյալ կերպ. «Բույսերը բնության այն մարմիններն են, որոնք ունեն կանաչ մասեր և սնվում են օդի ու ջրի միջոցով»: Լուսասինթեզ եզրույթը պարտադիր չէ, որ հիշեն:

Այնուհետև սովորողները ծանոթանում են բույսի մասերին՝ օրգաններին: Նկարում պատկերված են ծառ և խոտաբույս, որոնց օրինակով էլ տարբերում են բույսերի օրգանները: Հաճախ երեխաների մոտ թյուր կարծիք կա, որ բույսը «ծաղիկ» է: Այստեղ ուշադրություն պետք է դարձնել այն բանին, որ ծաղիկը բույսի օրգաններից մեկն է, և ամբողջական բույսը ծաղիկ չէ:

Կարելի է տարրական մակարդակով ներկայացնել բույսի օրգանների նշանակությունը, օրինակ, արմատը հողից ջուր է վերցնում, տերևների միջոցով բույսը շնչում է, կանաչ տերևները ապահովում են բույսի սնունդը, ցողունով ջուրն ու սննդանյութերը տեղաշարժվում են դեպի մյուս օրգաններ, ծաղիկը բազմացման համար է և այլն:

Այնուհետև անդրադառնում ենք բույսերի խմբերին ըստ բնակության վայրի՝ ցամաքային, ջրային, ճահճային, ըստ խնամքի՝ վայրի և մշակովի, ըստ արտաքին տեսքի՝ ծառեր, թփեր, խոտաբույսեր: Սովորողները պետք է ճանաչեն իրենց շրջապատի բույսերը, տարբերակեն ծառերը, թփերը, խոտաբույսերը: Այստեղ ծառերից բերված է նաև արևելյան սոսին, կոնկրետ՝ Արցախի **տնջրի** ծառը, որին կարող եք առանձին անդրադառնալ: Նրա մասին կան առեղծվածային պատմություններ, օրինակ, «Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղում՝ Ստեփանակերտից 37 կմ հեռավորության վրա է գտնվում Արցախ աշխարհի հրաշալիքներից մեկը՝ հսկա Տնջրի ծառը: Տնջրի ծառը համարվում է ԱՊՀ տարածքում ամենահինն ու ամենաբարձրը, որը մոտ 2040 տարեկան է: Դեռևս ԽՍՀՄ-ի ժամանակ ծառին շնորհվել է անձնագիր, որպես ՍՍՀՄ տարածքում գտնվող ամենատարեց և ամենաբարձր ծառ:

Ըստ առասպելի ծառը տնկել է Տիգրան Մեծը: Նույն ծառից եղել է 15 ճյուղ ևս՝ նահանգերի թվով, բայց բոլորը չորացել են, միայն Արցախինն է ապրել և մեծացել:» աղբյուրը՝ https://armland.am/hy/2022/07/06/tnjri/, https://hy.wikipedia.org/wiki/%D5%8F%D5%B6%D5%BB%D6%80%D5%AB

Կարևոր է երեխաների միջոցով վեր հանել բույսերի նշանակությունը բնության մեջ և մարդու կյանքում: Կարող եք համր ցուցադրել https://www.youtube.com/watch?v=UnjyLkABFLs հղումով տեսանյութը, հետո երեխաները ներկայացնեն, թե ինչ տեսան: Դասագրքում կա համապատասխան նկար, որը կօգնի սովորողներին համակարգված ներկայացնել այն:

Թեմայի վերջում կան առաջադրանքներ: Առաջինում պահանջվում է բույսերի մասին հետաքրքիր տեղեկություն, հանելուկներ, թևավոր խոսքեր և այլ տվյալներ հավաքագրել և, համագործակցելով տեխնոլոգիայի և թվային գրագիտություն և համակարգչային գիտության ուսուցչի հետ, գիրք կազմել: Այս գործընթացի ժամանակ երեխա-

ներին սովորեցնում ենք օգտվել համացանցից, տարբեր գրքերից, ծանոթացնում ենք գրքի կառուցվածքին, ներկայացնում ենք, որ գիրքը պարտադիր պետք է ունենա հեղինակ, էջակալվի, նրանում լինեն նկարներ, նկարների վերաբերյալ տեքստ և այլն: <<Ինչպես սովորել>> բաժնից այստեղ կիրառելի են Ա և Բ մեթոդները:

Այս թեմայի վերաբերյալ առաջարկվում է **գործնական աշխատանք:** Հաջորդ դասի համար դպրոց գալիս երեխաները խնամքով հավաքում են ճանապարհին հանդիպած բույսերից: Սովորողներին բաժանում ենք 4-5 խմբի: ՀՆրանք հավաքած բույսերը փակցնում են թղթին, պատրաստում պաստառ և նկարագրում են դրանք: Կարող են այս աշխատանքին ստեղծագործական մոտեցում ցուցաբերել, և պաստառներին գեղագիտական տեսք տալ:

«Կենդանիներ»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Դիտարկել կենդանիների բազմազանությունը. խմբավորել դրանք վայրի և ընտանի և այլ դասակարգումներով, բերել օրինակներ:

2. Բնութագրել՝ օրինակներ բերելով, կենդանիները՝ որպես մարդու և կենդանիների հիմնական սնունդ և կենսական նշանակության պարագաների աղբյուր:

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի/՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **կնկարագրեն** կենդանիներին,

2. **կհամեմատեն** և **կամբողջացնեն** կենդանիների ընդհանուր հատկանիշները,

3. կկարողանան **դասակարգել** կենդանիները՝ վայրի և ընտանի, օդում ապրող, ցամաքային և ջրային, **կբերեն օրինակներ**:

4. **կբնութագրեն** կենդանիներին՝ որպես մարդու և կենդանիների հիմնական սնունդ և կենսական նշանակության ունեցող պարագաների աղբյուր:

5. **կգիտակցեն** կենդանիների նշանակությունը մարդու կյանքում և բնության մեջ,

6. բնության գրկում կդրսևորեն պատասխանատու **վարքագիծ**:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մեջ կձևավորվեն լեզվական գրագիտության, սովորել սովորելու, մաթեմատիկական և գիտատեխնիկական ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Դասն սկսվում է կենդանիների նկարներով: Ուշադրություն դարձրեք, որ պատկերված են հիմնականում ՀՀ-ին բնորոշ, ինչպես նաև «Կարմիր գրքում» գրանցված կենդանիներ: Երեխաներին հարցնում ենք, թե իրենք ի՞նչ կենդանիներ գիտեն: Ի՞նչ ընդհանուր հատկանիշներ ունեն նրանք, որ միանման կոչվում են կենդանիներ: Թողնում եք երեխաները ներկայացնեն կենդանիների հատկանիշները, օրինակ, տեղաշարժվում են, սննդամթերք են ուտում և այլն:

Ամփոփելով երեխաների պատասխանները, նրանց ուղղորդեք, որ խմբավորեն կենդանիներին վայրի և ընտանի

խմբերի և գան եզրահանգման՝ որոնք են դրանք:

Այնուհետև «Գտի՛ր ավելորդը» խաղի միջոցով երեխաները համեմատում են տարբեր կենդանիների, բացատրում, թե ինչով է «ավելորդը» տարբերվում մյուս կենդանիներից, դրան նման, ազգակից ի՞նչ կենդանիներ կարող են թվարկել: Գաղափար ենք տալիս ազգակից կենդանիների մասին: Թեթևակի նշում ենք կենդանիների խմբերի անունները՝ ձկներ, սողուններ, երկկենցաղներ, թռչուններ, կաթնասուններ, միջատներ և այլն:

Հարցաշարի միջոցով (ցանկալի է էլեկտրոնային գործիքի կիրառմամբ) բացահայտում ենք, թե դասի ո՞ր հատվածներն են երեխաները լավ յուրացրել, որը վատ: Նորից անդրադառնում ենք թերի յուրացված հատվածներին:

Հաջորդիվ երեխաները գուշակում են դասագրքի հանելուկները, իրենց կողմից են առաջարկում հանելուկներ, հետաքրքիր պատմություններ են պատմում կենդանիների մասին:

Որպես հասարակական կյանք վարող կենդանի, բերված է մեղվի օրինակը: Այստեղ երեխաները կարող են լրացուցիչ հետաքրքիր տեղեկություններ ներկայացնել մեղուների մասին: Պատմեք նրանց մեղվաընտանիքի <<կազմակերպված>> կենցաղի մասին, թե ինչ դերեր ունեն ընտանիքում, ով ինչի համար է պատասխանատու, ինչ են սովորել մարդիկ մեղուներից, ինչ նշանակություն ունեն մեղուները մարդու կյանքում և բնության մեջ:

Ամփոփելով իմացածն ու նոր սովորածը, միասին ներկայացնում ենք կենդանիների նշանակությունը բնության մեջ և մարդու կյանքում: Երեխաներին հանձնարարեք Ա, Դ, Է մեթոդների միջոցով գրքերից և համացանցից լրացուցիչ տեղեկություն հավաքեն մեղուների և մեղրի մասին: Ներկայացնեն ընկերներին:

Թեմայի **ամփոփման** համար առաջարկում ենք հետևյալ հարցերը՝

- Ի՞նչ ընդհանուր հատկանիշներ ունեն կենդանիները:
- Կենդանիների ի՞նչ խմբեր կան (առնվազն վայրի և ընտանի պատասխանները պետք է հնչեն):
- Ի՞նչ կլինի, եթե կենդանիներ չլինեն:

Կարող եք նաև նկարների խմբավորման միջոցով ամփոփել:

Կատարել **անդրադարձ** դասին: Երեխաներին ուղղել հետևյալ հարցերը.

- Ի՞նչը ձեզ դուր եկավ այս դասին:
- Ի՞նչը միշտ կհիշեք:
- Ի՞նչը դուր չեկավ:

«Բույսերի և կենդանիների կապը»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Օգնել աշակերտներին, փորձերով և դիտարկումներով, օրինակներ բերելով, համոզվելու, որ բույսերն ու կենդանիները փոխադարձաբար կապված են:

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի/՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **Կկարողանան դիտարկել, նկարագրել** բույսերի և կենդանիների փոխկախվածությունը, **կազմել** «կյանքի ցանցի» և «սննդային շղթաների» պարզ օրինակներ:

    - Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն մաթեմատիկական և գիտատեխնիկական, ինքնաճանաչողական և սո-

ցիալական, տնտեսական ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Կարևոր է, որ երեխաները ընկալեն, որ բնության մասնիկները կապված են միմյանց հետ և առանց մեկը մյուսի չեն կարողանա գոյատևել: Խաղի միջոցով ստանալ «կյանքի ցանց» և ցույց տալ կենդանի օրգանիզմների և անկենդան բնության սերտ կապը:

Պարզ սննդային շղթաների միջոցով նրանք տարրական պատկերացում կկազմեն, որ սնունդը եռանդ է տալիս, եթե չսնվեն, բույսերը, կենդանիները, մարդիկ չեն կարող շարժվել, որս անել, ապրել, աճել, աշխատել և այլն:

Թեմայի ուսուցումն առաջարկվում է իրականացնել խաղային մեթոդների կիրառմամբ: Օրինակ.

Խաղ. *Անհրաժեշտ է* թել, կպչուն թերթիկներ

Երեխաները զամբյուղից վերցնում են մեկական կպչուն թերթիկ: Կարդում են վրան գրված բառը, փակցնում թերթիկը կրծքին: Վերցնում են մի քանի թել: Դասարանում շրջում են, կարդում մյուսների թերթիկներին գրվածները, թելերից մեկի ծայրը պարտադիր պահելով իրենց ձեռքում՝ մյուս ծայրը տալիս են այն ընկերոջը, որի թերթիկի վրայի գրածը որևէ կերպ կապ ունի իր թերթիկի վրա գրածի հետ:

Օրինակ,

ծառ__ հող ___ ջուր ___ խնձոր,

ձուկ___ որդ___ ջուր:

Ստացվեց ցանց, որը կոչվում է «կյանքի ցանց»:

Դասի ուղղությունը տանել դեպի սննդային կապեր՝ «սննդային շղթաներ»:

Քննարկման համար տրված է Աթաբեկ Խնկոյանի «Խոզն ու ագռավը» առակը: Նպատակն այն է, որ երեխաները բացատրեն խոզ-կաղին-ծառ-հող կապը, ինչպես նաև գիտակցեն բնության պահպանության և բնությանը խնամքով վերաբերվելու անհրաժեշտությունը, ցանկալի է բերեն նմանատիպ այլ օրինակներ:

Դասի *ամփոփման* համար առաջարկում ենք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ կլինի, եթե բույսերը վերանան Երկիր մոլորակից:
- Եթե դուք լինեք գյուղատնտես, ունենաք խնձորի այգի, ինչպե՞ս կանեք, որ շատ բերք ստանաք:

Կատարում ենք *անդրադարձ:* Դասարանի պատին երեք գույնի երեք գրպանիկ կա: Առաջինի մեջ գցում են մեկ փոքրիկ կտոր թուղթ, եթե ամեն ինչ լավ էր, դասից բավականություն են ստացել: Երկրորդի մեջ՝ եթե ինչ-որ բան իրենց դուր չեկավ, երրորդի մեջ՝ եթե գտնում են, որ ամեն ինչ վատ էր: Կարող եք գրպանիկներին համապատասխան լոգոներ փակցնել:

«Ապրելու պայմաններ»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Օգնել սովորողներին՝ դիտարկումներով և փորձերով բացահայտելու, որ կենդանի բնությունը ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի կարիք ունի:

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի/՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. Կկարողանան **դիտարկել** և փորձերի օգնությամբ **համոզվել**, որ կենդանի բնությունը ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի կարիք ունի:

2. Կատարած դիտարկումների և փորձերի արդյունքում **եզրահանգումներ կանեն:**

   - Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն սովորել սովորելու, մաթեմատիկական և գիտատեխնիկական, ինքնաճանաչողական և սոցիալական ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Այս թեմայի ուսումնառությունը նպատակահարմար է կազմակերպել փոքրիկ գործնական նախագծերի միջոցով: Դասագրքում ներկայացված են փորձեր, որոնք պետք է իրականացնել սովորողների հետ: Դրանք *նպատակ* ունեն սովորողների մոտ ձևավորել դիտումներ ու փորձեր անելու, արդյունքներից եզրակացություններ անելու և դրանք աղյուսակում գրանցելու կարողություններ:

Փորձ 1.

Դասարանը բաժանեք 4 խմբի և օգնեք երեխաներին իրականացնել հետևյալ փորձը.

Վերցրեք չորս սենյակային բույսեր: Մեկը դրեք լուսավոր տեղ /բայց ոչ արևի ուղիղ ճառագայթների տակ/, պարբերաբար ջրեք չափավոր քանակությամբ, մյուսը դրեք

նրա կողքին և ամեն օր շատ ջրեք, երրորդը պահեք մութ տեղում և պարբերաբար ջրեք չափավոր քանակությամբ, չորրորդը ընդհանրապես մի ջրեք, պահեք չափավոր լուսավորության պայմաններում:

Այս գործողությունը կատարեք 15 օր:

Հետևե՛ք և արդյունքները գրանցեք աշխատանքային թերթիկում:

№	***Փորձարկվող բույսեր***	***Պայմաններ***	***Արդյունքներ***
1.	Բույս 1	Չափավոր լուսավորություն, չափավոր ջուր	
2.	Բույս 2	Չափավոր լուսավորություն, շատ ջուր	
3.	Բույս 3	Մութ տեղ, չափավոր ջուր	
4.	Բույս 4	Չափավոր լուսավորություն, ջուր չկա	

Աշխատանքային թերթիկ

Փորձ 2

Դասարանը բաժանեք խմբերի: Տվեք հետևյալ առաջադրանքները.

Խումբ 1. Վերցրեք մեկանգամյա օգտագործման երեք ափսե: Դրանց վրա փռեք մի քիչ բամբակ: Բամբակի վրա լցրեք 7-8 հատ լոբու սերմեր: Ափսեներից մեկը ամեն օր չափավոր ջրեք, մյուսը մի ջրեք, երրորդը շատ ջրեք /այնքան, որ ջուրը ծածկի սերմերը/:

Հետևեք 7-10 օր: Արդյունքները գրանցեք աշխատանքային թերթիկում:

Խումբ 2. Վերցրեք մեկանգամյա օգտագործման երեք ափսե: Դրանց վրա փռեք մի քիչ բամբակ: Բամբակի վրա լցրեք 10-15 հատ գարու սերմեր: Ափսեներից մեկը ամեն օր չափավոր ջրեք, մյուսը մի ջրեք, երրորդը շատ ջրեք /այնքան, որ ջուրը ծածկի սերմերը/:

Հետևեք 7-10 օր: Արդյունքները գրանցեք աշխատանքային թերթիկում:

Խումբ 3. Վերցրեք մեկանգամյա օգտագործման երեք ափսե: Դրանց վրա փռեք մի քիչ բամբակ: Բամբակի վրա լցրեք 10-15 հատ ոսպի սերմեր: Ափսեներից մեկը ամեն օր չափավոր ջրեք, մյուսը մի ջրեք, երրորդը շատ ջրեք /այնքան, որ ջուրը ծածկի սերմերը/:

Հետևեք 7-10 օր: Արդյունքները գրանցեք աշխատանքային թերթիկում:

Աշխատանքային թերթիկ

№	*Սեմեր*	*Պայմաններ*	*Արդյունքներ*
1.	Բույս 1	Չափավոր ջուր	
2.	Բույս 2	Շատ ջուր	
3.	Բույս 3	Չենք ջրել	

Փորձ 3.

Փորձ 2-ի արդյունքում ծլած սերմերը տեղափոխեք երկու ապակե տարաների մեջ: Մեկը ամուր ծածկեք կափարիչով: Հետևեք մի քանի օր: Գրանցեք արդյունքները:

Փորձ 4.

Ճանճ բռնեք, գցեք ապակե տարակի մեջ և ամուր փակեք: Ի՞նչ տեղի ունեցավ մի քանի օր անց: Ինչո՞ւ, կարո՞ղ ես բացատրել: Չմոռանաք վերջում ճանճին բաց թողնել:

Այս փորձերի *արդյունքում* սովորողները համոզվում են, որ կենդանի օրգանիզմների կյանքը սերտորեն կախված է անկենդան բնությունից: Օրինակ, բույսերն ու կենդանիները առանց ջրի, լույսի, օդի չեն կարող երկար ապրել: Այստեղ կիրառելի են <<Ինչպես սովորել>> բաժնի Գ, Ե, Զ, Է մեթոդները:

Առաջարկվում է նաև կազմակերպել դերային խաղ, որտեղ ամեն մեկը կլինի բնության մի մասնիկը, ինչ-որ խնդիր կդրվի և բոլորով կլուծեն՝ ամեն մեկը իր ստանձնած դերի շրջանակում: Խաղի մեջ լինի նաև «մարդ» դերը:

«Բնակության պայմաններ» (Բնակության վայր)

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Ձևավորել ճանաչողություն երկրի մակերևույթի որոշ ձևերի մասին, բնորոշել, նկարագրել տեղանքը:

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի/՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **Կտարբերակեն** երկրի մակերևույթի ռելիեֆի որոշ ձևեր՝ լեռներ, հարթավայրեր:

2. **Կբնութագրեն և կնկարագրեն** անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր:

   - Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մեջ կձևավորվեն ինքնաճանաչողական և սոցիալական ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Թեմայի ուսուցման ընթացքում երեխաները բացահայտում են, որ կենդանի բնությունը բնակության վայրի կարիք ունի: Հիմնական բնակության վայրեր են ջուրը, հողը, օդը, կենդանի օրգանիզմները: Առանձին պատկերներով ներկայացվում են տարբեր միջավայրերում ապրող օրգանիզմները, երեխաները ուսումնասիրում են նկարները և դուրս բերում տվյալ միջավայրին բնորոշ օրգանիզմների առանձնա-

հատկությունները (նկարների տակ կան հուշումներ):

Այստեղ կարևոր է, որ երեխաները տարրական պատկերացում կազմեն Երկրի մակերևույթի, ռելիեֆի մասին, նկարագրեն, թե որտեղ ինչ է աճում կամ ապրում:

Որպես առաջադրանք առաջարկվում է երեխաներին բաժանել խմբերի և հանձնարարել դիտել շրջակայքը, պատրաստել պաստառ կամ գիրք, կամ տեսանյութ իրենց գյուղի կամ քաղաքի (կամ թաղամասի) մակերևույթի, այնտեղ ապրող կենդանիների և բույսերի մասին և ներկայացնել ընկերներին: <<Ինչպես սովորել>> բաժնից այստեղ կարելի է կիրառել Ա, Բ, Դ, Է մեթոդները:

Գլխի տարբեր թեմաների վերաբերյալ տվյալ տարիքային խմբին համապատասխան ներկայացված են հայկական մուլտֆիլմերում, օրինակ, հետևյալ հղմամբ՝ https://www.youtube.com/watch?v=odK71qSpLPY:

«ԵՍ ԵՎ ՏԻԵԶԵՐՔԸ»

Այս գլխի ուսումնասիրության ընթացքում սովորողները կարժևորեն իրենց «ես»-ը որպես տիեզերական երևույթների մաս: Նրանց մոտ կձևավորվեն կյանքի տարբեր իրավիճակներում պատճառահետևանքային կապեր ստեղծելու, որոշումներ կայացնելու կարողություններ: Աշակերտները կսովորեն գնահատել իրենց և մյուսների ուժերն ու հնարավորությունները, ձեռք կբերեն կենցաղում կոմպետենտ գործելու կարողություններ և հմտություններ:

«Ես և տիեզերքը» գլուխը ներկայացված է «Շարժում և փոխազդեցություն», «Մարմիններ» բաժիններով, որոնցում ընդգրկված են «Ուժեր, ձայն և լույս», «Նյութեր, մասնիկներ», «Նյութի վիճակ և հատկություն», «Չափեր, չափումներ» բաժինները: Վերջիններս էլ բաժանված են առանձին թեմաների:

«Ես և տիեզերքը» գլխի ուսուցման համար սահմանված են չափորոշչային հետևյալ նպատակները՝

- Նախնական գիտելիք տալ ուժերի մասին, օգնել հասկանալու և փորձով համոզվելու, որ այն, ինչ սկսում է շարժվել, շարժվում է իր վրա ազդող որևէ ուժի շնորհիվ:
- Գաղափար տալ ձայնի, ձայնի աղբյուրների, ուժեղ և թույլ ձայների մասին:
- Օգնել ընդլայնելու պատկերացումները լույսի մասին՝ տարբերակելով լույսի բնական և արհեստական աղբյուրները:
- Օգնել տարբերակելու և նկարագրելու շրջապատում եղած իրերը, մարմինները՝ բնութագրելով դրանց որակական և քանակական հատկանիշները, դասակարգել դրանք՝ ըստ նյութի վիճակի (պինդ, հեղուկ և գազային):
- Օգնել տարբերակելու և ըստ անհրաժեշտության գործածելու չափիչ գործիքները՝ կիրառելով ճիշտ չափման միավորներ:

Սահմանված են չափորոշչային հետևյալ վերջնարդյունքները՝

- Համոզվել, որ այն ամենը, ինչ սկսում է շարժվել, շարժվում է որևէ ուժի շնորհիվ:
- Ներկայացնել մարմինը շարժման մեջ դնելու տարբեր եղանակներ (ձգել, քաշել, հրել տարբեր ուժերով և ուղղություններով):
- Նկարագրելիս օգտագործել ճիշտ բառապաշար՝ ուղղություն, արագություն, դանդաղել, արագանալ, բախվել, շեղվել, հարվածել, ընկնել և այլն:
- Բերել ձայնի աղբյուրների օրինակներ:
- Ցույց տալ, որ հեռվից ձայնի ուժը թուլանում է:
- Բերել լույսի աղբյուրների օրինակներ՝ բնական և արհեստական:

«Ուժ և շարժում»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Նախնական գիտելիք տալ ուժերի մասին, օգնել հասկանալու և փորձերով համոզվելու, որ այն, ինչ սկսում է շարժվել, շարժվում է իր վրա ազդող որևէ ուժի շնորհիվ:

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի/՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **Կբացատրեն և օրինակներով կցուցադրեն**, որ այն ամենը, ինչ սկսում է շարժվել, շարժվում է որևէ ուժի շնորհիվ:

2. **Կներկայացնեն** մարմինը շարժման մեջ դնելու տարբեր եղանակներ (ձգել, քաշել հրել տարբեր ուժերով և ուղղություններով):

3. **Նկարագրելիս** կօգտագործեն ճիշտ բառապաշար՝ ուղղություն, արագություն, դանդաղել, արագանալ, բախվել, շեղվել, հարվածել, ընկնել և այլն:

   - Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն մաթեմատիկական և գիտատեխնիկական, ինքնաճանաչողական և սոցիալական, սովորել սովորելու ***առանցքային կարողունակություններ***:

Օգնություն/ուղղորդում ուսուցչին

Թեման սկսվում է խաղահրապարակի պատկերով, որ-

տեղ երեխաները անվաչմուշկ/սքեյթ/ են քշում, պարան են ձգում, հեծանիվ են վարում, ճոճանակին ճոճվում են, բատուտի վրա թռվռում են և այլն: Երեխաները պատմում են նկարը: Այնուհետև հաջորդում են հերոսների գործողություններ՝ երկխոսությունների ուղեկցմամբ: Սովորողների հետ գալիս ենք եզրահանգման, տալիս ենք ուժի սահմանումը (պարզագույն բառերով):

Հաջորդիվ նեկայացվում են ուժերի տեսակների մասին պատմող նկարներ, որոնցում պատկերված են տարբեր ուժեր: Ուսուցչի համար գրված են նաև դրանց անունները: Սովորողների հետ իրականացրեք պատկերված ուժերի փորձերը, թողեք մեկնաբանեն:

Կարող եք սովորողներին ցուցադրել ուժերի վերաբերյալ տեսանյութեր համացանցից:

Ձգողության ուժին անդրադառնալիս կարող եք լրացուցիչ պատմել Նյուտոնի մասին, քանի որ «հուշարարը» Նյուտոնն է:

Ձգողության ուժին զուգահեռ սովորողներին ներկայացրեք Արեգակնային համակարգը և այն, թե ինչպես են տիեզերական ձգողության շնորհիվ մոլորակները որոշակի ուղեծրով պտտվում Արեգակի շուրջը:

Սովորողների հետ իրականացրեք «Փուչիկից հրթիռ» **գործնական աշխատանքը**:

Գործնական աշխատանքի ***նպատակն է*** սովորողներին ցույց տալ ուժի ազդեցությամբ մարմնի շարժումը:

Վերջնարդյունքը՝ կբացատրեն, թե ինչ տեսան, ինչ ուժեր էին գործում, ինչ ուղղությամբ, ինչ ուժով:

Պարտադիր կերպով նախ ինքներդ կատարեք փորձը, երեխաների տեսանկյունից բացատրեք այն (փուչիկի բերանը բացելուց հետո օդը **մեծ ուժով** դուրս եկավ, **հրեց** փուչիկին: Այդ ուժի շնորհիվ փուչիկը **շարժվեց** օդին **հակառակ ուղղությամբ:** Ինչքան թելը հարթ է և սահուն, այնքան արագ է շարժվում փուչիկը, քանի որ թելի և ձողիկի շփման ուժը փոքր է): Գործնական աշխատանքի քայլերը ավելի լավ պատկերացնելու համար կարող եք առաջնորդվել https://www.youtube.com/watch?v=TfZsGy_q9zA տեսանյութով:

Անհրաժեշտ պարագաներ՝ փուչիկ, հյութ խմելու ձողիկ, կպչուն ժապավեն, թել:

Ընթացքը: Նախապես սովորողներին ներկայացնում ենք գործնական աշխատանք - խաղի նպատակը, հստակեցնում, թե ինչին պետք է ուշադրություն դարձնեն նրանք, ինչ հարցերի պատասխանեն:

Թելի մի ծայրը կապում են աթոռից կամ այլ հարմար իրից, օրինակ, դռան բռնակից, մյուս ծայրից անց են կացնում հյութ խմելու ձողիկը և թելի մյուս ծայրը կապում են մեկ այլ աթոռից կամ այլ անշարժ իրից:

Փուչիկը փչում են, ծայրը չեն կապում, բռնած պահում են: Կողքից կպչուն ժապավենով թելին անցկացրած ձողիկը փակցնում են փուչիկին: Պատրաստի «հրթիռները» բերում են ելման դրություն, 1,2,3 հաշվարկով բաց թողնում փուչիկի բռնած ծայրը: Այսպես խմբերով մրցում են: Որպես ամփոփում խմբերը ներկայացնում են իրենց եզրակացությունը՝ ինչ տեսան, ինչ ուժեր էին գործում, ինչ ուղղությամբ, ինչ ուժով:

Կարևոր է անդրադառնալ Արեգակնային համակարգին, ներկայացնել, որ Արեգակնային համակարգում Արեգակն ունի ամենաուժեղ ձգողականությունը, ինչի շնորհիվ էլ մոլորակները նրա շուրջը պտտվում են որոշակի ուղեծրով: Սա **տիեզերական ձգողության** օրինակ է:

«Արագընթաց գնացքն ու հեծանիվը», «ավտոմեքենան ու

հետիոտնը» ներկայացնում են **արագ** և **դանդաղ** շարժումը:

Որպես «Ուժ և շարժում» թեմայի **գործնական աշխատանք,** առաջարկվում է ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ համատեղ անցկացնել փոխանցումավազք (էստաֆետ), որից հետո սովորողները կմեկնաբանեն «արագ», «դանդաղ», «ուժ» (օդի դիմադրություն, երկրի ձգողություն, շփում և այլ) հասկացությունները:

Առաջարկվում է կարդալ «Պապն ու շաղգամը», «Երեք խոզուկները» հեքիաթները, քննարկել, թե ինչ ուժեր են կիրառվում շաղգամը հողից ձգելու համար, ինչու խոզուկների կառուցած տները գայլի փչելով քանդվեցին, որը չքանդվեց, ինչու և այլն: Սա ենթադրում է <<Ինչպես սովորել>> բաժնից Ը, Թ մեթոդները:

Այս ամենը պետք է իրականացնել տարրական մակարդակում՝ պահպանելով նյութի գիտականությունը:

Թեման կարելի է ամփոփել «Ինձնից առաջ հարցրու երեք հոգու» հնարի միջոցով (ներկայացված է ձեռնարկի հավելվածում):

Այս հնարի իմաստն այն է, որ աշակերտները սովորեն նաև միմյանցից: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին հարցերով դիմել իրենց դասընկերներին և իրեն դիմել միայն այն բանից հետո, երբ երեք աշակերտների դիմելուց հետո չեն ստացել հարցի պատասխանը:

«Լույս»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Օգնել ընդլայնելու պատկերացումները լույսի մասին՝ տարբերակելով լույսի բնական և արհեստական աղբյուրները:

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի/՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **Կտարբերակեն** լույսի բնական և արհեստական աղբյուրները, **կբերեն** լույսի աղբյուրների **օրինակներ**:

   - Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն մաթեմատիկական և գիտատեխնիկական, սովորել սովորելու ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Նախատեսված է թեման սկսել զգայարանների մասին հիշեցնող հարցով՝ «Հիշո՞ւմ եք, թե ո՞ր օրգանով ենք տեսնում»: Երեխաներին բացատրում ենք, որ մենք տեսնում ենք այն, ինչից լույս է ճառագայթում: Այն մարմինները, որոնցից լույս է ճառագայթում, կոչվում են **լույսի աղբյուրներ**: Այնուհետև երեխաներին պետք է սովորեցնենք, որ կան լույսի **բնական** և **արհեստական** աղբյուրներ: Բնականները բնության մեջ կան, ինքնուրույն լույս են արձակում, օրինակ, արև, աստղեր, կայծակ, լուսատտիկ և այլն: Արհեստականները ստեղծվում են մարդու կողմից, օրինակ, այրվող ինչ-որ մարմին, լապտեր, սեղանի լուսամփոփ և այլն:

Երեխաների մոտ հաճախ թյուր կարծիք կա, որ Լուսինն էլ է լույսի աղբյուր: Անհրաժեշտ է նրանց բացատրել, որ հայելու նման Լուսինն էլ է անդրադարձնում Արեգակի լույսը, և մենք տեսնում ենք նրա լուսավոր մասը: Լուսինը լույսի աղբյուր չէ:

Երեխաներին պետք է բացատրենք, թե ինչպե՞ս ենք տեսնում այն մարմինները, որոնք ո՛չ իրենց սեփական լույսն

ունեն, ոչ էլ արհեստականորեն են լուսավորվում, օրինակ, գիրքը: Նա էլ արևից իր վրա ընկած լույսն է անդրադարձնում: Սրանով գաղափար ենք տալիս նաև **անդրադարձման** մասին:

Անդրադարձման երևույթը հասկանալու համար առաջարկվում է այն ցուցադրել հայելու միջոցով՝ ինչպես ցույց է տրված դասագրքի նկարում: Թողեք երեխաները ինքնուրույն փորձեն և համոզվեն, որ լույսն անդրադառնում է, դիտեն, թե ինչպես է անդրադառնում:

Այս մասին տվյալ տարիքային խմբին համապատասխան ներկայացված են հայկական մուլտֆիլմերում՝ https://www.youtube.com/watch?v=odK71qSpLPY: Նախապես դիտեք մուլտֆիլմը, ընտրեք թեմային համապատասխան հատվածը և դասարանում ցուցադրեք այն, քննարկեք երեխաների հետ:

Դասն ամփոփելու համար երեխաների հետ կազմեք գծապատկեր լույսի աղբյուրների վերաբերյալ.

Փոքրիկ կպչուն թղթերի վրա գրեք լույսի բնական և արհեստական աղբյուրների անուններ, օրինակ, Արեգակ, աստղ, Լուսին, կրակ, կայծակ, լապտեր, լուսատտիկ, կամ ունեցեք դրանց նկարները, որոնք երեխաները ընտրողաբար կփակցնեն համապատասխան դաշտերում:



«Ձայն»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի՝

1. Գաղափար տալ ձայնի, ձայնի աղբյուրների, ուժեղ և թույլ ձայների մասին:

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **Կբերեն** ձայնի աղբյուրների օրինակներ:

2. **Ցույց կտան,** որ հեռվից ձայնի ուժը թուլանում է:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մոտ կձևավորվեն մաթեմատիկական և գիտատեխնիկական, սովորել սովորելու ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Թեմայի մուտքը ականջի նկար է՝ ձայնային ալիքների պատկերով:

Այս նկարի շուրջ խոսելով, երեխաներին հասցնում ենք այն գաղափարը, որ ձայնը անտեսանելի ալիքներ է: Ձայնն առաջանում է մարմինների շարժումներից և տատանումներից:

Ձայնային ալիքների տարածումը կարող եք երեխաներին ցույց տալ ջրի մեջ քար կամ ինչ-որ մարմին գցելով: Քարն ընկնելու տեղից շրջանաձև ալիքներ են տարածվում: Երե-

խաներին պետք է բացատրել, որ ձայնն էլ է նման կերպ տարածվում բոլոր ուղղություններով, դրա համար էլ մենք լսում ենք նաև մեր հետևից եկող ձայները:

Ձայնային ալիքների փորձը երեխաները հաճույքով անում են թղթե բաժակների և թելի միջոցով:

Օգնում եք երեխաներին, որ թղթե բաժակների տակ ասեղով շատ փոքր անցք անեն: Դրանց միջով անցկացնում են թել, կապում են ծայրը, որ միջից դուրս չգա: Թելի մյուս ծայրը նույն ձևով միացնում են մեկ այլ բաժակի: Աշակերտներից մեկը մի բաժակը ձեռքին մնում է դասասենյակում, մյուսը մյուս բաժակով դուրս է գալիս միջանցք: Առաջինը բաժակի մեջ խոսում է, մյուսի մոտ բաժակի մեջ լսվում է: Սրանով ցույց ենք տալիս ձայնի տարածումը թելի միջոցով:

Այնուհետև բերված նկարները քննարկելու միջոցով տարբերակում ենք ձայնի բնական և արհեստական աղբյուրները:

Հասկանալու համար, թե երեխաները որքանով յուրացրեցին ամենը, ցուցադրում ենք ձայն արձակող տարբեր մարմինների նկարներ, օրինակ, շուն, կիթառ, զարթուցիչ, այծ, ամպրոպ, գետ և այլն: Երեխաները կանաչ և կարմիր քարտերը բարձրացնելու միջոցով արձագանքում են: Այսինքն, նախապես պայմանավորվում ենք բնական աղբյուրի դեպքում բարձրացնել կանաչ քարտը, արհեստականի դեպքում՝ կարմիրը: Այսպիսով հետադարձ կապ են տալիս, պարզում ենք, թե ում մոտ ինչն է թերի մնացել, նորից անդրադառնում այդ հարցերին, և նոր միայն անցնում առաջ:

Օրինակով ցույց տվեք, որ ձայնը հեռվից ավելի թույլ է լսվում, սա նշանակում է, որ ձայնի ուժը թուլանում է: Օրինակ, աշակերտներից մեկին խնդրեք կանգնի դասասենյակի մի ծայրին, ինչ-որ բան ասի, հետո չորս քայլ առաջ գնա, նորից նույն ուժգնությամբ ասի նույն բանը: նորից

չորս քայլ առաջ գնա և անի նույնը: Սկզբում իր կողքի երեխան ավելի լավ է լսում, ինչքան հեռանում է, ձայնը վատ է լսվում:

Այս թեմայում առաջարկում ենք երեխաներին նաև **ցույց տալ ձայնը**՝ նկարներում պատկերված փորձերի միջոցով:

Ձեզ անհրաժեշտ է բարձրախոս, մոմ, կրակայրիչ:

Մոմը վառում ենք և դնում անջատված բարձրախոսի դիմաց: Տեսնում ենք, որ բոցը ուղիղ է: Այնուհետև բարձր ձայն ենք միացնում, տեսնում ենք, որ բոցը թրթռում է: Սա էլ է ցույց տալիս ձայնային ալիքների տարածումը:

Ձայնը ցուցադրելու հաջորդ փորձի համար ***ձեզ անհրաժեշտ է*** բարակ ապակուց երկու բաժակ: Բաժակները կիսով չափ լցնում եք ջրով, դնում իրար կողքի, բայց ոչ կպած: Մեկի եզրին նկարում պատկերվածի պես դնում ենք ասեղ: Մատը թրջում եք և նուրբ սահեցնում մյուս բաժակի եզրով: Ձայն է առաջանում, որից կողքի բաժակի եզրին դրած ասեղը շարժվելով ընկնում է ցած: Այս և այլ փորձեր կարող եք դիտել http://surl.li/hcbhe հղումով:

Երեխաները նկարագրում և բացատրում են տեսածը: Փորձերն ***ամփոփում եք:***

Թեման *ամփոփում եք* հետևյալ կերպ.

1. Հարց՝ Ի՞նչ է ձայնը:

2. Երեխաներին բաժանում ենք 3 խմբի: Մի խմբին տալիս ենք թել, մյուսին՝ ճկվող քանոն, երրորդին սպիտակ թուղթ, վրան ձայնի աղբյուրների գծապատկերը, ու մատիտներ: Առաջին երկու խմբերին հրահանգում ենք տրված առարկայի միջոցով ստանալ ձայն (թելը երկու ծայրից ուժեղ ձգում են, իսկ քանոնը՝ մի ծայրը անշարժ պահում են սեղանի վրա,

մյուս ծայրին մատով հարվածում): Երրորդ խմբին հանձնարարում եք աղյուսակի «Բնական» և «Արհեստական» հատվածներում գրել կամ նկարել համապատասխան բառեր կամ նկարներ: Այստեղ օգտագործվում են <<Ինչպես սովորել>> բաժնի Հ, Է, Թ մեթոդները:

Կատարեք անդրադարձ. երեխաներն ասեն՝ ինչը դուր եկավ, որ միշտ կհիշեն, ինչը կփոխեին այդ դասից (կամ ընդհանրապես թեմայի ուսումնառության գործընթացից, քանի որ թեման կարող եք անցնել մի քանի դասաժամում):

«Նյութեր և մասնիկներ. նյութերի հատկությունները»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Օգնել տարբերակելու և նկարագրելու շրջապատում եղած իրերը, մարմինները՝ բնութագրելով դրանց որակական և քանակական հատկանիշները, դասակարգել դրանք՝ ըստ նյութի վիճակի (պինդ, հեղուկ և գազային):

Թեմայի վերջնարդյունքները /ըստ առարկայական չափորոշչի/՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **Կբնութագրեն, կնկարագրեն** նյութերը և մարմինները:
2. **Կտարբերակեն** բնական և արհեստական նյութերը:
3. **Կթվարկեն** նյութերի հատկությունները:
4. **Կտարբերեն** նյութերի երեք վիճակները, կբերեն օրինակներ:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մեջ կձևավորվեն մաթեմատիկական և գիտատեխնիկական, սովորել սովորելու ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Դասը սկսեք նկարի միջի մարմինները նկարագրելով: Դրանցից մեկը Դուք նկարագրեք, օրինակ՝ «Սեղանը պատրաստված է փայտից: Փայտը պինդ, բնական նյութ է: Սեղանը հարթ է: Մեծ չէ: Հատակից բարձր է 50 սմ: Բաց շագանակագույն է»: Մնացած մարմինները թողեք երեխաները նույն սկզբունքով նկարագրեն իրենք:

Քանի որ նախորդ թեմաներից երեխաները արդեն բնականն ու արհեստականը տարբերելու որոշակի հմտություն են ձեռք բերել, իրենց միջոցով սահմանեք բնական և արհեստական նյութերը:

Նյութերի մասնիկներից կազմված լինելը կարող եք ցուցադրել տարբեր ձևերով, օրինակ, թուղթը անընդմեջ պատռում եք, կավիճը կոտրտում եք, հետո փշրում: Այս օրինակներով երեխաները կմոդելավորեն մարմին-նյութ-մասնիկ կառուցվածքը: Այստեղ բացատրում եք երեխաներին, որ «նյութը չենք կարող անվերջ մանրացնել: Կան փոքր, անբաժանելի մասնիկներ, որոնք աչքի համար անտեսանելի են»: Այս խոսքերի մոտ նկարված է Դեմոկրիտոսը: Կարող եք հպանցիկ անդրադառնալ այն փաստին, օրինակ, որ նա հին հույն փիլիսոփա է: Նա է դրել այն գաղափարի հիմքը, որ ամեն ինչ բաղկացած է մանր մասնիկներից: Յուրաքանչյուր իր իրենից ներկայացնում է մանրագույն անբաժանելի մասնիկների միացություն:

Նկարագրելով դասագրքի նկարում պատկերված նյութերը կամ իրենց շրջապատի նյութերը՝ օգնեք սովորողներին խմբավորելուհատկությունները՝ գույն, ձև, չափ, ամրություն, հոտ, համ, և այլն:

Այնուհետև սահուն անցում կատարեք նյութի վիճակներին՝ պինդ, հեղուկ, գազային: Նկարներից օգտվելով՝ երեխաները թող թվարկեն տարբեր վիճակներում գտնվող նյութեր: Սա ընկալելուց, յուրացնելուց հետո առաջադրեք հարց.

1. Որո՞նք են ջրի երեք վիճակները: Նկարագրի՛ր, թե ինչպես կստանաս դրանք: Ցանկալի է դասի ժամանակ փորձել սառույցից ստանալ ջուր, ջրից՝ գոլորշի: Սրա համար ***ձեզ անհրաժեշտ է*** մի քանի կտոր սառույց, մետաղե կամ հրակայուն ապակուց տարա, սպիրտայրոց:

Թեմայի յուրացվածության աստիճանը պարզելու համար հրահանգում եք՝ որ յուրաքանչյուրը արագ ասի մեկ բառ, որը տպավորվել է այս թեմայից՝ չկրկնելով մյուսներին: Նկարագրված աշխատանքները պետք է իրականացվեն <<Ինչպես սովորել>> բաժնի Ը, Թ մեթոդների սկզբունքով:

Դասն *ամփոփեք* դասագրքում տրված աղյուսակի լրացմամբ:

«Չափեր, չափումներ»

Նպատակը /ըստ առարկայական չափորոշչի/՝

1. Օգնել տարբերակելու և ըստ անհրաժեշտության գործածելու չափիչ գործիքները՝ կիրառելով ճիշտ չափման միավորներ:

Թեմայի վերջնարդյունքները՝

Սովորողները թեմայի ուսումնասիրության արդյունքում.

1. **Կճանաչեն** տարբեր չափիչ սարքեր:

2. **Կտարբերակեն**, թե որ սարքով ինչ են չափում:

3. **Կկատարեն** պարզագույն **չափումներ**:

- Այս թեմայի ուսումնառության ընթացքում սովորողների մեջ կձևավորվեն մաթեմատիկական և գիտատեխնիկական, սովորել սովորելու ***առանցքային կարողունակություններ***:

<Օգնություն / ուղղորդում ուսուցչին

Նյութն ամփոփված է երեք մասերում՝ ի՞նչն ենք չափում, ինչո՞ւ ենք չափում, ինչպե՞ս ենք չափում: Ընդհանրապես «չափել» նշանակում է ինչ-որ բան համեմատել իբրև միավոր ընդունված չափի հետ:

Դասը սկսեք «Դիտի՛ր նկարները և ասա՛, կարելի՞ է ամեն ինչ չափել:» հարցով: Այստեղ պատկերված են նկարներ, որոնցում դերձակը հաճախորդի չափսերն է վերցնում (երկարության չափում), կանգառում կանգնած մարդը ժամացույցին է նայում (ժամանակի չափում), վարորդը արագաչափին է նայում (արագության չափում), ծննդյան տորթի վրա «7» թվով մոմ է (տարիքն ենք չափում), հիվանդին ջերմաչափում են (ջերմություն են չափում), խոհարարը ճաշին գդալով աղ է ավելացնում (զանգված ենք չափում), շինարարը չափում է պատի երկարությունը (երկարություն ենք չափում): Այնուհետև ցույց տվեք, որ կարելի է չափել նաև գույները՝ բաց-մուգ, լույսը՝ ուժեղ-թույլ, ձայնը՝ բարձր-ցածր և այլն:

Նախապես պատրաստած սահիկաշարով ցուցադրեք ինչ-որ բաներ չափելու իրավիճակներ: Երեխաները կասեն, թե **ինչ են չափում**: Այսպիսով նաև կբացահայտեք, թե ինչն է թերի յուրացվել, նորից կանդրադառնաք դրան, այնուհետև կանցնեք թեմայի հաջորդ մասին:

Հաջորդիվ երեխաներին հարցնում եք, թե **ինչու է պետք չափել**: Պատկերված նկարները նկարագրելու միջոցով երեխաները հանգում են այն մտքին, որ

- առևտուր անելիս պետք է իմանան, թե որքան ապրանքի համար որքան գումար պետք է վճարեն,
- ո՞ր ճանապարհին ի՞նչ արագությամբ պետք է վարեն մեքենան, որ չվտանգեն իրենց և մյուսների կյանքը,
- ճիշտ չափեն մարդու արյան ճնշումը, որ ճիշտ չափաբաժնով դեղ օգտագործեն,
- եթե ընտրեն կոշիկի ոչ ճիշտ չափս, կվնասեն ոտքերը և այլն:

Երեխաներին հնարավորություն տվեք արտահայտեն սեփական կարծիքները, թե ինչու է պետք ամեն ինչ չափել: Ամփոփեք և անցեք թեմայի հաջորդ հատվածին, թե **ինչով պետք է չափել**:

Պատկերված է երեխաների երկխոսություն, որում մեկն ասում է, որ պետք է չափումներ անել հատուկ սարքերով: Յուրաքանչյուրն ասում է, թե ինչ է կարողանում չափել:

Այնուհետև չափող սարքերի նկարներ են: Երեխաները պետք է անվանեն սարքը և ասեն, թե դրանով ինչ են չափում, ինչ *չափման միավորներով*: Օրինակ, քանոնով, չափերիզով, ոտքի քայլով և այլն (թիզ, ոնտաչափ, այլ) չափում են ինչ-որ մարմնի երկարություն, մարդու հասակ, ջերմաչափով՝ ջերմաստիճան, ժամացույցով, օրացույցով՝ ժամանակ և այլն: Երեխաները ներկայացնում են, թե ինչ սարքեր գիտեն իրենք:

Հաջորդիվ անցնում եք թեմայի՝ «Ինչը ինչո՞վ կարելի է չափել» հատվածին: Այստեղ **գործնականում** երեխաները չափումներ են կատարում: Անվանում են դասագրքում պատկերված գործիքները, թվարկում են այլ գործիքներ,

սովորեցնում եք չափման միավորները:

Ժամանակի չափման համար նախատեսված է, որ երեխաները խմբերով պատրաստեն օրացույց և ժամացույց (մի խումբը կարող է պատրաստել սլաքներով, մյուսը՝ էլեկտրոնային): Սրա *նպատակն է* երեխաների մեջ ավելի խորացնել ժամանակի չափման միավորների մասին պատկերացումները:

Գործնական աշխատանքի համար *ձեզ անհրաժեշտ* է գունավոր թղթեր, ստվարաթուղթ, քանոն, մատիտներ, կոճգամ (ժամացույցի սլաքների ամրացման համար), մկրատ:

Հեռավորության չափման համար նախատեսված է հետևյալ գործնական աշխատանքը. սեղանին դրեք չափման տարբեր սարքեր: Դասարանը բաժանեք խմբերի, յուրաքանչյուր խումբ թող սեղանից վերցնի համապատասխան գործիքը և չափի՝ 1. սեղանի երկարությունը, 2. դասագրքի երկարությունը, 3. դասասենյակի մուտքից մինչև իրենց սեղան եղած հեռավորությունը (կարող են նաև ոտնաչափով կամ քայլով չափել), 4. ընկերներից մեկի հասակը: Կատարեն գրանցումներ: Նշեն չափման միավորը: Գործնական աշխատանքի համար *ձեզ անհրաժեշտ է* տարբեր երկարության քանոններ, չափերիզ, ժամացույց, վայրկենաչափ, ջերմաչափ, օրացույց, կշեռք և այլն, թուղթ, գրիչ:

Թեմայի՝ **զանգվածի** չափման հատվածում նկարների միջոցով երեխաների մեջ ձևավորում եք առևտուր անելու մշակույթ, խոսքի կուլտուրա, ճիշտ արտահայտվելու կարողություն: Կարող եք երեխաներին տանել մոտակա խանութ՝ առևտուր անելու: Կարևոր է տարբերել «զանգված» և «կշիռ» եզրույթները: Այստեղ խոսքը զանգվածի մասին է, որը չափում են մարմինը կշռելով: Երեխաները համեմատում են տարբեր զանգվածներով մարմինները, ներկայացնում՝ որն է ծանր, որն է թեթև:

Լրացուցիչ նյութ ուսուցչի համար. Ժամանակակից ֆիզիկայում *զանգվածը* և *կշիռը* հիմնովին տարբեր հասկացություններ են: Կշիռը ուժ է, որն ի հայտ է գալիս նյութի վրա ձգողականության ազդեցության հետևանքով, մինչդեռ զանգվածը ցույց է տալիս մարմնի իներտության չափը: Օրինակ, անկշռության պայմաններում բոլոր մարմինների կշիռը զրո է, մինչդեռ յուրաքանչյուր մարմնի զանգվածը տարբեր է: Եթե մարմնի դադարի վիճակում կշեռքների ցուցումները լինեն զրոյական, ապա նույն արագությամբ մարմիններով կշեռքներին հարվածելիս ազդեցությունները տարբեր կլինեն:

Այդուհանդերձ, չնայած ֆիզիկայում պահպանվում է զանգված և կշիռ հասկացությունների տարբերակումը, առօրյա կյանքի բազմաթիվ իրավիճակներում «կշիռ» բառը հաճախ կիրառվում է «զանգվածի» փոխարեն: Օրինակ, ասում ենք, որ ինչ-որ մարմին կշռում է այսքան կիլոգրամ, չնայած *կիլոգրամը* զանգվածի չափման միավոր է:

Կշիռը միավորների ՄՀ -ում չափվում է *նյուտոններով*: Կշիռը կարելի է չափել զսպանակային կշեռքի միջոցով: Համապատասխան ձևով աստիճանավորելու դեպքում այդպիսի կշեռքով կարելի է չափել նաև զանգվածը: Լծակավոր կշեռքները նման աստիճանավորման կարիք չունեն, քանի որ այդ դեպքում համեմատվում են զանգվածները: https://www.youtube.com/watch?v=hdt4qwWv0Oc և https://lib.armedu.am/files/resource/files/2022-04-21/67ceb674e5ad5badaefc4508eefca903.pdf հղումներով կարող եք թեմայի շուրջ լրացուցիչ տեղեկություն ստանալ:

Կարող եք նաև «Խանութ» խաղալ. երեխաներից մի քանիսը լինեն վաճառողներ, մի քանիսը դրամարկղի աշխատողներ, մյուսները հաճախորդներ: Հետո փոխեք դերերը:

Այս դասի համար *ձեզ անհրաժեշտ է* տարբեր զանգված-

ներով առարկաներ, պոլիէթիլենային տոպրակ, զանգ-վածի չափելու կշեռք, խաղալիք դրամներ:

Ջերմաստիճանի չափման դասը սկսվում է երեխաների երկխոսությամբ. այդ կերպ սովորողները իմանում են, որ կարևոր է տանը ջերմաչափ ունենալ, նաև այն, որ լինում են տարբեր ջերմաչափեր, օրինակ, ջրի, օդի, մարմնի: Երեխաներին ցուցադրեք ջերմաչափերի տարբեր տե-սակներ և սովորեցրեք դրանցից օգտվել:

Դասարանը բաժանեք խմբերի, տվեք ջերմաչափեր, օգ-նեք չափել մարզադահլիճի, միջանցքի, դասասենյակի, բակի ջերմաստիճանը և գրանցել աղյուսակում: Այստեղ կարելի է առաջնորդվել <<Ինչպես սովորել>> բաժնի Զ, Է մեթոդների տրամաբանությամբ:

Թեմայի *ամփոփման* համար կարող եք կիրառել «Տասը տարի անց» հնարը. նշե՛ք մեկ բան, որը կուզենայիք հիշել այս թեմայից տասը տարի անց: Երեխաներն արտահայ-տում են իրենց մտքերը:

Անդրադարձ կատարեք ամբողջ թեմային: Երեխաներն ասում են, թե ինչ արեցին, ինչպես արեցին, ինչը այլ կերպ կանեին, ինչն իրենց դուր եկավ:

13. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ԳՆԱՀԱՏՈՒՄ

(ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N11-Ն հրամանի հավելված)

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Ըստ նպատակի կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:

Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.

2) բանավոր հարցում.

3) բաց հարցերով քննարկում.

4) այլ:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Ձևավորող գնահատման խնդիրն է ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը.

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը.

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում:

Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում է տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) տնային աշխատանք.

6) նախագծային աշխատանք.

7) քննարկում, բանավեճ.

8) այլ:

Ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները:

Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ
(միավորային և բնութագրող)

(Տարրական դասարաններում միավորային գնահատում չի կիրառվում)

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ **մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:**

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

(Տարրական դասարաններում միավորային գնահատում չի կիրառվում)

Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:

Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավորներով:

Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:

ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով:

Դրական է գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում են նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումները:

Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝

1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը.

2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել.

3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

Բնութագրող գնահատման ընթացքում ուսուցիչը արձանագրում է՝

1) սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը.

2) առարկայական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների յուրացումը.

3) տեղեկատվության մտապահումը.

4) աշխատանքի ճշգրիտ և մանրակրկիտ կատարումը.

5) սովորողի ուսումնառության մոտիվացիան.

6) սովորողի ինքնուրույնությունը.

7) սովորողի ինքնագնահատման ունակությունը:

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից:

Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

1) 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին.

2) տարրական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրի ավարտին:

Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Սովորողի ուսումնական ձեռքբերումներն արձանագրելու համար հիմք են ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

Բնութագրող գնահատման չափանիշները հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների:

Ամփոփիչ գնահատման ձևերից սովորողների ուսումնառության արդյունքները գրանցվում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում և կցվում են սովորողի անձնական գործին:

Հավելված 2

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ, ԳՈՐԾԻՔՆԵՐ

Լուսացույց

Սովորողներին բաժանում ենք լուսացույցի գույներով քարտեր: Կարմիրը նշանակում է «չգիտեմ», դեղինը՝ «կասկածում եմ», կանաչը՝ «համաձայն եմ»:

Դասի կամ թեմայի ուսումնասիրության ընթացքում կամ վերջում (ըստ նպատակահարմարության) ուսուցիչը որոշակի պատասխան ենթադրող հարց է առաջադրում: Երեխաներից մեկը պատասխանում է: Այնուհետև, ովքեր համաձայն են հնչած պատասխանին՝ բարձրացնում են կանաչ քարտերը, ովքեր կասկածում են՝ դեղին քարտերը, իսկ ովքեր համաձայն չեն՝ կարմիր քարտերը:

Արդյունքում երևում է յուրացվածության աստիճանը: Կանաչ քարտեր բարձրացրած աշակերտները բացատրում են նյութը դեղին և կարմիր քարտեր բարձրացրած աշակերտներին:

Գտի՛ր կեսը

Օրինակ, «Կենդանի և անկենդան բնություն» թեմաների ուսումնասիրությունից հետո պատրաստել համապատասխան պատկերներով փազլեր, օրինակ, «կենդանի բնություն», «անկենդան բնություն», «անկենդան մարմիններ», «բնություն»: Փազլերի մասերը բաժանել երեխաներին և հրահանգել, որ դրանք միացնեն: Յուրաքանչյուր ստացված պատկերի շուրջ հավաքվեն դրա մասերի «տերերը», ձևավորեն խմբեր և պատմեն ստացված նկարի բովանդակությունը:

Այս գործիքի կիրառման արդյունքում ուսուցիչը աշխույժ միջավայրում հետադարձ կապ է ստանում թեմայի յուրացվածության աստիճանի մասին և շտկում բացթողումները:

3-2-1

Սովորողները գրում են 3 բան, որ այսօր սովորեցին, 2 բան, որ հետաքրքրեց, 1 բան, որ չհասկացան: Դասասենյակի մի անկյունում ունենում ենք «3-2-1» գրպանիկներ, որոնց մեջ երեխաները տեղավորում են գրառումներով իրենց

թերթիկները: Ուսուցիչը դրանք հավաքում է, ուշադրություն է դարձնում հատկապես «2» և «1» գրպանիկի պարունակությանը, հաջորդ դասին անդրադառնում դրանց:

Ինքնագնահատում զմայլիկներով

Սովորողներին տալիս ենք թերթիկներ, որոնց վրա տարբեր հույզեր արտահայտող զմայլիկներ են պատկերված: Նրանք պետք է շրջանակի մեջ առնեն այսօրվա դասից ունեցած զգացողությունն արտահայտող զմայլիկը:

Գուշակիր հարցը

Ուսուցիչը հնչեցնում է պատասխանը, իսկ աշակերտները գուշակում են, թե ո՞ր հարցի պատասխանն է: Այս գործիքի միջոցով երեխաների մոտ ձևավորվում է ստեղծագործաբար մտածելու ունակություն, սովորում են ձևակերպել հարցեր, իսկ ուսուցիչը պատկերացում է կազմում այն մասին, թե երեխաները որքանով են յուրացրել նյութը, ինչպես են պատկերացնում այն:

Ձևավորող գնահատման էլեկտրոնային գործիքներ

Edpuzzle, Flipgrid, Formative, Google Forms, Kahoot!, Mentimeter, Plickers, Quizizz, Spiral.ac այլ:

Հավելված 3

ՍՈՎՈՐԱԾԸ ՊԱՐԶԵԼՈՒ ԵՒ ԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՀՆԱՐՆԵՐ

1. Ֆրայերի մոդելը

Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

2. Գիտելիքի դոմինո

Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:

Քայլ 1 Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից:

Քայլ 2 Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին:

Քայլ 3 Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4 Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը:

Քայլ 5 Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Օրինակ՝ արդար աշխատանքն արժանի է արդար վարձատրության:

Քայլ 6 2-3 աշակերտ արտահայտում է վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

3. Մտքերի հոսք

Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից: Այնուհետև ուսուցիչը կարող է շարունակել նյութը բացատրել կամ կարող է առաջարկել զույգերով աշխատել:

4. Երկու բան

Դասի կամ թեմայի վերջում սովորողներին ասում ենք նշեն երկու բան, որ սովորեցին այսօր, երկու բան, որ սովորել են նախորդ դասին, երկու բան, որ սովորեցին այս թեմայից, երկու բան, որոնց մասին կուզենային իմանալ ավելին, երկու բան, որ վերաբերում են իրենց կյանքին և կապված են այսօրվա թեմայի հետ:

6. Տասը տարի անց

Նշե՛ք մեկ բան, որը կուզենայիք հիշել այս թեմայից տասը տարի անց:

7. Սկսել, դադարեցնել, պահել

- Նշե՛ք մեկ բան, որը կուզենաք սկսել:
- Նշե՛ք մեկ բան, որը կուզենաք դադարեցնել:
- Նշե՛ք մեկ բան, որը կուզենաք շարունակել:

8. Հարցեր

Հարցեր, որոնք հնարավորություն են տալիս պարզել, թե ինչ չափով են աշակերտները յուրացրել թեման:

- Ինչո՞վ են X-ն ու Y-ը իրար նման:
- Ո՞րն է նյութի հիմնական գաղափարը:
- Որո՞նք են X-ի ուժեղ և թույլ կողմերը:
- Ինչպե՞ս է X-ը կապված Y-ի հետ:
- Համեմատե՛ք X-ն ու Y-ը՝ ըստ Z չափանիշի:
- Որո՞նք են խնդրի լուծման տարբերակները:
- Ի՞նչը չեք հասկացել:

9. Մետաիմացության թերթիկ

Այս թերթիկը լրացնելիս կատարեք հետևյալ չորս քայլերը՝

1. Ընթերցե՛ք հարցերը: Դրե՛ք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք: Դրե՛ք «՞» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք:

2. Գրե՛ք իմացած բոլոր հարցերի պատասխանները «պատասխան» սյունակում:

3. Մեկ անգամ ևս ընթերցեք այն հարցերի պատասխանները, որոնց վրա դրել եք « ՞ » նշանը:

4. Ստուգե՛ք՝ արդյոք ճիշտ եք պատասխանել այն հարցերին, որոնց դիմաց աստղանիշ էիք դրել:

10. Ինձնից առաջ հարցրու երեք հոգու

Այս հնարի իմաստն այն է, որ աշակերտները սովորեն նաև միմյանցից: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին հարցերով դիմել իրենց դասընկերներին և իրեն դիմել միայն այն բանից հետո, երբ երեք աշակերտների դիմելուց հետո չեն ստացել հարցի պատասխանը:

11. Դասի զեկուցող

Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին:

12. Ես-Դու-Մենք

Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում: Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը:

13. Լուսակիր

Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեսում իրենց տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում: Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ինչ չափով են տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները: Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը: Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին: Յուրաքանչյուր աշակերտ բարձրացնում է իր մոտ գտնվող կանաչ, դեղին, կարմիր թղթերից որևէ մեկը: Եթե աշակերտը բարձրացնում է կանաչ թերթիկը, նշանակում է ամբողջությամբ յուրացրել է տվյալ թեման: Եթե բարձրացնում է դեղին թերթիկը, նշանակում է մասնակի է յուրացրել թեման: Իսկ կարմիր թերթիկ բարձրացնում են այն աշակերտները, ովքեր չեն յուրացրել թեման: Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային: Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին:

14. Կիսատ նախադասություն

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել:

15. «Խաթարված հերթականություն»

Այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողու-

թյունների զարգացմանը. պետք է նախօրոք պատրաստել թղթեր, վրան գրել տեքստից ընտրված կարևոր անունները, փաստերը, իրադարձությունները: Դրանք խառը հերթականությամբ փակցնել գրատախտակին, հետո խնդրել, որ այն դասավորեն հերթականությամբ:

16. Միավորային գնահատման իրականացում Quizizz առցանց գործիքի միջոցով

Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման մուտքի կոդը: Սովորողները հարցադրումներին հետևում և պատասխանները՝ նշում են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ: Հարցման ավարտին հնարավոր է MS Excel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները: Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սովորողների կատարած առաջադրանքների և՛ արագությունը, և՛ ճշտությունը: Վարժություններ ստեղծելիս հնարավոր է բազմակի ընտրանք ձևաչափով հարցադրումներ կազմել: Հարցերի հաջորդականությունը խառնվում է համակարգի միջոցով:

Quizizz առցանց գործիքը հնարավորություն է տալիս իրականացնելու հետևյալ աշխատանքները.

- միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ,
- պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց, • առցանց հետևել սովորողների առաջադիմությանը,
- հղմամբ տարածել պատրաստի վարժությունները,

- յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ,
- հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը: Quizizz առցանց տիրույթ մուտք գործելու, գրանցվելու և աշխատելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը. ցանկացած զննարկիչում գրել quizizz.com հասցեն և մուտք գործել:

Հավելված 4

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ՝ ԴԱՍԵՐԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նախագծերի մեթոդ

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված լավագույն մեթոդը նախագծերի իրականացումն է: Այս ընթացքում սովորողների մոտ ձևավորվում է խնդիրներ առանձնացնելու, վարկածներ առաջադրելու, կանխատեսման, պլանավորման, սովորել սովորելու, կարծիք և դիրքորոշում հայտնելու հմտություններ, տեսական գիտելիքը գործնականում կիրառելու կարողություններ: Նախագծերը խմբային աշխատանքների միջոցով իրականացնելու ժամանակ սովորողների մոտ ձևավորվում և զարգանում է ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային և համագործակցային աշխատանքի հմտություն, որոշումների կայացման մասնակցային մշակույթ:

Տարրական դասարաններում իրականացնում ենք պարզագույն նախագծեր, որոնք իրականացնելու համար

բարդ գիտելիքներ և գործողություններ չեն պահանջվում: Օրինակ, այդպիսիք կարող են լինել տարբեր չափումներ իրականացնելը, դերային խաղերով տարբեր իրավիճակներում կոնկրետ վարքագիծ դրսևորելը, պարզագույն գիտափորձեր իրականացնելը և այլն:

Այս տարիքային խմբում իրականացվող ցանկացած նախագծի հաջողությունը կախված է ուսուցչի պատրաստվածությունից և մասնակցության աստիճանից: Նախագծի ողջ ընթացքում ուսուցիչը պետք է լինի երեխաների կողքին, օգնի, աջակցի և ուղղորդի նրանց: Պետք է առաջնորդվել հայտնի ալգորիթմով՝ «սկզբում դիտում եմ, թե ինչպես են անում, հետո անում եմ ուրիշի օգնությամբ, հետո անում եմ միայնակ»: Այս ամենի հետ չենք մոռանում աշակերտակենտրոն մոտեցման մասին:

Տարրական դասարաններում նախագծի իրականացումը սովորողներին թույլ է տալիս ինքնադրսևորվել, պասիվ լսողից դառնալ իր ուսումնառության ակտիվ մասնակիցը:

Այս մեթոդը կարելի է կիրառել, օրինակ, «Ես մենակ չեմ», «Քաղաք և գյուղ», «Կենդանի և անկենդան բնության կապը», «Ապրելու պայմաններ» թեմաները ուսուցանելիս:

Խաղայնացում / Խաղաֆիկացում

Խաղաֆիկացումը խաղային տարրերի ներմուծումն է ուսումնառության բուն գործընթացում: Տարրական դասարաններում դա կարող է դրսևորվել գույնզգույն թերթիկների, փազլների, դոմինոյի, լոտոյի, էլեկտրոնային տարբեր գործիքների կիրառմամբ (օրինակ՝ wordwall, kahoot, quizzes և այլ), մրցույթների, բեմականացումների և այլ ձևերով:

Շատ խաղերում որևէ խնդիր լուծելու պարգևի մի մասը մի փոքր ավելի բարդ խնդրի առաջադրումն է: Խա-

ղի ենթանպատակները, որոնք հաճախ անվանվում են առաքելություններ կամ մակարդակներ, կառուցված են այնպես, որ խաղացողին ներկայացնեն աստիճանական մարտահրավերներ: Դրանք հստակ սահմանված և հատվածավորված են, և շատ դեպքերում տրամադրում են առանձին պարգևներ: Եթե առաջադրանքը չափազանց հեշտ է, սովորողները ձանձրանում են, իսկ եթե չափազանց բարդ է, ընկճվում են: Կարճաժակետ կտրվածքում, կատարված առաջադրանքը մի փոքր ավելի բարդ առաջադրանքով փոխարինելը օգնում է օպտիմալ ոգևորվածություն ապահովել սովորողների մոտ, քանի որ նրանց հմտություններն ընդլայնվում են: Այս մեթոդը թույլ է տալիս բարդության շերտերը կուտակելով ավելացնել՝ այդ կերպ առանձնացնելով յուրաքանչյուր շերտը և դյուրացնելով ընկալումը: Երկարաժամկետ կտրվածքում, հստակ սահմանված աստիճանական ենթանպատակները սովորողներին պահում են կենտրոնացած և մոտիվացված: Դրանք խոստանում են նաև անհապաղ և առարկայական պարգևներ:

Խաղերը ստեղծվում են այնպես, որ արձագանքող լինեն: Խաղի ընթացքում խաղացողի ընտրության կամ գործողության հետևանքները կա՛մ ակնհայտ են որոշում կայացնելու պահին, կա՛մ տրվում են նրանց գրեթե անմիջապես:

Խաղային տարրերով ուսումնառությունը չի հոգնեցնում երեխաներին, հետաքրքրացնում է ուսուցման գործընթացը:

Ուսուցողական խաղեր

Խաղերն արդեն քանի հազարամյակ է, ինչ մարդկային քաղաքակրթության ամենակարևոր բաղադրիչն են: Կրթության մեջ երկու հասկացություն կա՝ ուսուցման խաղայնացում և ուսուցանող խաղեր: Խաղայնացումն այն է, երբ դուք վերցնում եք խաղային մեխանիկա և մակերեսորեն կիրառում առկա գործողություններում (կրթական

կամ այլ): Ուսուցողական խաղերը լիարժեք խաղեր են, որոնց մեխանիկան խորապես ինտեգրված է ուսուցման նպատակներին: Խաղին որոշակիացում է հաղորդում նպատակը, կանոնները, հետադարձ կապի համակարգը և կամավոր մասնակցությունը: Մնացած ամեն ինչ այս հիմնական տարրերն ամրապնդելու և ուժեղացնելու փորձ է: Գրավիչ սյուժեն նպատակն ավելի գայթակղիչ է դարձնում: Գնահատման բարդ ցուցանիշները մեծացնում են հետադարձ կապի համակարգի մոտիվացիան: Ձեռքբերումներն ու մակարդակները ընդլայնում են լավ արդյունքի հեռանկարները: Մի քանի խաղացողներով, ինչպես նաև մասսայական խաղերը ստեղծում են այնպիսի տպավորությունները, որոնք երկարաժամկետ խաղն ավելի անկանխատեսելի և զվարճալի են դարձնում:

Նպատակը խաղի որոշակի արդյունքն է, որին ձգտում են խաղացողները: Այն ուղղորդում է խաղացողի ուշադրությունը և համակարգում նրա գործողությունները, որի արդյունքում մասնակիցների մոտ առաջանում է նպատակի զգացում: **Կանոնները** սահմանափակումներ են դնում նպատակին հասնելու միջոցների վրա, ինչն էլ խրախուսում է խաղացողներին ուսումնասիրել հնարավորությունների անհայտ սահմանները: Կանոնները մեծացնում են ստեղծագործականությունը և խթանում ռազմավարական մտածողությունը: **Հետադարձ կապի համակարգը** խաղացողներին հուշում է, թե որքան մոտ են նպատակին հասնելուն: Այն կարող է ներկայացվել խաղի միավորի, մակարդակի, հաշվի կամ առաջընթացի ցուցանիշի տեսքով կամ խաղացողին հանգեցնել նպատակային արդյունքի ըմբռնմանը. «Խաղը կավարտվի, երբ ...»: Սա խաղացողներին վստահեցնում է, որ նպատակը իրագործելի է և նրանց դրդում է շարունակել խաղը: **Կամավոր մասնակցությունը** նպատակի, կանոնների և հետադարձ կապի համակարգի գիտակցաբար և ինքնուրույն ընդունումն է: Ընդհանուր հիմք է ստեղծում մեծ թվով մարդկանց միասին խաղալու համար: Իսկ խաղի մեջ մտնելու կամ դուրս գալու իրավունքը երաշխավորում է, որ լարված և բարդ աշխատանքը ընկալվի որպես *անվտանգ և հաճելի:*

Դերային խաղեր

Դերային խաղի գաղափարն այն է, երբ ինչ-որ մեկին խնդրում են ներկայացնել իրեն որպես այլ անձի կամ ինքն իրեն՝ որոշակի իրավիճակում: Այնուհետև խաղացողներին խնդրում են վարվել այնպես, ինչպես նրանք ակնկալում էին այդ մարդուց: Արդյունքում՝ նրանք ինչ-որ բան են իմանում այդ անձի և/կամ իրավիճակի մասին: Հիմնականում յուրաքանչյուր խաղացող հանդես է գալիս որպես մյուսների սոցիալական միջավայրի մի մաս և ցուցադրում է մի կաղապար, որի շրջանակներում նրանք կարող են ստուգել իրենց վարքագծի խաղացանկը կամ ուսումնասիրել խմբի փոխկապակցված վարքը: Իրավիճակները կարող են լինել պարզ կամ բարդ, ծանոթ կամ անծանոթ: Դրանք կարելի է մանրամասն նկարագրել կամ թողնել խաղացողի երևակայությանը: Գործողությունը կարող է անցկացվել ամբողջ ծավալով և օրեր շարունակ: Այն կարող է ներկայացվել նաև որպես առանձին հատված և տևել մի քանի րոպե: Ընդ որում՝ ուսուցումը, որին նպատակաուղղված է խաղը, կարող է լինել ուղղակի կամ միջնորդավորված. այն կարող է կապված լինել կա՛մ գործողությանը մասնակցելու, կա՛մ դրա դիտարկման հետ: Ուսուցման վերջնական նպատակը կարող է լինել հմտության կամ կարողության զարգացումը, կամ էլ դա կարող է կրել տվյալ հարցի վերաբերյալ ընդհանուր առմամբ ավելի զգայուն դառնալու կամ վերաբերմունքը փոխող բնույթ: Հետևաբար, դերախաղի ավարտին գուցե բավարար լինի հավաստիանալ, որ պարապմունքը տրամաբանական ավարտին է հասցվել: Մյուս կողմից, հնարավոր է պարզվի, որ ուսուցիչը պետք է ժամանակ հատկացնի և խմբին բացատրի տեղի ունեցածը, կամ գուցե անհրաժեշտ լինի կրկնել խաղը՝ մոդիֆիկացվող որոշակի վարքի վարժվելու համար:

Այս մեթոդը կարելի է կիրառել, օրինակ, «Կոնֆլիկտ», «Մասնագիտություններ» թեմաները ուսուցանելիս:

ՄՏԱԾԵԼ | ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ | ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Այս մեթոդն ունի երեք քայլ: Նախ՝ աշակերտներն անհատապես մտածում են որոշակի հարցի մասին, այնուհետև նրանք զույգ են կազմում՝ քննարկելու և համեմատելու իրենց գաղափարները: Վերջապես, նրանց հնարավորություն է ընձեռվում իրենց գաղափարները կիսելու դասարանի հետ՝ որպես մեծ խումբ: Նպատակն է խթանել գաղափարների ձևավորումը, բարձրացնել աշակերտների վստահությունն իրենց իսկ գաղափարների նկատմամբ, զարգացնել մեծ խմբի մոտ հանրային խոսքի/ելույթի հմտություններ:

ՁԱՅՆԵՐԻ ՇՐՋԱՆ

Այս մեթոդի նպատակն է խթանել հանրային խոսքի և միմյանց լսելու ունակությունն աշակերտների շրջանում: Աշակերտները կազմում են չորս կամ հինգ հոգուց բաղկացած շրջաններ: Աշակերտներին հանձնարարե՛ք ինչ-որ թեմա և մի քանի րոպե թույլ տվեք ի մի բերեն իրենց մտքերը: Այնուհետև ազդարարեք քննարկման սկիզբը. յուրաքանչյուր աշակերտ պետք է ունենա մինչև երեք րոպե խոսելու հնարավորություն: Այս ընթացքում ոչ ոք իրավունք չունի որևէ բան ասել և խանգարել: Երբ բոլորը մեկ անգամ խոսեն ծավալե՛ք ենթախմբային քննարկում: Նշե՛ք, որ աշակերտներն իրենց քննարկումը պետք է ծավալեն այլոց կողմից սահմանված գաղափարների վերաբերյալ: Այս մեթոդի նպատակն է ձևավորել նոր գաղափարներ, զարգացնել լսողության հմտություններ և ստեղծել բոլոր աշակերտների համար հավասար մասնակցության հնարավորություն և համագործակցային միջավայր:

ԱՎՏՈԲՈՒՍԻ ԿԱՆԳԱՌ (ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԴՈՒԵՏ)

Այս մեթոդի նպատակն է զարգացնել առաջադրանքի արդյունավետ մշակման և արդյունքների համալիր համեմատության հմտություն աշակերտների մոտ: Ուղղորդե՛ք աշակերտներին, որ նյութն առանձին մշակելուց հետո 72 մոտենան դասասենյակում գտնվող կանգառներին, որտեղ սպասում են այլ աշակերտներ: Այնուհետև խրախուսե՛ք աշակերտներին միասին քննարկել և համեմատել իրենց լուծումները: Այս մեթոդը հատկապես կիրառելի է տարասեռ դասարանների համար, որոնցում կան տարբեր արագությամբ աշխատող աշակերտներ:

ՁՆԱԳՆԴԻ ԽՄԲԵՐ | ԲՈՒՐԳԵՐ

Այս մեթոդի շնորհիվ հնարավորություն է տրվում մեծ թվով աշակերտների ակտիվորեն, համակարգված և արդյունավետ մասնակցել խմբային աշխատանքների և ներկայացնել իրենց կարծիքը: Աշակերտները նախ աշխատում են միայնակ, ապա զույգերով, ապա չորսով և այլն: Շատ դեպքերում, չորսով աշխատելուց հետո, աշակերտները նախաձեռնում են լիագումար քննարկում, որի ընթացքում իրենց եզրակացությունները կամ լուծումները համատեղվում և ամփոփվում են: Խմբի մեծացմանը զուգընթաց առաջ քաշեք ավելի ու ավելի բարդ առաջադրանքներ և հարցադրումներ, որպեսզի աշակերտները չձանձրանան կրկնվող հարցադրումներից և առաջադրանքներից: Օրինակ՝ աշակերտներին առաջարկեք առաջ քաշել մի քանի հարցեր, որոնք վերաբերում են դասի թեմային: Նախ՝ զույգերով աշակետները փորձում են պատասխանել առաջ քաշված հարցերին, այնուհետև զույգերը միանում են՝ կազմելով չորսնյակներ և շարունակում են իրենց քննարկումները՝ հարստացնելով կամ լրացնելով առկա պատասխանները և գաղափարները: Վերջում իրականացվում է արդյունքների ամփոփում և ներկայացում. յուրաքանչյուր խմբից մեկ

ներկայացուցիչ ներկայացնում է այդ խմբի քննարկման արդյունքները և եզրակացությունները: Այս մեթոդի նպատակն է առաջ քաշել նոր գաղափարներ, նեղացնել թեման, զարգացնել որոշումներ կայացնելու հմտություններն աշակերտների շրջանում:

ԽՄԲԱՅԻՆ ՓԱԶԼ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ)

Այս մեթոդը նախատեսում է, որ աշակերտները մասնագիտական խորը գիտելիքներ ձեռք բերեն թեմային առնչվող որևիցե բաղադրիչի վերաբերյալ, այնուհետև կիսեն իրենց փորձը դասընկերների հետ՝ հավասարը հավասարի ուսուցման միջոցով: Թեման բաժանե՛ք մի քանի բաղադրիչների և ձևավորե՛ք 3-5 ենթախմբեր, յուրաքանչյուր ենթախմբին տրամադրե՛ք թեմայի տարբեր բաղադրիչները (կտորներ): Յուրաքանչյուր ենթախմբի խնդիրն է զարգացնել փորձագիտական գիտելիք իր առանձնահատուկ բաղադրիչի վերաբերյալ՝ ուղեղային գրոհի, գաղափարների մշակման և, եթե ժամանակը թույլ է տալիս, հետազոտական աշխատանքի միջոցով: Երբ աշակերտները ձեռք բերեն իրենց բաղադրիչի առնչությամբ մասնագիտական գիտելիքներ, փոխե՛ք խմբերը, որպեսզի նոր խմբի յուրաքանչյուր անդամ ձեռք բերի այլ ոլորտներին առնչվող փորձագիտական գիտելիքներ: Այնուհետև աշակերտները հերթով փոխանցում են իրենց փորձը/գիտելիքը խմբի մյուս անդամներին՝ դրանով իսկ վերջնական տեսքի բերելով հիմնական թեմայի վերաբերյալ գիտելիքների ներկապնակը:

ՁԿՆՈՐՍ | ԱԿՎԱՐԻՈՒՄ

Այս մեթոդն աշակերտների մոտ զարգացնում է համապարփակ դիտարկման և վերջինիս արդյունքների վերլուծության և հետադարձ կապի ապահովման հմտու-

թյուններ և կարողություններ: Բաժանե՛ք դասարանը երկու խմբի: Առաջին խումբն իրականացնում է երկրորդ խմբի կողմից կատարվող աշխատանքների ակտիվ դիտարկում: Առաջին խումբը կազմում է շրջանակ և քննարկում է որևէ հարց/թեմա կամ կատարում է դերախաղ ներկայացման տեսքով: Երկրորդ խումբն առաջին խմբի շուրջ շրջան է կազմում, և արդյունքում ստացվում է երկու շրջան՝ արտաքին և ներքին: Կախված ներքին (առաջին) խմբին Ձեր կողմից տրված առաջադրանքից, արտաքին (երկրորդ) խումբը կարող է հավելյալ հարցադրումներ անել ներքին խմբին կամ առաջադրանքներ տալ և իրականացնել ակտիվ դիտարկում՝ ինչպես ներքին խմբի մասնակիցների վարքի, այնպես էլ տրվող պատասխանների հետ կապված: Կարևոր է, որ վերջում իրականացնեք երկու խմբերի հետ քննարկում, վերլուծություն և կարծիքների փոխանակում՝ ներկայացնելով ակտիվ դիտարկման արդյունքները: Այս մեթոդի նպատակն է զարգացնել խմբային համագործակցությունը, փոխազդեցությունը, գաղափարների փոխանակման, վերլուծության և հետադարձ կապի տրամադրման հմտություններն աշակերտների շրջանում:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԹԻՄԵՐ

Այս մեթոդի շրջանակում աշակերտներին ուսումնական տարվա սկզբից բաժանում եք խմբերի: Երբ ցանկանում եք կազմակերպել փոքր խմբային քննարկում կամ թիմային աշխատանք ձեր դասի շրջանակում, աշակերտներին ընդգրկե՛ք արդեն իսկ բաժանված խմբերում: Չորսական անդամ ունեցող խմբերն առավել արդյունավետ են աշխատում, քանի որ յուրաքանչյուր քառյակը կարող է բաժանվել զույգերի՝ կախված գործունեությունից: Այս մեթոդի նպատակն է աշակերտների միջև կայուն համագործակցության և փոխհարաբերությունների խթանում և կրթական գործընթացում մասնակցայնության մակարդակի բարձրացում:

ԼՈՒՌ ԱՐՏԱՅՈԼՈՒՄ

Այս մեթոդի շրջանակում աշակերտներին տալիս եք մի քանի րոպե՝ մտածելու որևէ խնդրի կամ խոչընդոտի մասին: Խնդրե՛ք նրանց գրի առնել իրենց մտքերը և գաղափարները կպչուն թերթիկների վրա: Առաջադրե՛ք կոնկրետ խնդիր կամ մարտահրավեր, օրինակ, խնդրեք նրանց գրել խնդրին առնչվող երեք ամենակարևոր դրական և բացասական կողմերը: Ավելի օգտակար կլինի, եթե նրանք իրենց գրի առած մտքերը փակցնեն գրատախտակի կամ պատի վրա: Այնուհետև խնդրեք նրանց, որ քննարկման փուլ անցնելուց առաջ իրենց գաղափարները կիսեն իրենց համադասարանցիների հետ: Այս մեթոդի միջոցով դուք ակտիվացնում ենք ավելի պասիվ աշակերտներին և ապահովում եք, որ յուրաքանչյուր ոք հետադարձ կապ տրամադրելու հնարավորություն ունենա:

ՓՈՒԼԵՐ

Այս մեթոդն ավելի արդյունավետ է փոքր խմբերով աշխատելու համար: Շրջում եք խմբերով և խրախուսում, որ խմբի յուրաքանչյուր անդամ կիսվի իր կարծիքով առաջ քաշված հարցի վերաբերյալ: Դասավանդողները հաճախ այս մեթոդն օգտագործում են որպես մասնակիցների ծանոթացում կամ որպես դասի լիցքաթափման մաս: Փորձե՛ք խմբային աշխատանքը ճանձրալի չդարձնել՝ պարբերաբար ինչ-որ առաջադրանքներ և ուղղորդումներ տալով աշակերտներին: Փորձե՛ք հնարավորինս կարճ առաջադրանքներ տալ: Օրինակ՝ խուսափեք այնպիսի հարցերից, ինչպիսիք են՝ «Ես ուզում եմ, որ բոլորը նշեն իրենց անունը, ապա մատնանշեն դասընթացի մեկ բաղադրիչ, որի մասին նրանք ոչինչ չգիտեն, բայց ցանկանում են սովորել»: Մեծ խմբերի դեպքում աշակերտները կարող են ճանձրանալ, այնպես որ կարճ հարցերի և պատասխանների դեպքում աշակերտներն ավելի կաշխուժանան, ինչն էլ մեզ անհրաժեշտ է:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՃԱՆԱՊԱՐՀ՝ 3 ՐՈՊԵ

Խնդրեք զույգերով երեք րոպե խոսել ինչ-որ հարցի մասին: Եղե՛ք խիստ ժամանակի պահպանման առումով: Հնարավոր է, որ աշակերտները դժվարանան երեք րոպեի մեջ տեղավորվել, բայց դա հիանալի միջոց է աշակետների համար իրենց գաղափարները հստակ և համակարգված շարադրելու առումով, ինչն իր հերթին նշանակում է, որ ավելի պասիվ աշակերտները հնարավորություն կունենան խոսելու և լսված լինելու: Առանց ընդհատելու ունկնդրելու արվեստը այն հմտությունն է, որ գրեթե բոլոր աշակերտների մոտ պետք է խթանել և զարգացնել: Այս մեթոդը կարելի է օգտագործել այլ խմբային աշխատանքներում:

ՄՏԱԳՐՈՀ

Այս մեթոդը կարող է արժեքավոր լինել ստեղծագործ և ազատ մտածողությունը խթանելու համար, հատկապես օգտակար է խնդրի լուծում փնտրելու կամ բազմազան գաղափարներ առաջ բերելու ժամանակ: Սկսե՛ք «Ինչպե՞ս կարող ենք ...» կամ «Ի՞նչ գիտենք ...» հարցերով և խրախուսե՛ք խմբին արագորեն առաջ քաշել գաղափարներ: Դրանք ինքներդ գրանցե՛ք գրատախտակին: Հստակեցրե՛ք, որ սա հետազոտական գործընթաց է, նախապես սահմանե՛ք որոշ կանոններ, օրինակ՝ ցանկալի է մեծ քանակությամբ գաղափարների սահմանում, ուստի՝ բոլորին պետք է քաջալերվի իրենց ներդրումն ունենալ ցանկացած մակարդակում այն պահին, երբ իրենց հարմարավետ զգան: Արագ և կարճ պատասխաններն այս փուլում ավելի արժեքավոր են, քան երկար, բարդ կազմված նախադասությունները: Գաղափարները պետք է նշել առանց կողմնակի մեկնաբանության և պիտակավորման՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական ձևակերպումներով: Ոչ ոք չպետք է ասի. «դա չի ստացվի, քանի որ ...» կամ «դա լավագույն գաղափարն է, որը մենք

լսել ենք մինչ այդ»: Դա կարող է ստիպել աշակերտների մի մասին ամաչել և զերծ մնալ հետագա մտքերի արտահայտման գործընթացից:

ԱՌԱՆՁՔԱԿԱԼ (ԿՐԿՆԱԿԻ ՇՐՋԱՆ)

Այս մեթոդի նպատակն է գաղափարների, նյութերի, կարծիքների, տնային առաջադրանքների, առանձին աշխատանքի արդյունքների համեմատությունը և ներկայացումը: Աշակերտներին ուղղորդե՛ք ձևավորելու կրկնակի շրջան, որտեղ յուրաքանչյուր աշակերտ նստած կամ կանգնած է մյուս աշակերտի դիմաց: Յուրաքանչյուր աշակերտ ունենում է մի գործընկեր: Նրանց միջև մտքերի փոխանակումից հետո շրջանակը պտտվում է և գործընկերները փոխվում են: Երկու շրջանների միաժամանակյա պտույտը հակառակ ուղղությամբ ավելի արդյունավետ է, քանի որ գործընկերներն ավելի լավ են խառնվում: Հնարավոր է նաև ներկայացնել 2 տարբեր տեքստեր և իր համար անծանոթ տեքստ լսած աշակերտին խնդրել, որ վերջինս այն ներկայացնի տեքստն իմացողին: Այս կերպ աշակերտները հատուկ ուշադրությամբ են լսում, հարցեր ուղղում և անծանոթ տեքստն այնքան լավ են հասկանում, որ հնարավոր է դառնում թե՛ ներկայացումը, թե՛ ընկալումը:

14. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐ

Լրացուցիչ նյութեր՝ դասերին ցուցադրելու համար

1
Ինչպես մաքրել ատամները

2
Առողջ սնունդ

3
Տնջրի

4
Երկրաշարժ

5
Մաքուր միջավայր

6
Բույսեր

7
Բույսերի նշանակությունը

8
Կենդանիներ

9
Բնության պահպանություն

10
Կլիմայի փոփոխություն

11

Կշիռ և զանգված

12

Գիտունիկի հանրագիտարան

13

Արցախի տնջրի ծառի առեղծվածը

14

Կշիռ և զանգ-ված, ուժեր, այլ գործնական աշխատանքներ

Լրացուցիչ նյութեր՝ ուսուցչի ինքնակրթության և ինքնազարգացման համար

1. Թադևոսյան Մ., Խաչատրյան Ս., Սողոմոնյան Վ., Հովհաննիսյան Գ. և ուրիշներ, «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», Մասնակցային դպրոց աշխ. խումբ, Երևան, 2020թ., 96 էջ:
2. Խաչատրյան Ս., «Ուսուցման արդյունավետ հնարներ», Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:
3. Կրթական քաղաքացիական նախաձեռնություն: Սկզբունքներ, Ռեսուրսներ, Գործիքներ: Երևան, 2019:
4. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Պետրոսյան Մ., «Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսություն և պրակտիկան», Երևանի հանրապետական հոգեբանական կենտրոն, Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան հիմնադրամ, Երևան, 2004թ.:

5. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս., «Մանկավարժություն», ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար: «Մանկավարժ» հրատ., Երևան 2005 թ., 456 էջ:

6. Աստվածատրյան Մ.Գ. և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Այռեքս, Երևան, 2007թ., 336 էջ:

7. Դիշաղաջյան Ն., Սարուխանյան Ս., Իսկանդարյան Ա., «Ուսուցանող գնահատում», Վանաձոր 2019 թ., 132 էջ:

8. Կարապետյան Ա., Գասպարյան Ա., Կարապետյան Ա. «Կենսաբանություն. Ընթացիկ գնահատման մեթոդաբանություն», Երևան «Անտարես», 2009թ.

9. Սահակյան Ա., «Սովորողների ինքնուրույն-գործնական աշխատանքներ», Վանաձոր, ՍԻՄ տպագրատուն, 2010թ., 60 էջ:

10. Հայրապետյան Ս., Նազարյան Կ., Տոնոյան Զ., «Սոցիալական հավասարությունը և արդարությունը դպրոցում», Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ Հայաստան, Երևան 2020 թ., 102 էջ:

11. Հովհաննիսյան Ա., Կ. Հարությունյան և ուրիշներ «Համագործակցային ուսուցում» ձեռնարկ, Երևան, Անտարես 2006թ.:

12. Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ս.Օ., «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան», Ուսուցչի ձեռնարկ, ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, Երևան 2010թ., 80 էջ:

13. Bates, A.W. (2015) Teaching in a Digital Age: Guidelines for Designing Teaching and Learning, Vancouver

14. BC: Tony Bates Associates Ltd.

15. Drafke, M., Schoenbachler, D. & Gordon, G. (1996). Active and Passive Teaching Methodologies: Student

16. Outcomes Over a Semester Course," Marketing Education Review, Vol. 6 (1), 1996, pp. 9-17.

17. Harvard, J. (2018, March 16). The Myths of Passive Learning. The Effortful Educator.

18. Boaler, J. (2019). Limitless Mind: Learn, Lead and Live Without Barriers, HarperCollins UK, 2019, pp. 256

19. Bonwell, Charles C.; Sutherland, Tracey E. (1996) The Active Learning Continuum: Choosing Activities to Engage Students in the Classroom. New Directions for Teaching and Learning, n67 էջ 3-16

20. Shirley Clarke. Unlocking Fomative Assessment. Hodder & Stoughton, 2006.

21. Reference Framework of Competences for Democratic Culture – Volume 3 (ISBN 978-92-871-8575-4).

22. Мудрик А. В., Социальная педагогика: Учеб. для студ. пед. вузов / Под ред. В.А. Сластенина. - 3-е изд., испр. и доп. - М.: Издательский центр «Академия», 2000. - 200 с

23. Панфилова А. П., Инновационные педагогические технологии: Активное обучение: учеб. пособие для студ. высш. учеб. заведений/А.П.Панфилова. — М.: Издательский центр «Академия», 2009. - 192 с.

24. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760 - ՀՊՀ

25. https://greenyerevan.am/%d5%bd%d5%b8%d5%bd%d5%ab/-արևելյան սոսի, տնջրի

26. https://www.stiftung-kinder-forschen.de/fileadmin/Redaktion/1_Forschen/Themen-Broschueren/Broschuere-Technik-KuW_2015_akt.pdf -տեխնիկական կրթությունը / գերմ./ , ուժ և շարժում

27. https://www.youtube.com/watch?v=TfZsGy_q9zA -փուչիկից հրթիռ

28. https://www.time4learning.com/homeschool-curriculum/elementary-school/social-studies.html#ss-2nd –սոցիալական կրթությունը տարրական դասարաններում / անգլ./

29. https://www.time4learning.com/homeschool-curriculum/elementary-school/second-grade/social-studies.html -սոցիալական կրթությունը տարրական դասարաններում/ անգլ./

30. http://surl.li/hgdvj - կյանքի ցանց

31. http://elib.gnpbu.ru/- գիտամանակավարժական էլեկտրոնային գրադարան

32. https://theeffortfuleducator.com/2018/03/16/the-myth-of-passive-learning միֆ պասիվ ուսուցման ամսին / անգլ./

33. https://www.youtube.com/watch?v=hdt4qwWv0Oc

-կշիռ և զանգված

34. https://lib.armedu.am/files/resource/files/2022-04-21/67ceb674e5ad5badaefc4508eefca903.pdf -ուժեր և շարժում

35. http://surl.li/hgdwe -Բնագիտական փորձերի փաթեթ

36. https://fliphtml5.com/homepage/fumf / հանրակրթական դպրոցներում օգտագործվող դասագրքերի և ձեռնարկների էլեկտրոնային տարբերակներ/

37. https://kznakhimnadram.blogspot.com/ -ԿԶՆԱԿ հիմնադրամ

38. https://www.ktak.am/ - ԿՏԱԿ

39. https://armedu.am/ - Հայկական կրթական միջավայր

40. http://escs.am/am/news/6718 - ԿԳՄՍ նախարարություն

41. ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՇՐՋԱՆԱԿ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ՝

ՄԱՍ 1՝ https://rm.coe.int/prems-000821-arm-2510.../1680a1b757

ՄԱՍ 2՝ https://rm.coe.int/arm-reference-framework-vol-2/1680a1bc83

ՄԱՍ 3՝ https://rm.coe.int/arm-reference-framework-vol-3/1680a1b758

ISBN 978-9939-1-1727-0

9 789939 117270